

ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Նվիրվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում
Մխիթարյան միաբանության հաստատման
300-ամյա հոբելյանին

ԵՐԵՎԱՆ – 2017

ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի «Հոդվածների ժողովածուն» տպագրվում է բանասիրական ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ:

Խմբագիր՝ ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ, ԴՈՑԵՆՏ

Խ.Արուսյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի «Հոդվածների ժողովածուն» նվիրված է Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատվելու 300-ամյա հոբելյանին:

Ժողովածուն ուղղված է գրականագետներին, մանկավարժներին, բանասիրական ֆակուլտետի ուսանողությանը:

ՆԱԽԱԲԱՆ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնն իր հոդվածների հերթական ժողովածուն նվիրում է Վենետիկի Մխիթարյան միաբանության Սուրբ Ղազար կղզում հաստատվելու 300-ամյա հոբելյանին:

Մխիթար Սեբաստացու գերմարդկային ջանքերով ու աստվածատուր հանճարով Վենետիկի Սուրբ Ղազար կղզին դարձավ լուսավորության փարոս, որն իր ճառագայթները հասցրեց աշխարհի բոլոր այն վայրերը, ուր հայեր էին ապրում: Բոլորովին պատահական չէ, որ 1810 թվականին Նապոլեոն Բոնապարտը Մխիթարյան միաբանությանն արտոնեց ակադեմիա կոչվելու իրավունքը: Սուրբ Ղազար կղզին դարձավ հայերի լուսավորության կենտրոն, իսկ նրա հիմնադիր Մխիթար Սեբաստացին հայ ժողովրդից ստացավ Լուսավորիչ պատվանունը, որը տվել է միայն Գրիգոր Լուսավորչին, Մեսրոպ Մաշտոցին և Խաչատուր Աբովյանին:

Վենետիկի Մխիթարյան միաբանության, նրա հիմնադրի և նրա գործը շարունակած աշակերտների մասին գրվել են բազմաթիվ գրքեր, հետազոտություններ ոչ միայն հայերի, այլև օտարազգի նշանավոր գիտնականների հեղինակությամբ: Բավական է հիշել, թե ինչ ջերմությամբ է Վիկտոր Լանգլուան խոսում Մխիթարյանների միաբանության մասին` շեշտելով վերջինիս անդամների գիտական բարձր

մակարդակը, կարգապահությունը և կղզու խնամվածության գեղագիտական ներգործող հմայքը:

Վենետիկի Միսիթարյան միաբանները տիրապետում էին բազմաթիվ հին ու նոր լեզուների, կատարում հին աշխարհի իմաստուն մտածողների գործերի թարգմանություններ, կազմում բազմալեզու և բազմատիպ բառարաններ, հրատարակում հայ միջնադարի մատենագիրների գործերը, ստեղծում հայ ժողովրդի գիտական պատմությունն ու աշխարհագրությունը, պատրաստում բազմագիտակ ու հմուտ մանկավարժներ:

Այս ժողովածուն անդրադարձ ունի Միսիթարյաններին վերաբերող մի քանի գիտական ու մանկավարժական խնդիրների, որոնք ներկայացվում են նոր դիտակետից:

Հայ հին և միջնադարյան գրականությունը ներկայացնող ամբիոնը անսպառ գիտական պաշար է կուտակում Միսիթարյանների թողած գիտական հարուստ ժառանգությունից և դրա առհավատյան այս համեստ ժողովածուն է, որը խորին երախտագիտության տուրք է՝ ուղղված Վենետիկի Սուրբ Ղազար կղզու միաբանությանը և նրա հիմնադրին՝ Միսիթար Սեբաստացուն ու նրա երանելի աշակերտներին:

Պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյան

ПРЕДИСЛОВИЕ

Кафедра древней и средневековой армянской литературы и методики её преподавания Армянского Государственного Педагогического Университета им. Х. Абовяна посвящает свой очередной сборник статей 300-летнему юбилею обоснования Конгрегации Мхитаристов на острове Святого Лазаря Венеции.

Благодаря сверхчеловеческим усилиям и богоданному гению Мхитара Себастиа острова Святого Лазаря Венеции стал очагом просвещения, лучи которого достигли всех тех мест, где жили армяне. Совсем не случайно, что в 1810 году Наполеон Бонапарт пожаловал Конгрегации Мхитаристов право называться академией. Остров Святого Лазаря стал центром просвещения армян, а его основатель Мхитар Себастиа получил от армянского народа почётное звание Просветителя, которым звали только Григория Просветителя, Месропа Маштоца и Хачатура Абовяна.

О Конгрегации Мхитаристов Венеции, её основателе и об учениках, продолживших его дело, были написаны многочисленные книги и исследования не только армянскими, но и иностранными знаменитыми учеными. Достаточно вспомнить

с какой теплотой говорит Виктор Ланглуа о Конгрегации Мхитаристов, подчёркивая высокий научный уровень её членов, царящую дисциплину и эстетическое впечатление от великолепного ухода за островом.

Члены Конгрегации Мхитаристов Венеции владели многочисленными старыми и новыми языками, делали переводы трудов мудрых мыслителей древнего мира, составляли многоязычные и многотипные словари, публиковали труды армянских средневековых авторов, составляли научную историю и географию армянского народа, готовили знающих и искусных педагогов.

Этот сборник обращается к некоторым научным и педагогическим вопросам, касающимся Мхитаристов, которые представлены с новой точки зрения.

Кафедра, представляющая армянскую древнюю и средневековую литературу, собирает неиссякаемый научный запас богатого научного наследия, оставленного Мхитаристами, а этот скромный сборник является его залогом и данью глубокой признательности Конгрегации Мхитаристов острова Святого Лазаря Венеции, её основателю Мхитару Себастиани и его блаженным ученикам.

Профессор **Аэлита Долуханян**

FOREWORD

The Department of Armenian ancient and medieval literature and the methods of its teaching at the Armenian State Pedagogical University after K. Abovyan is devoting its next miscellany of articles to the 300th anniversary of the Mkhitarist Congregation installation on the St.-Lazarus Island of Venice.

Thanks to the superhuman efforts and to the God-given genius of Mkhitar Sebastatsi the St.-Lazarus island of Venice became a centre of enlightenment which rays reached all the places where Armenians were living. It is not fortuitous that in 1810 Napoleon Bonaparte granted to the Mkhitarist Congregation the right to be called academy. The St.-Lazarus Island became a centre of enlightenment for Armenians and its founder Mkhitar Sebastatsi got from the Armenian people the honorific title of Illuminator which was given before only to Gregory the Illuminator, Mesrop Mashtots and Khachatur Abovyan.

Numerous books and studies have been written not only by Armenian, but also by foreign famous scholars about the Mkhitarist Congregation of Venice, its founder and the disciples who continued his work. It suffices to remember how warmly Victor Langlois speaks about the Mkhitarist Congregation,

accentuating the high scientific level of its members, the exemplary discipline reigning there and the esthetical impression left by the wonderful care taken of the island.

The members of the Mkhitarist Congregation of Venice mastered many old and modern languages, they made translations from the works of wise thinkers of the ancient world, they composed multilingual and multi-type dictionaries, published works by Armenian medieval authors, wrote the scientific history and geography of the Armenian people and prepared skilful pedagogues.

This miscellany turns to some scientific and pedagogical issues concerning the Mkhitarists and presents them from a new viewpoint.

The Department presenting Armenian ancient and medieval literature gathers an inexhaustible scientific reserve of the rich scientific legacy left by the Mkhitarists and this modest miscellany is its pledge and a homage of deep gratitude to the Mkhitarist Congregation of the St.-Lazarus Island of Venice, to its founder Mekhitar Sebastatsi and his blissful disciples.

Professor **Aelita Dolukhanyan**



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳԼՈՒԱՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ֆրանսիական հայագիտության պանծալի անուններից է Վիկտոր Լանգլուան (1829-1869), որը, չնայած իր կարճատև կյանքին, թողել է հարուստ հայագիտական ժառանգություն: ¹ 1852-1853թթ. ամբողջ մի տարի նա Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Երրորդի հանձնարարությամբ և նյութական աջակցությամբ ուղևորվել է Կիլիկիա և Փոքր Հայք ու մանրամասն ուսումնասիրել այդ վայրերի հայկական հուշարձանները, վանքերի գրադարանները և

¹ Դոլուխանյան Ա., Երևան, 2003:

Փարիզ վերադարձել նյութական ու գիտական փաստերի հարուստ պաշարով:² Վիկտոր Լանգլուան 1867 և 1869թթ. հրատարակել է հայ պատմիչների ժողովածուի երկու սովար հատորները ³ , աշխատություններ նվիրել հայկական դրամներին ու Կիլիկիայի հայոց թագավորների հրովարտակներին: Նա մեծ սեր է ցուցաբերել հայ ժողովրդի և մշակույթի նկատմամբ ու Նապոլեոն Երրորդին ահագանգել է հայկական մեծարժեք պատմական հուշարձանների նկատմամբ թուրքական վանդալիզմի դրսևորումների մասին: Վ.Լանգլուան իրականացրել է մի շարք հայ պատմիչների ֆրանսերեն թարգմանությունները՝ այդ գործի մեջ ներառելով խիստ կարող ուժեր: Օրինակ, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» նրա պատվերով ֆրանսերեն է թարգմանել նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինը՝ կցելով իր թարգմանությանը մեծարժեք առաջաբան: Նրա շնորհիվ ֆրանսերեն են թարգմանվել Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» երկը, Ներսես Մեծի վարքը, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» երկրորդ գիրքը և հայ հին մատենագրության այլ արժեքներ: Վիկտոր Լանգլուային ենք պարտական Գրիգոր Մագիստրոսի 83 թղթերի ֆրանսերեն թարգմա-

² Langlois V., 1854.

³ Langlois V., t. I, 1867, t. II, 1869.

նության համար՝ իհարկե մեծագույն մասը համառոտված տարբերակով:⁴

Նշանավոր հայագետը հատուկ աշխատություն է նվիրել պատմահայր Մովսես Խորենացուն՝ նրա «Հայոց պատմության» մեջ տեսնելով ինքնատիպ վավերականություն, և համոզված է, թե հետագա հայագետները նրան կկոչեն *Մեծ* պատմիչ:⁵

Վիկտոր Լանգլուան թերևս առաջինն էր եվրոպական հայագետների մեջ, որ հատուկ հետազոտություն նվիրեց Վենետիկի Մխիթարյան միաբանության գործունեությանը՝ սկսած սկզբնավորումից մինչև իր օրերը:⁶ Դրանից հետո գրվել են բազմաթիվ աշխատություններ թե՛ հայերի և թե՛ օտարների կողմից:⁷ XX դարի հետազոտությունների մատենագիտությունն առկա է հայ միջնադարի մատենագրության մեծ նվիրյալ հայր Լևոն Զեքիյանի «Վենետիկ եւ հայերը» աշխատության մեջ:⁸

Վիկտոր Լանգլուան այցելել է Վենետիկի Մխիթարյան միաբանություն, որի ակադեմիայի անդամ էր: Նա միաժամանակ եղել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի պատվավոր

⁴ Langlois V., 1869.

⁵ Դոլուխանյան Ա., Երևան, 2003, 114:

⁶ Langlois V., 1869.

⁷ Հերմետ Ալեքամո, Երևան, 2000:

⁸ Զեքիյան Լ., Վենետիկ, 1990, 144-150:

անդամ, Թուրինի գիտությունների ակադեմիայի անդամ և ստացել է Ֆրանսիայի թագավորական Ասպետի շքանշան:

Լանգլուայի՝ Վենետիկի Մխիթարյան միաբանությանը ձոնված աշխատությունը լույս է ընծայվել հայագետի մահվանից անմիջապես հետո: Աշխատությունը յուրօրինակ երախտագիտության տուրք էր հայ միաբաններից՝ ուղղված հայ ժողովրդին այդքան նվիրված գիտնականի հիշատակին: Աշխատության վերջում հրատարակիչներն իրենց խորին ցավն են հայտնում առաջնակարգ հնագետի և հայ միջնադարյան գրականության մեծ գիտակի վաղաժամ մահվան առթիվ ու իրենց պարտքն են համարում կցել Վ.Լանգլուայի հայագիտական աշխատությունների համառոտ ցանկը:

Վ.Լանգլուայի՝ Վենետիկի Մխիթարյան միաբանությանը նվիրված աշխատությունն ունի խոսուն մի բնաբան, որը նա քաղել է Վիկտոր Հյուգոյի «Աշնան տերևներ» ժողովածուից:

Oui, c'est un de ces lieux ou notre cœur sont vivre
Quelque chose des cieux qui flotte et qui l'envire!

V.Hugo, Feuilles d'automne, XXXIV

Այո՛, սա այն վայրերից է, ուր մեր սիրտը կյանքն է զգում,
Վերնականներից ինչ-որ բան, որ ծածանվում է ու արբեցնում:

Վ.Հյուգո, Աշնան տերևներ, XXXIV

Վ.Լանգլուայի աշխատությունը բաժանված է երկու գլուխների միջև: Առաջին գլուխը կոչվում է՝ «Մխիթարյան միաբանության Մխիթարի պատմությունը և Սուրբ Ղազար կղզու նկարագրությունը»: Երկրորդ գլխի խորագիրն է՝ «Հայաստանի և հայ գրականության պատմությունը վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը»:

Փաստորեն ֆրանսիացի հայագետը եվրոպական ընթերցողին մատուցում է երկու կարևոր ակնարկ՝

1) Մխիթարի, նրա հիմնած միաբանության համառոտ պատմությունը,

2) Հայաստանի ու նրա գրականության անցած ուղու դարավոր ընթացքը:

Այս գիրքը գրելիս Վ.Լանգլուան կուտակել էր հայերի պատմությանը, մատենագրությանն ու մշակույթին վերաբերող գիտելիքների անսպառ պաշար, քանզի, չնայած երիտասարդ հասակին, ստեղծել էր պատկառելի ու գիտական արժեք ունեցող հայագիտական կարևոր աշխատություններ:

Ովքեր եղել են Վենետիկի Մխիթարյան միաբանությունում, ապա կհամոզվեն, որ տեղանքի և վանական այդ խիստ ինքնատիպ հաստատության նկարագրի մեջ որքան ճշգրտություն կա: Իրականում այն մի դրախտային հոգևոր բեկոր է Ադրիատիկի ծիծաղախիտ ալիքների ծփանքով շրջափակված: Լանգլուան հիացած է Սուրբ Ղազար կղզու

պատճառած գեղագիտական տպավորությամբ: Կղզին մարդկային խնամքոտ ձեռքով մշակված է, ուր ամենուր մարդու աչքը շոյում է բազմատեսակ ու բազմագույն բուսականությունը՝ ծառեր, ծաղիկներ, թփեր: Կղզում տիրում է իդեալական կարգ ու կանոն, մաքրություն, մարդու հոգուն հանգստավետություն պատճառող խաղաղություն: Եվ այդ բոլորի հեղինակը միաբանության հիմնադիր Մխիթար Մեբաստացին է, որի կերպարն առ այսօր և առհավետ մնալու է սրբացված ողջ հայության, նաև զարգացած ու քաղաքակիրթ մարդկության համար:

Վիկտոր Լանգլուան, անշուշտ, ծանոթ էր Միքայել Չամչյանի «Պատմութիւն Հայոցի» Գ հատորին, ինչպես նաև Ստեփանոս Ազոնցի՝ Մխիթար Մեբաստացու կյանքը պատկերող սովորաձավալ գրքին:

Հայագետներն ու Մխիթար Մեբաստացու կենսագիրները գիտեն, թե ինչ տառապանքների միջով է անցել Մխիթար Մեբաստացին, մինչև որ կարողացել է իրականացնել իր երիտասարդական տարիների երազանքը. ողջ Հայաստանի համար ստեղծել հոգևոր առաջընթացի հզոր մի կենտրոն: Բնականաբար բարեպաշտ և ուսումնատենչ պատանին պիտի գար բոլոր հայերի սրբազան հոգևոր կենտրոնը՝ Էջմիածին, տեսներ Արարատ լեռը, որն այնքան կապված է հայ ժողովրդի պատմության հետ: Էջմիածնից նա մեկնել է Խոր

վիրապ, ապա Սևանի կղզու վրա եղած հոգևոր միաբանություն: Սակայն այդ վայրերում չի գտել իր ուսումնաստենչությունը բավարարող միջավայր և Աստվածամոր պատկերի առջև աղոթել է, որպեսզի վերջինս իրեն ճիշտ ճանապարհը ցույց տա: Ըստ Ագոնցի գրածի՝ այդ պահին նրա վրա թմրություն է իջել, ու երևացել է Աստվածամոր տեսիլը:⁹ Աստվածամայրը հարցրել է, թե ինչ է վերջինս խնդրում: Մխիթարը բացատրել է, թե ինչ է իրեն պետք, ու Աստվածամայրը խոստացել է կատարել նրա փափագը և անհետացել է: Պատանին սթափվել է, և այնուհետև այդ տեսիլը նրան ուղեկցել է ողջ կյանքում՝ դառնալով բոլոր վշտերի ու չարչարանքների մխիթարիչ: Այս միստիկական պատմությունը թվում է իրական, որովհետև Մխիթար Սեբաստացին իր սիրանքի ճանապարհին հանդիպել է հալածանքների ու նախանձի դառնաղետ բազում դրսևորումների, որոնք հնարավոր էր հաղթահարել միայն գերմարդ լինելու դեպքում:

Այդ լուսավոր մարդու կերպարը սիրելի է եղել հետագայի բոլոր առաջադեմ հայ մտավորականների համար: Մխիթարի անձով հիացած է եղել Միքայել Նալբանդյանը: Տեղին են համարում մեջբերել Միքայել Նալբանդյանի «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանք» աշխատությունից՝ տպա-

⁹ Ագոնց Ստ., Վենետիկ, 1810, 48-49:

գրված «Հյուսիսսփայլի» 1858թ. 5, 6, 11 համարներում և անավարտ մնացած գործից մի հատված. «Երբ որ Վենետիկում լսած էին, թե Մխիթարյանց վանքն ու եկեղեցին քարուքանդ են եղած տաճիկների ձեռքով 1717-ին, վենետիկյան ծերակույտը մշտնջենավոր ժամանակով պարզեց միաբանությանը Սուրբ Լազարոսի վանքը, մոտ մի ժամ հեռավորությամբ Մարկոսյան հրապարակից դեպի Լիդո: Մխիթարը և նորա աշակերտքը տեղափոխվեցան դեպի այդ կղզին, ուր եղած էր հառաջուց մի հիվանդանոց, ուստի հառաջացած է և անունս Սուրբ Լազարոս՝ Մխիթարյան հոգևոր կարգի հիմնարկության օրին, այսինքն 1717 թվակ. սեպտեմբերի 8-ին: Այստեղ Մխիթարը հիմնարկեց մի նոր եկեղեցի և մի նոր վանք, որ կա և մինչև այսօր: Պատմում են, թե Մխիթարը մի գեղեցիկ կերպարանքով մարդ էր, հեզ և խաղաղ հոգով, բայց այս նորա հեզությունը և խաղաղասիրությունը առիթ է եղել, որ Հայաստանի աբեղայքը մականվանել են նորան. «Լավ չէ». պատճառ, Մխիթարը տեսանելով մի անպատեհ բան, սովոր էր ստեպ կրկնել. «Լավ չէ, լավ չէ»¹⁰: Այս տեղեկությունները գրեթե նույնությամբ գտնում ենք Վիկտոր Լանգլուայի գրքում: Միայն թե հասկանալի պատճառով Միքայել Նալբանդյանը խոր ցավով ու երկար գրում է, թե ինչ հալածանք-

¹⁰ Նալբանդյան Մ., հ. 2, Երևան, 1980, 236:

ների է ենթարկվել Մխիթար Սեբաստացին Պոլսի հայ հոգևորականների կողմից: Նալբանդյանը բացատրում է, թե Մխիթար Սեբաստացին իր անձը հազարավոր նեղությունների է մատնել, բամբասանքի ու հալածանքի ենթարկվել հանուն հայկական դպրության: Եվ ի հաստատումն իր ասածի ներկայացնում է Պոլսի չորս վարդապետների ստորագրությամբ Իտալիա ուղարկված Մխիթարյանների դեմ ուղղված ամբաստանագիրը, որի վերնագիրն էր «Տեղեկութիւն ի վերայ Մխիթարեանց՝ բնակելոց ի Վենետիկ»¹¹:

Ստեփանոս Նազարյանը ևս շատ բարձր է գնահատել Մխիթարյան հայրերի հայ մատենագրությանը բերած նպաստը, որը դրսևորվել է գրաբարյան բնագրերի հրատարակումով և այլ լեզուներից կատարված ընտիր թարգմանություններով:¹²

Վ.Լանգլուան հիացմունքով նկատում է, թե Սուրբ Ղազար կղզում իր միաբանությունն օրինակելի դարձնելու գերխնդրում Մխիթարը ցուցաբերել է չթուլացող եռանդ: Նա իր անձանձիր աշխատանքով օրինակ էր ծառայում միաբանների համար՝ նույնիսկ հանգստի ժամերը նվիրելով ինքնակատարելագործող ուսմանը: Թարգմանում էր աստվածաբանական գործեր, մատենագրական ու գիտական աշխատություն-

¹¹ Նույն տեղում, 239-244:

¹² Նազարյան Սո., Երևան, 1996, 306-307:

ներն իրագործում էր հմտորեն և իր հիմնած տպարանում լույս աշխարհ է բերում բազմաթիվ արժեքավոր հրապարակումներ: Եվ նրա բարեկարգ մենաստանը ավարտուն տեսք է ստանում 1840-ին, ու այդ թվականը դառնում է Մխիթարյան միաբանության վերջնական բարեկարգման տարի: Այդ մասին միաբանության հիմնադիրը վանքի սեղանատանը հայերենով ու լատիներենով թողնում է հետևյալ արձանագրությունը.

Մենաստանս այս ըստ բոլորին
շինեալ եղեւ ի փառս փրկչին.
յաբբայութեան Սեբաստացոյ
Մըխիթարայ վարդապետին

FUIT HOC MONASERIUM TOTUM TEMPORE
MECHITHAR PETRI EX SEBASTE,
I ABBATIS EXTRUCTUM, AN. 1740.¹³

Մխիթարյան միաբանության և Մխիթար Սեբաստացու կյանքի մասին ծավալուն գիրք է տպագրել նաև Հովհաննես Թորոսյանը, որը գիրքը հրատարակել է Վենետիկում 1901-ին՝ ի հիշատակ Մխիթարյան միաբանության հաստատման երկուհարյուրամյա հոբելյանին: Նա նշում է,

¹³ Langlois V., 1869, 15.

Թե որքան շքեղ ձևով Մխիթարը ընկույզի փայտով պատել ու դրվագել է հաստատության որմերը, դռները, սեղանները և ամբիոնները, ու սեղանատան դռան շրջանակի վերին մասի վրա Մխիթարը քանդակել է տվել միաբաններին ուղղված իր պատվիրանը.

Աստ լռութիւն է պահելի

Եւ սուրբ Գրոց ուշ դնելի:¹⁴

(Այստեղ պահել լռություն

Եվ սուրբ գրքերի մասին մտածել):

Վիկտոր Լանգլուան գրում է, թե Մխիթար Սեբաստացին վախճանվել է 1749-ին՝ 74 տարեկան հասակում և թաղվել հենց միաբանության եկեղեցում: Լևոն Զեքիյանը «Վենետիկ և հայերը» գրքում գետեղել է Մխիթարի գերեզմանի նկարը՝ ներքևում գրելով. «Երաշնորհ Մխիթար Աբբահոր դամբանը Սբ. Ղազարի եկեղեցիին բեմին վրա»:¹⁵

Ինչպես նշում է Լանգլուան, Մխիթարի մահից անմիջապես հետո ի պատիվ նրա միաբանությունը կոչվեց նրա անունով՝ Մխիթարյան: Նա սկսում է թվարկել հետագա աբբահայրերին՝ յուրաքանչյուրին տալով նրանց գործունեությունը բնորոշող գնահատականներ: Ստեփանոս Մելքոնի

¹⁴ Թորոսյան Հովհ., 1901, 376:

¹⁵ Զեքիյան Լ., 1990, 81:

աբբահայրության ժամանակ մի խումբ միաբաններ Բաբիկի գլխավորությամբ հեռանում են Վենետիկից և միաբանություն հիմնում սկզբում Տրիեստում, այնուհետև մշտապես հաստատվում Վիեննայում: Նրանք պահպանում են Մխիթարյան անվանումը և շարունակում Մխիթար Սեբաստացու հիմնած գործը: 1800 թվականին Վենետիկի միաբանության առաջնորդ է դառնում Ագոնց Գյուվերը: Գյուվերը սերում էր հայ ազնվական ընտանիքից: Նրա աբբահայրության ժամանակ առաջանում են լուրջ դժվարություններ: Պատճառն այն էր, որ Իտալիան նվաճվում է Նապոլեոն Բոնապարտից, և վերջինս փակում է իտալական եկեղեցիները: Իմաստուն Ագոնց Գյուվերը կարողանում է շահել Ֆրանսիայի միապետի համակրանքը, և միաբանությունը ոչ միայն չի փակվում, այլև ստանում է հատուկ կարգավիճակ՝ կոչվում է հայկական ակադեմիա: Ագոնց Գյուվերին 1824-ին փոխարինում է Սուքիաս Սոմալը, որը միաբանությանը հաղորդում է նոր շունչ: Հենց այդ թվերին հրատարակվում են միջնադարյան հայ մատենագրության մեծաքանակ երկեր, ինչպես նաև օտար երկրների գրականությունների բազում գլուխգործոցներ: Հենց Սուքիաս Սոմալի նախաձեռնությամբ բացվում են Մխիթարյանների երկու գլխավոր վարժարանները՝ Վենետիկում և Պադովայում:

1846-ին Սուրբաս Սոմալին փոխարինում է Գևորգ Հյուրմյուզյանը: Նա իր գործունեությամբ արժանանում է Ավստրիայի, Իտալիայի և Պարսկաստանի կառավարական բարձր պարգևների: Գևորգ Հյուրմյուզյանը եղել է հմուտ թարգմանիչ: Նրա շնորհիվ հայերը ծանոթացել են հին Եգիպտոսի, Ասորեստանի, Բաբելոնի, Մարաստանի, Պարսկաստանի պատմություններին: Հենց այդ հիմքով էլ արժանացել է վերոհիշյալ երկրների կառավարությունների բարձր պարգևների: Նա ֆրանսերենից թարգմանել է Պիեռ Կոռնելի «Պոլիկտոս վկայ Հայկազն» երկը: Սա այն երկն է, որի հիման վրա գրվել է Դոնիցետիի «Պողիկտոս» օպերան:

Վիկտոր Լանգլուան նկարագրել է նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության կրոնավորների հագուստը: Հենց որ Ադրիատիկի ջրերի վրայով գոնդոլը հասնում էր Սուրբ Ղազար կղզուն՝ հայտնվում էր մի վանական Արևելքի հոգևորականների սև զգեստով՝ մեջքը սեղմված կաշվե գոտու մեջ, որից կախված էր ադոթքի համրիչը, և ուղեկցում էր կղզու հյուրերին միաբանության տարբեր հատվածների տեսարժան վայրերը՝ եկեղեցին, գրադարանը, պատկերասրահը, տպարանն ու այգին: Քնարական պատկերներով Լանգլուան ներկայացնում է Մխիթարի հիմնած միաբանության ողջ հմայքը՝ մեծ նոճիները, ջրի և բույսերի թափառ շրջունը, իսկ հորիզոնում երևում է գեղեցիկ Լիդո կղզին: Լանգլուան

նկարագրում է կղզում եղած արձանները և խորանները զարդարող նկարները: Պատկերված են Տրդատ թագավորը՝ հայ առաջին քրիստոնյա թագավորը, մեկ ուրիշ նկար ներկայացնում է հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցին, որը նաև Սուրբ գրքերի թարգմանիչներից է, ինչպես նաև Հայաստանի նշանավոր կաթողիկոսը՝ Սահակ Պարթևը:

Միաբանության այցելուների վրա մեծ տպավորություն է թողնում, երբ եկեղեցու վանականները և նորընծաները, հազաձ իրենց տոնական զգեստները, երգում են հին քրիստոնյա հեղինակների հոգևոր երգերը: Ունկնդրին թվում է, թե լսում է V դարի պատմիչ Մովսես Խորենացու պատմության մեջ եղած գողթան երգերը ու լսում է բամբիռների ձայները: Ամեն օր Սուրբ Ղազարի միաբանները երեք անգամ գնում են եկեղեցի ժամասացության՝ առավոտյան ժամը հինգին, կեսօրին և վերջապես ժամը երեքին՝ կեսօրից հետո:

Միխթարյան միաբանությունն ունի շատ հարուստ գրադարան, որը բաղկացած է երեսուն հազար տպագրված գրքերից: Դրանց մեջ կային կրոնական, գրական, գիտական հազվագյուտ գրքեր: Միխթարյաններն ունեն հին դրամների հազվագյուտ հավաքածու, որում կան Ասիայի տարբեր երկրների և հատկապես Հայաստանի թագավորների դրամները: Այնտեղ կարելի է տեսնել Գրիգոր XVI պապի հոյակապ արձանը: Մեծահարուստ Լազարովիչը

միաբանությանն է նվիրել բիրմական մի հին պապիրուս: Պապիրուսի դիմաց կա շատ հզոր հեռադիտակ: Կա նաև եգիպտական հին մումիա, որը նվիրել է նշանավոր Պողոս-Բեկը՝ Եգիպտոսի տիրակալ Մահմեդ Ալիի նախարարը: Գրադարանի մուտքի մոտ Ռուսաստանի հայտնի ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծովանկարն է, որը հիացմունք է պատճառում:

Միաբանության հիմնական հարստությունը հայկական երկու հազար ձեռագիր հատորներն են: Այդ հավաքածուն ամենահարուստն է ողջ Եվրոպայում: Բայց նման հարստություն կա նաև Մեծ Հայքի Էջմիածնում: Հայկական ձեռագրերը պահպանվում են մեծ խնամքով: Դրանք մագաղաթի վրա են և հիացմունք են պատճառում իրենց գունավոր մանրանկարներով: Այդ դահլիճի դռան վերևում Ֆրանսիայի միապետ Նապոլեոն Երրորդի դիմանկարն է, որը գնահատում էր միաբանության օգտակար գործունեությունը:

Մխիթարի ժամանակներից սկսած՝ միաբանության տպարանը հրատարակում է տարբեր ժանրերի գրքեր, որոնք ուղարկում է Թուրքիա, Ռուսաստան, մինչև Հնդկաստան: Միաբանության տպագրած գրքերը միջազգային գրքի ցուցահանդեսներում շահել են մրցանակներ՝ Փարիզում (1855-67), Ֆլորենցիայում (1861), Լոնդոնում (1862): Հենց այս տպարանում են հրատարակվել Մխիթարի Աստվածաշունչը և նշա-

նավոր Մխիթարյանների գործերը, որոնց մեջ կան թարգմանություններ հին հունարենից, լատիներենից, իտալերենից, ֆրանսերենից և գրաբարից: Վերջապես դրանց մեջ են Եվսեբիոսի և Փիլոն Եբրայեցու գրքերը, որոնց բնագրերը կորել են, և այսօր կան միայն նրանց հայերեն տարբերակները:¹⁶ Բոնապարտի շնորհիվ ակադեմիա կոչվելուց հետո Մխիթարյանները ֆրանսիական ակադեմիայի օրինակով հրատարակեցին հայերենի մի հսկայածավալ բառարան: Խոսքը, անշուշտ, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» հատորների մասին է: Ամեն ամիս նրանք հրատարակում են միաբանության «Բազմավեպ» կոչված ամսագիրը: Միաբանությունն իր շուրջն է համախմբում հայագիտությամբ զբաղվող նշանավոր գիտնականների, ինչպես Բրոսսեին, Պետերմանին և ուրիշների, որոնք դառնում են Մխիթարյան միաբանության անդամներ, այդ ակադեմիայի կազմում են նաև լորդ Բայրոնը և նշանավոր արևելագետ Սիլվեստր Սասին:

Վանական կրթությունն ունի երեք աստիճան: Առաջին աստիճանում երեխաները սովորում են մինչև 17 տարեկանը: Նրանց դասավանդում են հումանիտար առարկաներ ու Եվրոպայի լեզուները, մաթեմատիկա, պատմություն և կրոն: Երկրորդ աստիճանում երիտասարդներ են, որոնք ուզում են դառնալ հոգևորական. նրանք սովորում են հռետորական

¹⁶ Langlois V., 1869, 29.

արվեստ, լատիներեն, ճշգրիտ գիտություններ: Երրորդ աստիճանը նորընծաների համար է, որոնք սովորում են փիլիսոփայություն, աստվածաբանություն, հունարեն և այլն: Երրորդ աստիճանում սովորողները հանձնում են ավարտական քննություն և ստանում հոգևոր աստիճան: Բազում տարիներ միաբանությունում մնալուց հետո հոգևոր հայրերն ուղարկվում են առաքելական քարոզչության՝ նախապես աբբահորից ստանալով վարդապետի տիտղոսը:¹⁷

Միաբանության այգու մի հատվածում կա խաղողի այգի, որի պտուղներից միաբանները ստանում են սպիտակ գինի՝ այն պատարագի ժամանակ օգտագործելու համար, և այդ գինին ունի ազգային ու աստվածաշնչային անուն՝ Արարատ:

XIX դարում Մխիթարյան միաբանությունը շատ հայտնի էր կրթված եվրոպացիներին: Հովհ. Թորոսյանը գրում է, թե Մխիթար Աբբան ուներ նաև ճարտարապետական հմտություն: Նրա կառուցած վանքը գեղեցիկ էր, այն տեսնելու էին գալիս շատերը՝ իշխաններ, դեսպաններ, ծիրանավորներ, նվիրակներ և այլն, և Մխիթարի հանճարի ու կարողության վրա հիացած՝ վերադառնում էին:¹⁸

¹⁷ Langlois V., Venise, 1869, 31.

¹⁸ Թորոսյան Հովհ., 1901, 382:

Լանգլուան նշում է, թե եկեղեցու ավագ խորանի ետնամասում կան մի քանի համեստ շիրիմներ, որոնցում թաղված են Արևելքի ուխտավորներ, որոնք փափագել են թաղվել Արարատի խաղողի թփերի տակ, որը փոխարինել է իրենց բացակա հայրենիքին:

Միաբանությունն ունեցել է հատուկ մատյան, որի մեջ նշանավոր այցելուները՝ թագավորներ, միապետեր, համեստ այցելուներ թողել են իրենց տպավորությունները: Այդ մատյանում առաջին ստորագրությունը Լորդ Բայրոնինն է, նրանից հետո ստորագրել են Ավստրիայի կայսրերն ու կայսրուհիները, Արևմուտքի իշխաններ, զորահրամանատարներ, նշանավոր գրողներ, որոնք փառաբանել են Վենետիկի գեղեցկությունը՝ հիասիրաշ պալատներով ու գաղտնախորհուրդ գոնդոլներով:

Ինչպես պարզ երևում է Վիկտոր Լանգլուայի գրքի վերնագրից՝ հեղինակը համառոտ ակնարկ է ներկայացնելու եվրոպական ընթերցողին Հայաստանի պատմության ու գրականության վերաբերյալ: Հետևաբար հետազոտության երկրորդ բաժինը նվիրված է Հայաստանի պատմությանն ու գրականությանը՝ հին ժամանակներից մինչև նոր օրեր:

Պատմական ակնարկը լիովին համահունչ է Մեն-Մարտենի «Հայաստանի պատմության և աշխարհագրության

հիշատակարանների» I հատորին: ¹⁹ Հայաստանում է գտնվում բիբլիական Արարատ լեռը, որի վրա կանգնել է Նոյի տապանը: Հայաստանն ընդգրկում է մի հսկա տարածք, որը բաղկացած է Մեծ Հայքից ու Փոքր Հայքից: Բացի դրանից Կիլիկիայում հայերը երեք հարյուր տարի ունեցել են իրենց ազգային թագավորությունը: Մեծ Հայքը բաղկացած է 15 նահանգներից, որոնք իրենց հերթին բաժանված են գավառների: Մեծ Հայքի նահանգներն են՝ Բարձր Հայք, Տայք, Գուգարք, Ուտիք, Չորրորդ Հայք, Տուրուբերան, Այրարատ, Վասպուրական, Սյունիք, Արցախ, Փայտակարան, Աղձնիք, Մոկք, Կորդույք, Պարսկահայք:²⁰ Սակայն XIX դարում Հայաստանի տարածքային բաժանումն այլ էր: Հայաստանի Արևմտյան մասն անցել է Թուրքիային, և այդ հատվածի հիմնական քաղաքներն էին՝ Էրզրում, Կարս, Բայազետ, Վան, Դիարբեքիր: Ռուսները պարսիկներից նվաճել են Հայաստանի Արևելյան մասը, որն ընկած է Քուռ և Արաքս գետերի միջև, ընդհուպ դրանց գետախառնումը: Արևելյան Հայաստանի քաղաքներն են՝ Երևան, Նախիջևան, Արտաշատ, Շաքի, Շիրվան, Շամախի, Բարդա և Էջմիածնի վանքը:²¹ Վիկտոր Լանգլուայի գրքի այս հատվածն այսօրվա Հայաստանի Հանրապետության և

¹⁹ Saint-Martin J., t. I, 1818.

²⁰ Նույն տեղում, 36:

²¹ Նույն տեղում, 37:

Արցախի Հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն: Ավելին, նա նշում է, թե ռուսները գրավել են նաև Վասպուրական նահանգի մի մասը:

Հին Հայաստանն ունեցել է շատ նշանավոր քաղաքներ, որոնք են Կարինը, որ թուրքերը կոչում են Էրզրում, Բագրատունիների մայրաքաղաք Անին, որի ավերակները ճանապարհորդների հիացմունքի առարկան են, Վաղարշապատը, որտեղ գտնվում է Էջմիածնի վանքը, Վանը, Ուռհան կամ Եդեսիան՝ հայ թագավոր Աբգարի մայրաքաղաքը, Մծբինը և վերջապես Երևանը: Հայաստան պետությունը հիմնել է Հայկ նահապետը, որը Թորգոմի որդին էր, վերջինս էլ սերում էր Նոյի որդի Հաբեթից: Հայաստանն արդեն 2000 տարվա պատմություն ուներ, երբ ընկավ Ալեքսանդր Մակեդոնացու տեղապահներից մեկի իշխանության տակ: Երկիրը հետո անցավ Սելևկյաններին: Վ.Լանգլուան հիացմունքով է խոսում Տիգրան Երկրորդի մասին, որը արքայից արքա էր, ստեղծել էր մեծ կայսրություն, անգամ հաղթել Հռոմին: Ըստ Խորենացու ներկայացվում է Աբգար թագավորի քրիստոնյա դառնալը դեռևս Հիսուս Քրիստոսի կենդանության ժամանակ: Սակայն ողջ Հայաստանը քրիստոնյա է դառնում Արշակունի Խոսրովի որդի Տրդատ Մեծի ժամանակ, որին քրիստոնյա է օծում Գրիգոր Լուսավորիչը: Հայաստանը ծաղկուն վիճա-

կում էր Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի օրերին, երբ պարսիկները ձեռնարկում են Հայաստանում տարածել գրադաշտական կրոնը: Արշակ Երկրորդը՝ Տիրան արքայի որդին, կարողանում է հաղթել պարսիկներին, սակայն պարսիկները նրան պատժում են, և Հայաստանը բաժանվում է Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև:

Հայաստանի ազգային ոգին բարձրացնում է Սուրբ Ներսեսի աշակերտ Մեսրոպը՝ ստեղծելով հայոց այբուբենը:

Լանգլուան նշում է, թե հենց այդ այբուբենի ու դրա տառերով ստեղծված մատենագրության շնորհիվ և իրենց կրոնին հավատարիմ մնալով՝ հայերը հարատևեցին դարերով: Հայաստանը դառնում է մարզպանական երկիր՝ կորցնելով Արշակունիների թագավորությունը: Բյուզանդական կայսր Հուստինիանոսը և նրա հաջորդները շատ պատերազմներ են մղում պարսիկների դեմ՝ Հայաստանը լիովին իրենց ենթարկելու համար: Բյուզանդական ու պարսկական լծին փոխարինելու է գալիս արաբականը, որի դեմ պայքարն ավարտվում է հայերի հաղթանակով, և Հայաստանում հիմնվում է Բագրատունիների հայկական թագավորությունը: Բագրատունիների հայկական գերդաստանի մասին հետաքրքիր փաստ է հրապարակում անգլիացի նշանավոր հայագետ Չարլզ Դաուսեթը՝ իր «Մայաթ-Նովա» մենագրության մեջ: Նա գրում է, թե Բագրատունի թագավորական գերդաս-

տանը, որի հիման վրա առաջացավ վրացականը, համարվում է աշխարհի ամենահին ու երկարակյաց թագավորական տունը, որի ազնվականությունը Ֆրանսիայում առ այսօր պաշտոնապես ճանաչվում է («...the Bagratids count as the most ancient and durable royal house in the world, its nobility officially recognised in France till the present day»)²²:

Լանգլուան ցավով է խոսում մոտ երկու դար տևած հայ Բագրատունիների թագավորության անկման, Գագիկ Երկրորդի Կոստանդնուպոլիս կանչվելու, դավադրաբար ձերբակալվելու, աքսորվելու և ապա սպանվելու մասին:²³

Կիլիկյան հայկական թագավորությունը մեծ դեր է խաղացել իսաչակիրներին օգնելու գործում: Մոտ 300 տարի տևելուց հետո նրա վերջին թագավորը՝ Լևոն Լուսինյանը, գերվում է Եգիպտոսի մամելուկներից, դեգերում է Եվրոպայում և ապա իր մահկանացուն կնքում Փարիզում՝ 1392-ին: Դրանից հետո Հայաստանն ամբողջությամբ ընկնում է մահմեդական լծի տակ, մինչև որ Հայկի ստեղծած հնագույն պետության մի զգալի մասն անցնում է ռուսական տիրապետության ներքո:

²² Dowsett Ch., 1997, 87.

²³ Langlois V., 1869, 44.

Վ.Լանգլուան գրում է հեթանոսական շրջանի հայ գրականության մասին, որը ստեղծել էին հին գուսանները, և դրանից շատ քիչ բան է հասել: Նա համառոտ ներկայացնում է հայ գրականության ընթացքը քրիստոնեության ընդունումից մինչև Մխիթարյան միաբանության հեղինակները:

Լանգլուան թվարկում է քրիստոնյա հայ հեղինակներին՝ տողատակում նշելով, թե ինչ հայերեն տպագիր գրքեր է օգտագործել: Այդ գրքերը և XVIII դարից են, և XIX: Տպագրված են Կոստանդնուպոլսում, Վենետիկում, Հռոմում, Ամստերդամում, Միլանում, Մադրասում, Նախիջևանում: Լանգլուան հիրավի հսկայական աշխատանք է կատարել սեղմ ծավալի մեջ այդքան մեծ ընդգրկում ունենալու համար: Նրա կարծիքով V դարի հայ մատենագրության ծաղկումը պայմանավորված էր IV դարի նախապատրաստական քրիստոնեական շրջանով:

Մաշտոցյան գրերի ստեղծումից հետո թարգմանվեցին քրիստոնեական կրոնի սրբազան գրքերը:

Լանգլուան նշում է, թե Հայաստանի հոգևոր վերածննդի և գիտական առաջադիմության մեջ հսկայական էր հայոց պետականությունը ներկայացնող Վռամշապուհ արքայի դերը, որի շնորհիվ այդքան դպրոցներ բացվեցին ողջ Հայաստանում, նաև Հռոմ, Աթենք, Ալեքսանդրիա ուղարկվեցին հայ ուսանողներ՝ ուսման մեջ կատարելագործվելու

նպատակով: Նա շատ բարձր է գնահատում Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը», որը բացառիկ փաստեր է հայտնում հին հեթանոսական հավատների, պարսից զրադաշտականության, հույն փիլիսոփաների ուսմունքների, Մարկիոնի և Մանիի ուսմունքների մասին:²⁴

Լանգլուան հիացած է Մովսես Խորենացու «Հայոց պատմությամբ»: Հայ պատմահոր մատյանը հրաշալի փաստեր ունի Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի, Հունաստանի և այլ պետությունների մասին:²⁵ Դավիթ Անհաղթը, որն իր ժամանակի փիլիսոփաների մեջ շատ հռչակավոր էր, հայերեն է թարգմանել Արիստոտելի գործերը:

V դարի մատենագրությունից հիշատակվում են Մամբրե Վերծանողը, Գյուտ կաթողիկոսը, Հովհան Մանդակունին, Եղիշեն: Հայագետին բացի Եղիշեի պատմությունից հայտնի են նրա աստվածաբանական գործերը, որոնք նա անվանում է սքանչելի (*charmantes*)²⁶: Ի վերջո, հիշատակում է Ղազար Փարպեցուն, որը գրել է 484-ի պարսիկների դեմ հայերի ապստամբության մասին:

Հինգերորդ դարի պտղառատ մատենագրությունից հետո VI դարն անպտուղ էր, որը պայմանավորված էր քա-

²⁴ Նույն տեղում, 49:

²⁵ Նույն տեղում, 50:

²⁶ Նույն տեղում, 51:

դաքական անբարենպաստ պայմաններով: VI դարի հայ իրականության համար կարևոր էր կաթողիկոս Մովսես Երկրորդ Եղվարդեցու կողմից հայոց տոմարի ընդունումը, որով հաստատուն մնաց հայոց եկեղեցու անկախությունը: VI դարում հիշատակվում է նաև Պետրոս Սյունեցին՝ իր բազմապիսի գործերով:

VII դարի հեղինակներից հիշատակվում են Կոմիտաս կաթողիկոսն իր Հռիփսիմյան կույսերին նվիրված գեղեցիկ քերթվածով, Հովհան Մամիկոնյանը Տարոնի պատմությամբ, Մովսես Կաղանկատվացին «Աղվանից աշխարհի պատմությամբ», Անանիա Շիրակացին որպես աստղագետ, մաթեմատիկոս, չափ ու կշռի մասին գործերով, հատկապես թվաբանության դասագրքով:

VIII դարում ստեղծագործել է կաթողիկոս Հովհան Օձնեցին (717-728), որը կոչվել է նաև Իմաստասեր: Հեղինակել է թղթեր, եկեղեցական կանոններ և կազմել է «Կանոնգիրք Հայոց» ժողովածուն: Գրել է նաև շարականներ:

VIII դարում է գործել նաև Սյունիքի արքեպիսկոպոս Ստեփանոս Սյունեցին, որը բազմաթիվ գործեր է թարգմանել հունարենից:

IX դարում Բագրատունիները իմաստուն քաղաքականությամբ վերականգնում են Հայոց պետականությունը: Այդ դարի վերջում Հովհաննես Դրասխանակերտցին, հետևելով

Մովսես Խորենացուն, գրում է ամբողջական «Հայոց պատմություն»: Լանգլուայի կարծիքով թեպետ Թովմա Արծրունու «Պատմություն տանն Արծրունյաց» երկը նվիրված է Արծրունիներին և նրանց փառքին, սակայն շատ ճշգրիտ փաստեր է պարունակում ողջ Հայոց պատմության վերաբերյալ:²⁷

X դարում հիշատակվում է Մեսրոպ Երեցը, որը գրել է սուրբ Ներսես Մեծի կյանքի պատմությունը: Այդ դարի հեղինակ է Ստեփանոս Ասողիկն իր պատմությամբ: Այդ դարում է ստեղծագործել վսեմ, պերճաբան քերթող Գրիգոր Նարեկացին, որին Լանգլուան անվանում է հայերի Պինդարոս:²⁸ Պինդարոսը (518-438 ն.Ք.ծ.) հույն քնարերգու էր, որն իր շքեղ ներբողները նվիրել է հունական օլիմպիական խաղերին: Պինդարոսն իրար է միացրել Հունաստանի անցյալի ու ներկայի փառքերը և փառաբանել է աստվածներին, ժամանակակիցներին տվել բարոյահոգեբանական դասեր: Աստվածներից հատկապես նվիրվածություն է ցուցաբերել Ապոլոնին: Պինդարոսն իր պոեզիայով, որը գրված է քնարական արձակով, վեր է բարձրացել հունահռոմեական գրականության բոլոր ժամանակներից:²⁹

²⁷ Նույն տեղում, 54:

²⁸ Նույն տեղում, 55:

²⁹ The Reader's Companion to World Literature, 2002, 561.

Հիրավի, Լանգլուայի այս համեմատությունը Պինդարոսի և Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների միջև տեղին է: Հայագետը հատկապես հավանում է Վենետիկում լույս տեսած Գր.Նարեկացու այն ժողովածուն, որը կազմել է Գաբրիել Ավետիքյանը՝ կցելով անհրաժեշտ ծանոթագրություններ:³⁰

XI դարում հռչակավոր է եղել Գրիգոր Մագիստրոսը, որի տարբեր թեմաներով գրված բազում թղթերում երևում է հեղինակի էրուդիցիան. նա քերական էր, բանաստեղծ, նաև թարգմանիչ: Լանգլուան հիշատակում է Պետրոս Գետադարձի շարականները, Անանիա Սանահնեցու մեկնությունները, Գրիգոր Վկայասերին, որը թարգմանել է հունական և ասորական վկայաբանությունները:

XII դարը հայ գրականության մեջ նշանավորում է նոր վերելք: Գրիգոր Երրորդ կաթողիկոսը՝ Ներսես Շնորհալու եղբայրը, թողել է հայոց եկեղեցուն նվիրված շարականներ:

XII դարի հայ գրականությունը զարդարում է Ներսես Շնորհալին, որին աբբա Վիլեֆրոյը և Վիլոտը համարում են Հայոց եկեղեցու հայրերից ամենապերճախոսը:³¹ Նա գրել է ծավալուն պոեմներ, հատկապես մի վսեմ ողբ Եղեսիայի առման վերաբերյալ, Հայաստանի պատմությունը ներկայացնող

³⁰ Langlois V., 1869, 55.

³¹ Նույն տեղում, 57:

չափածո վիպասանություն, որը գրել է շատ երիտասարդ հասակում: Նրա չափածո քերթվածները ստեղծվել են ամենատարբեր սյուժեներով: Նույնքան հայտնի են նրա արձակ գործերը՝ նամակները: Ներսես Շնորհալու մի աղոթքը ծանոթ է ողջ քրիստոնյա աշխարհին, որովհետև թարգմանված է աշխարհի 33 լեզուներով (խոսքը «Հաւատով խոստովանիմ» աղոթքի մասին է – Ա.Դ.): Լանգլուան Ներսես Շնորհալուն կոչում է Հայաստանի Ֆենելոն: Ֆրանսուա Ֆենելոնը (1651-1715) բարձրաստիճան հոգևորական էր և թողել է բազմաժանր ու հարուստ գրական ժառանգություն, ինչպես Ներսես Շնորհալին: Նա գրել է արձակ առակներ, թղթեր, եղել է նվիրյալ քրիստոնյա, ճիշտ Ներսես Շնորհալու նման: Ֆենելոնին համարում են XVIII դարի ֆրանսիական ուտոպիստ մտածողների նախակարապետը:³²

XII դարի գրողներից է Սամվել Երեցը կամ Անեցին, որը գրել է տիեզերական պատմություն (ժամանակագրություն)՝ աշխարհաստեղծումից մինչև 1179 թվականը:

Մխիթար Հերացին եղել է XII դարի նշանավոր բժշկապետ, որի «Ջերմանց մխիթարություն» աշխատության մեջ առկա են հին հույների, պարսիկների և արաբների բժշկական հմտությունները:

³² Petit Robert – 2, 1988, 633.

XII դարի նշանավոր մատենագիրներից է Ներսես Շնորհալու զարմիկ (նա Ն.Շնորհալու Վասիլ եղբոր որդին էր – Ա.Դ.) Գրիգոր Տղան, որը բազմաթիվ թղթերի և բանաստեղծությունների հեղինակ է: Այդ թղթերից մեկն ուղղված է բյուզանդական կայսերը և մերժում է միաբարական շարժումն ու եկեղեցիների միացումը:

Նույն դարի բանաստեղծ և գործիչ Ներսես Լամբրոնացին, ընդհակառակը, կողմ էր երկու եկեղեցիների միացմանը: Նա թողել է հարուստ դավանաբանական ժառանգություն, կատարել է թարգմանություններ լատիներենից: Հատկանշական է նրա բանավիճային ճառը՝ ուղղված Կիլիկյան Հայաստանի արքա Լևոնին:

Վերջապես XII դարի մատենագրության մեջ փայլում է Մխիթար Գոշը իր 190 առակներով, որոնք աչքի են ընկնում իրենց հստակությամբ: Նա նաև գրել է քաղաքացիական օրենքներին վերաբերող դատաստանագիրք:

XIII դարի հայ գրականությունը հարուստ է գրական անուններով, որոնց մեջ ավելի երևելիներին է անդրադառնում Լանգլուան:

Դրանք են Գրիգոր Սկևռացին, որը ներբողյան է նվիրել Ներսես Լամբրոնացուն, գրել է հոգևոր երգեր: Մխիթար Անեցին գրել է Հայաստանի, Վրաստանի և Պարսկաստանի հին ժամանակների պատմությունը: Հովհան

Վանականը, որը գրել է Հոբի գրքի մեկնությունը, և շատ ցավալի է, որ նրա գրած պատմությունը, որը վերաբերում էր թաթար-մոնղոլների արշավանքներին, անհետ կորել է: Վ.Լանգլուան Վարդան Մեծին շփոթում է Վարդան Այգեկցու հետ և գրում է, թե նրա հիանալի առակներից 45-ը ֆրանսերեն է թարգմանել Սեն-Մարտենը: Վարդան Արևելցին գրել է տիեզերական պատմություն՝ աշխարհի արարումից մինչև 1267 թվականը և զանազան մեկնություններ: Իսկ XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրել է մի պատմություն, որը սկսվում է Տրդատ արքայից և հասնում է Հեթում Առաջինին, այսինքն՝ 300 թվականից մինչև 1260-ը: Այս պատմության մեջ ուշագրավ հատվածներ կան արաբներին, թուրքերին ու թաթարներին վերաբերող: Իսկ Մաղաքիա Աբեղայի պատմությունը նկարագրում է թաթարների արշավանքը Հայաստանի վրա՝ մինչև 1272 թվականը:

Վահրամ Բաբունին՝ Լևոն Երրորդի քարտուղարը, չափածո ձևով շարունակում է Ներսես Շնորհալու «Վիպասանություն» պոեմը՝ հասցնելով մինչև 1280 թվականը: Հայ միջնադարի դասական հեղինակ Հովհաննես Երզնկացին եղել է քերական, մեկնիչ, տոմարագետ, բանաստեղծ, փիլիսոփա-աստվածաբան:

Ստեփանոս Օրբելյանը գրել է Սյունիքի պատմությունը, որի մի հատվածը միայն Մադրասի 1776թ. հրատարակությունից թարգմանել է Սեն-Մարտենը:

Գրիգոր Անավարզեցին՝ Սսի կաթողիկոսը, գրել է վկայաբանություններ:

XIV դարում կան շատ հեղինակներ, որոնցից քչերին է հիշատակում Լանգլուան: Դրանք են՝ Հեթում պատմիչը, որը ֆրանսերենով շարադրել է Չինգիզ խանի պատմությունը, և մյուսը՝ Բանաստեղծ Խաչատուր Կեչառեցին, որը չափածո հատվածներ է գրել Ալեքսանդր Մակեդոնացու կենսագրության համար:

XV դարում Թովմա Մեծոփեցին ժողովրդական լեզվով շարադրել է թաթարների պատմությունը՝ հասցնելով մինչև 1447 թվականը: Իսկ նույն դարի բժիշկ Ամիրդովլաթը՝ նշանավոր բժշկապետը, շարադրել է հիվանդությունների բուժման եղանակները:

Արժանահիշատակ չհամարելով ուրիշ, ավելի երկրորդական մատենագիրների մասին խոսելը՝ Լանգլուան անցնում է հայ դպրոցներին ու տպարաններին:

Հռոմի պապի պրոպագանդիստները 1623-ին դպրոց են բացում Էջմիածնում, իսկ 1655-ին՝ Լեհաստանի Լվով քաղաքում (Léopol ou Lemberg):

Եվրոպայում և Ասիայում սկսում են բացվել հայկական տպարաններ: Դրանք սկսում են գործել Լվովում (1616), Միլանում (1624), Փարիզում (1633), Նոր Ջուդայում (1640), Լիվոռնոյում (1640), Ամստերդամում (1660), Մարսելում (1673), Կոստանդնուպոլսում (1677), Լեյպցիգում (1680), Պադովայում (1690): Դրանց մեջ նշանավորագույնը Հոլանդիայի տպարանն էր:

XVII դարում Ստեփանոս Լեհացին լատիներենից գրաբար է թարգմանում Դիոնիսիոս Արեոպագացու աշխատությունները և այլ գործեր: Մեկ ուրիշ լեհահայ գրում է ստվարածավալ հայերեն-լատիներեն բառարան:

Առաքել Դավրիժեցին շարադրում է իր ապրած ժամանակի պատմությունը՝ 1601-1662թթ.:

Ավելացնելով որոշ այլ մատենագիրների անուններ՝ իր գրքի վերջին հատվածները նա նվիրում է Մխիթարյան միաբանության գրողներին ու թարգմանիչներին:³³

Բոլոր աշխատությունների մեջ առանձնանում է Սուրբիաս Սոմալի „Quadro della letteratura armena” գիրքը („Tableau de la litterature arménienne” - «Հայ գրականության նկարագիր»): Այս գրքում Սոմալը ճշգրիտ ու տրամաբանված ներկայացնում է հայ գրականության ընթացքը դար առ դար:

³³ Langlois V., 1869, 67-76.

Այս աշխատությունն անգին է հատկապես օտարերկրացիների համար:

Լանգլուան բարեխղճորեն ներկայացնում է իրեն հայտնի հայագետների անունները՝ սկսած XIV դարի Բարդուղիմեոս Բոլոնացուց, որին հետևում են Ֆրանսուա Ռիվոլան (XVIIդ.), Կղեմես Գալանոսը, Հակոբ Վիլոտը, ֆրանսիացիներ Մաթյուրին Լակրոզը, Բլամոն Վիլեֆրոյը, Շրոդեր գերմանացին, անգլիացի Վիպթոն եղբայրները, որոնք թարգմանել են Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», և լորդ Բայրոնը: Նա չի մոռանում նշել, թե Եվրոպայի հայագիտությանը մեծ զարկ է տվել Սեն-Մարտենը, որից հետո հատկապես Ֆրանսիայում հայագիտությունը ստացավ մեծ զարգացում: Նա հիշատակում է իրեն ժամանակակից հայագետներին՝ Բրոսսեին, Բորեին, Կապելետիին, Նյոմանին, Պետերմանին, Վելթին, Նևին և Դյուլորիեին: Հայաստանը ներկայացրել են նաև եվրոպացի ճանապարհորդներ Շարդենը, Տուրնեֆորը, Ժոբերը և Կլապրոտը³⁴, Թեքսիեն, Բրոսսեն, Աբիլը, Վագները, Խանիկովը և ուրիշներ:

Լանգլուան ասում է, թե օտարները շարունակում են խիզախորեն հայտնագործել աշխարհի առաջին քրիստոնյա երկիրը և այն ժողովրդին, որը գրկաբաց ընդունեց խաչակիր-

³⁴ Նույն տեղում, 76:

ներին, որոնք եկել էին Քրիստոսի գերեզմանը անհավատ-
ների ձեռքից ազատելու:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1) ԱԳՈՆՅ ԱՏ., Պատմութիւն կենաց եւ վարուց տեառն Մխիթարայ Սեբաստացոյ Բարունապետի և աբբայի, Վենետիկ, 1810
- 2) ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա., Վիկտոր Լանգլուան հայագետ, Երևան, 2003
- 3) DOWSETT CH., Sayat-Nova, An 18th-century troubadour, Lovanii, 1997
- 4) ԶԵՔԻՅԱՆ Լ., Վենետիկ և հայերը, Վենետիկ - Սբ. Ղազար, 1990
- 5) ԹՈՐՈՍՅԱՆ ՀՈՎՀ., Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացոյ, Վենետիկ, 1901
- 6) LANGLOIS V., Rapport sur l'exploration archéologique de la Cilicie et la Petite-Arménie, pendant les années 1852-1853, Paris, 1854
- 7) LANGLOIS V., Étude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren, Paris, 1861

- 8) LANGLOIS V., Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. I, Paris, 1967, t. II, Paris, 1969
- 9) LANGLOIS V., Mémoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros, duc de la Mésopotamie, auteur Arménien du XI siècle, Paris, 1869
- 10) LANGLOIS V., Notice sur le couvent Arménien de l'île s. Lazare de Venise, Venise, 1869
- 11) ՀԵՐՄԵՏ ԱԼԵՐԱՄՈ, Պատլա Կոնի Ռատտի դի Դեզիո, Հայերի Վենետիկը, Երևան, 2000
- 12) ՆԱԶԱՐՅԱՆ Ս., Երկերի ժողովածու, Երևան, 1996
- 13) ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Մ., Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 2, Երևան, 1980
- 14) PETIT ROBERT – 2, Paris, 1988
- 15) SAINT-MARTIN J., Mémoires historique et géographique sur l'Arménie, t. I, Paris, 1818
- 16) THE READER'S COMPANION TO WORLD LITERATURE, second edition, London, 2002



ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԱՑՈՒՑԱԿԸ

Հայերեն ձեռագրերը հայ ժողովրդի կյանքի, պատմության խոսուն վկաններն են՝ ճակատագրի բերումով ցիր ու ցան եղած աշխարհով մեկ: Թե՛ հայ, թե՛ օտարազգի ուսումնասիրողները կանխազգացել են հայերեն ձեռագիր գիրքը ընթերցողի և ուսումնասիրողի դատին հանձնելու անհրաժեշտությունը, «սրբազան առաքելութիւն մը անելու գիտակցութեամբ» և պատասխանատվության զգացումով կարևորել այդ աղբյուրները՝ երևան հանելով հայերեն ձեռագրերի մեծ ու փոքր հավաքածուների նկարագրություններ¹: Ձեռագրացու-

¹ Ձեռագրացուցակների մասին տե՛ս Անասյան Հ., Հայկական մատենագիտություն. Ե.-ՃԸ. դր., Հատոր Ա., Ա-Առաքել Սալաձորեցի, Երևան, 1959, էջ

ցակների կազմումը շարունակական աշխատանք է. ամբարելով հսկայական նյութ աշխարհասփյուռ հայերեն ձեռագրերի մասին, ցուցակները միաժամանակ պատկերացում են տալիս թե՛ կորուսյալ միավորների² և թե՛ նորահայտ ձեռագրերի մասին:

Ձեռագրերը համակարգելու և ձեռագրացուցակ ստեղծելու անհրաժեշտությամբ մեզանում տարբեր ժամանակներում ստեղծվել են ձեռագրերի տարբեր տեղեկատու ցանկեր: Հայագիտության առջև դրվող պահանջներն իրենց կնիքն են թողել նաև ձեռագրաց նկարագրության աշխատանքների վրա: Անհատի կամ վանքապատկան ձեռագրերի մասին վկայություններ հանդիպում ենք վանքերի ընծայամատյանների, մատենադարանների սեփականությունն արձանագրող գույքացուցակներում³, հիշատակարաններում կամ այլ բնույ-

LXXVII-XCII: Թվայնացված ձեռագրացուցակների հարուստ շտեմարանը՝ <http://serials.flib.sci/matenagitutyun/test/index.html> կայքում՝ «Ցուցակ ձեռագրաց: Catalog of Manuscripts» խորագրի ներքո:

² Տե՛ս Սուրեն Գօլանճեան, Հովհաննէս վարդապետ Հիւսեան, Բարգէն աթոռակից կաթողիկոս Կիլիսերեան, Գեորգ Տէր-Վարդանեան, Հրատարակութեան պատրաստեց՝ Գեորգ Տէր-Վարդանեան, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2015:

³ Խաչիկ Ծ. վարդապետ Դադեան, Նորագիտ մագաղաթեայ նոտրագիր ցուցակ Սաղմոսավանից մատենադարանի, «Շողակաթ», Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, Գիրք Ա., Վաղարշապատ, 1913, էջ 167-169:

թի արխիվային նյութերում: Ըստ պահանջի այդ ցուցակներն սկսում են աստիճանաբար ավելի ընդարձակվել իրենց բովանդակությամբ. սուկ թվագրումն իր տեղը զիջում է նկարագրությանը, իսկ նկարագրողն (նկարագրողներն) աչքի առաջ ունենում է արդեն ոչ թե ձեռագիրը որպես վանքապատկան արժեք, այլև նրա գիտական կարևորությունը և մասնագետին օգտակար լինելու գործառույթը: Դիպուկ է նկատում Մկ. Ավգերյանը՝ «Անցանկ մատենադարանը բանալի չունեցող մշտափակ դուռ մըն է... ան ատեն գրատունը գանձարան է, երբ իր ճոխութիւններուն հաստատուն ցանկ ունի»⁴ կամ թե՛՝ հոգատար կազմված ձեռագրացուցակը մի ամբողջ գրատուն է⁵:

Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամիրդոլու՝ համարով անջինջ յիշատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետին, «Արարատ», 1903, էջ 178-189: Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի Քեօթուկ), Աշխատասիրութեամբ՝ Պարոյր Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007:

⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ (այսուհետև՝ Ցուցակ Վենետիկի), Հատոր Է., Յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Տօնապատճառ – Ժողովածոյ, Սատենագիրք Հայոց, Վենետիկ, 1996, էջ Գ.:

⁵ Այս բնորոշումը Մկ. Ավգերյանինն է, որ գործածում է նաև Բ. Սարգիսյանը:

Ձեռագրացուցակների կազմումը գիտության համար կարևոր և պատասխանատու աշխատանք է⁶, ձեռագրերին շունչ ու մարմին տալու, նրանց որպես նոր և խոսուն վկաներ կանգնեցնելու շնորհակալ նախաձեռնություն: Ձեռագրացուցակների կազմման և ուսումնասիրման գործին թե՛ հայերեն ձեռագրերի հավաքածուների նկարագրությունների առաջաբաններում, թե՛ առանձին ուսումնասիրություններում⁷ իրենց նպաստն են բերել հին և նոր շրջանի նվիրյալ հայագետներ

⁶ Ընդհանուր պատկերացման համար նշենք, որ Մաշտոցի անվան Մատենադարանում այսօր ձեռագրերի նկարագրությամբ զբաղվում է առանձին՝ «Ձեռագրագիտության և «Մայր ցուցակի» բաժինը Մատենադարանի գլխ. ավանդապահ, պատմ. գիտ. դոկտոր Գեորգ Տեր-Վարդանյանի ղեկավարությամբ:

⁷ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հատոր Ա., Կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Ներածությունը՝ Օ. Եգանյանի, Խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, «Մատենադարանի ձեռագրական հավաքածուները», Երևան, 1965, էջ 13-220: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատոր Ե., Կազմեցին Օնիկ Եգանեան, խմբագրությամբ Յ. Քեօսեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահե քիյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դևրիկեանը, առաջաբան, էջ 1-2, Երևան, 2009: Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատոր Զ., Խմբագրությամբ Գեորգ Տեր-Վարդանեանի, Երևան, 2012, Մուտք՝ Գ. Տեր-Վարդանեան, էջ 5-12: Տեր-Վարդանեան Գ., Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսեան, Երևան, 1999: Օննիկ Եգանեան, Աշխատութիւններ. Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները, Հրատարակութեան պատրաստեց Գեորգ Տեր-Վարդանեան, Ցանկերը կազմեց՝ Գայիանէ Թերզեան, Երևան, 2014:

(Մկ. Ավգերյան, Ղ. Ալիշան, Ն. Բյուզանդացի, Հ. Տաշյան, Մ. Տեր-Մովսիսյան, Բ. Կյուլեսերյան, Գ. Հովսեփյան, Լ. Խաչիկյան, Հ. Անասյան, Օ. Եգանյան, Գ. Տեր-Վարդանյան):

Ձեռագրացուցակներ կազմվում են տարբեր եղանակներով, ծավալով, բնույթով և թեմատիկայով. «Ամեն մի կոնկրետ դեպքում ընտրվում է հարմար որևէ ձև, հաշվի առնելով մի շարք կոնկրետ հանգամանքներ, կապված նկարագրվող ձեռագրական հավաքածուի և գիտության պահանջների հետ»⁸:

Ըստ Լ. Խաչիկյանի ձեռագրերի նկարագրության ժամանակ հաշվի են առնվում հետևյալ կարևոր հանգամանքները. նկարագրելիք ձեռագրերի հավաքածուի նյութերի քանակը, տվյալ ժողովածուի ձեռագրական գանձերի աշխարհում պահպանված ձեռագրերի նկարագրության, ուսումնասիրության և հրատարակության վիճակը:

Հայերեն ձեռագրերի նկարագրության մեջ անգերազանցելի համարվող Հ. Տաշյանի՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագրացուցակը կանխեց վենետիկցիներին: Ուստի պատահական չէ ցուցակի առաջաբանում Տաշ-

⁸ Լ. Խաչիկյան, Աշխատություններ, [Մատենադարանի Մայր ցուցակի «Հին» և «Նոր» տարբերակների հարաբերակցությունը և մեր գիտական խնդիրը] (կարդացված Մատենադարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստերից մեկում), Հատոր Գ., Երևան, 2008, էջ 1040:

յանի արդարացի տրտունջը, թե հրապարակի վրա տակավին բացակայում են մեր երեք խոշորագույն հավաքածուների նկարագրությունները. «Հայոց մատենագրութեան ճշգրիտ պատմութիւն մ' անհնար է գրել այնպէս, ինչպէս կը պահանջէ այսօրուա գիտութիւնն, եթէ լոյս չսփռուի Էջմիածնի, Երուսաղէմի, Վենետկոյ, Վիեննայի եւ ուրիշ մեծ հաւաքմանց... գանձերուն, մանաւանդ առաջին երեք տեղերուն»⁹:

Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրական հավաքածուն ճոխությամբ երրորդն է Մաշտոցյան Մատենադարանի և Երուսաղէմի հավաքածուներից հետո (պարունակում է շուրջ 3500 միավոր), և նրա գիտական ու խնամքով նկարագրությունը հայագիտության համար սպասված էր և հրատապ¹⁰:

Ցուցակի հրատարակման աշխատանքներն սկսվել են 1910-ական թթ., և ստվարածավալ ութ հատորներում¹¹ հու-

⁹ Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին ի Վիեննա, կազմեց Հ. Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ Բ.:

¹⁰ Վենետիկի Մխիթարյան միաբանության 24 հմայիլ ընդօրինակել է Ֆրեդերիկ Ֆեյդին 1933-34թթ.՝ Ս.Ղազար կղզում եղած ժամանակ, իր «Քրիստոնեական Հայաստանի հմայիլները» աշխատության համար. տե՛ս Ա. Դոլուխանյան, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 60:

¹¹ Ցուցակ Վենետիկի, Հատոր Ա. Յօրնեց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Ս. Ղազար, 1914: Հատոր Բ., Ճառընտիր – Ոսկեփորիկ, Հաւաքումն քանից նախնեաց, Յօրինեց Հ. Բարսեղ Սարգի-

րախություն ընթերցողի ամբարված է Վենետիկի Մխիթարյան միաբանության հարուստ հավաքածուի ստվար մասի (1772 միավոր) մանրամասն նկարագրությունը: Հրատարակման առաջին և վերջին հատորների միջև ընկած ժամանակահատվածն (1914-1998 թթ.) ինքնին վկայում է աշխատանքի դժվար ու բարդ ընթացքի մասին: Առաջին երկու հատորը կազմել և տասնամյա ընդմիջումով՝ 1914-ին և 1924-ին հրատարակել է¹² Բ. Սարգիսյանը (ծնվ. 1 հունիսի 1852թ. - մահ. 1 օգոստ. 1921թ.), որ պատրաստել էր նաև երրորդ հատորի նկարագրությունների մի մասը, մյուս մասը լրացրել է Գ.

սեան Մխիթարեան ուխտէն, Վենետիկ – Ս. Ղազար, 1924: Հատոր Գ., Յօրինեցին Հ. Բարսեղ Սարգիսեան եւ Հ. Գրիգոր Սարգսեան Մխիթարեան ուխտէն, Մաշտոց – Գիրք ձեռնադրութեանց, Վենետիկ-Ս. Ղազար, 1966, Հատոր Դ., Շարակնոց- Ճաշոց-Ժամագիրք, Խորհրդատետր-Մանրուսմունք-Կցուրդք. Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Ս. Ղազար, 1993: Հատոր Ե., Յայսմատուրք-Գանձարան-Տաղարան-Տօնացոյց. Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ - Ս. Ղազար, 1995: Հատոր Զ., Պատմագիրք Հայոց- Կանոնագիրք, Գրիգոր Նարեկացի – Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի – Աղօթագիրք, Յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան Մխիթարեան ուխտէն, Վենետիկ – Ս. Ղազար, 1996: Հատոր Է., ծնթ. 4: Հատոր Ը., Թարգմանութիւնք նախնեաց, Վարք հարանց – Բժշկարան, Յօրինեց Հ. Սահակ վրդ. Վեմճեմեան Մխիթարեան ուխտէն, Վենետիկ-Ս. Ղազար, 1998:

¹² Բ. Սարգիսյանը վստահ էր, որ կհասցներ նկարագրել ձեռագրական ողջ հավաքածուն, և ցանկերը թողել էր վերջին հատորին, այդ պատճառով էլ այս առաջին երկու հատորները գրկվել են տեղեկատու շատ կարևոր ցանկերից:

Սարգսյանը (ծնվ. 16 մարտի 1896թ. - մահ. 3 սեպտ. 1964թ.), նրա մահից հետո աշխատանքը շարունակել և 1966-ին հրատարակության իրագործել է Ս. Ճեմճեմյանը: Միայն հաջորդ հատորներին էր վիճակված համեմատաբար կարճ ընդմիջումներով հրատարակվել, և պատճառը Սահակ Ճեմճեմյանի անձնական ջանքերն ու անձանձիր նվիրումն էին¹³ (Դ.՝ 1993, Ե.՝ 1995, Զ.՝ 1996, Է. 1996, Ը.՝ 1998 թվականներին):

Ձեռագրաց նկարագրության տարածված եղանակը կարգային համարների աճի կարգով ներկայացնելն է, սակայն Վենետիկի Մխիթարյան ցուցակն արված է այլ կերպ՝ ձեռագրերի պարունակած նյութի կարգով: Ցուցակը նման եղանակով հյուսելն ինքնանպատակ չէր, և Բ. Սարգիսյանը, հետո նաև Ս. Ճեմճեմյանը, որպես հիմնական աղբյուր և ուղենիշ ունեցել են Վենետիկի Մխիթարյան մատենադարա-

¹³ Սահակ Ճեմճեմյանի գործունեության այս հատվածը լուսաբանող և խիստ շահեկան, ցավոք, միայն երկու նյութ է շրջանառված Գեորգ Տեր-Վարդանյանի հեղինակությամբ, որոնցից էլ լայնորեն օգտվել ենք սույն նյութը շարադրելիս: Տե՛ս Գ. Տեր-Վարդանյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. Հատոր Դ. – Ծարակնոց- Ճաշոց-Ժամագիրք, Խորհրդատետր-Մանրուսմունք-Կցուրդք. Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան՝ Մխիթարեան ուխտեն, Վենետիկ-Ս. Ղազար, 1993, ԽԷ էջ, 1234 սյուն, 10 էջ տախտակ: Հատոր Ե.–Յայսմաուրք-Գանձարան-Տաղարան-Տոնացոյց. Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան՝ Մխիթարեան ուխտեն, Վենետիկ - Ս. Ղազար, 1995, ԺԸ էջ, 1276 սյուն. «ՊԲՀ», հմր. 2, էջ 245-253 (այսուհետև՝ «Գրախոսություն Վենետիկի ցուցակի Դ. և Ե. հատորներին» ձևով):

նի՝ Մկ. Ավգերյանի կազմած ցուցակը¹⁴՝ նեղ մասնագիտական շրջանակներին հայտնի «Աւգերեան ցուցակ» անունով: Այն, ըստ էության, «հայերեն առաջին գիտական գրացուցակն է»¹⁵, որ կյանքի է կոչվել 1790-ական թվականներից և պարբերաբար լրացվել, որում ներկայացված պահանջների իրագործման լավագույն վկան Վենետիկի Միսիթարյան միաբանության հայերեն ձեռագրերի Մայր ցուցակն է:

Նյութի կարգով հյուսված նկարագրության առավելությունն այն է, որ թույլ է տալիս իրար մոտ, հնարավորության դեպքում¹⁶ ժամանակագրական կարգով տեսնել իրարից ընդօրինակված ձեռագրեր, անել բնագրագիտական նախնական դիտարկումներ, պատկերացում կազմել բնագրային խմբագրությունների վերաբերյալ, միով բանիվ՝ ընդօրինակությունները տեսնել կողք կողքի, ուրվագծել ձեռագրի գրչության պատմական ընթացքը և այլն:

¹⁴ Ցուցակ Վենետիկի, Հատոր Ա., էջ ԺԸ. «Ես ալ ի սեր ճշմարտութեան կը թողում նախ բանիբուն ընթերցողաց՝ համեմատել եւ դատել, թէ որպիսի մեծ զանազանութիւն կայ ընդ մէջ յայնժամու Յանկագրութեան (իմա՝ «Աւգերեան ցուցակի») եւ արդի Մայր ցուցակի յօրինուածութեան միջեւ»:

¹⁵ Գ. Տեր-Վարդանյան, Գրախոսություն Վենետիկի ցուցակի Դ. և Ե. հատորների, էջ 251:

¹⁶ Նշում ենք՝ հնարավորության դեպքում, քանի որ միշտ չէ, որ հնարավոր է լինում ձեռագրի ժամանակը հստակ որոշելը. այս խնդրի մասին տե՛ս Վենետիկի ցուցակի Ա. Հատորի Բ. Սարգիսյանի առաջաբանը:

Նման եղանակը առավելությունների կողքին ունի նաև թերություններ. նոր (ուշ) ստացված ձեռագրերը չեն ընդգրկվում նկարագրվող ձեռագրերի համապատասխան շարքի համապատասխան տեղում, և լրացուցիչ հատորի կարիք է զգացվում¹⁷: Ցուցակի և ձեռագրի կարգային համարի շփոթը կանխելու նպատակով հետագա հատորներում ավելացվեցին Վենետիկի մատենադարանի ձեռագրերի կարգային համարների և ցուցակի համարների համեմատական ցանկեր¹⁸: Այս ցանկերից (Զ. հատորից սկսյալ) ցուցակի և ձեռագրի կարգային համարի համեմատական ցանկերն ավելի հարստանում են՝ ընդգրկելով հետևյալ բաժինները՝ «Ձեռ. թիւ», «Տպագիր թիւ», «Նիւթ»¹⁹, «Թուական», «Հատոր-էջ» բաժինները:

¹⁷ Գ. Տեր-Վարդանյանը պարզել է, որ Ավգերյանի ցուցակում առկա աստվածաշնչական 20 և այլաբնույթ տարբեր ձեռագրեր չկան ցուցակի Ա. հատորում Բ. Սարգիսյանի նկարագրած 24 Աստվածաշունչ մատյանների շարքում. տե՛ս Գ. Տեր-Վարդանյան, Գրախոսություն Վենետիկի ցուցակի Դ. և Ե. հատորների, էջ 251:

¹⁸ Տե՛ս Ցուցակ Վենետիկի, Հատոր Գ. «Ընդհանուր տախտակ մատենադարանի եւ հրատարակութեան թիւերու Գ. Հատորի», էջ 7: Հատոր Դ., էջ 9-10, Հատոր Զ., «Ցանկ հրատարակուած ձեռագիրներու», էջ 1241-1263: Հատոր Ը., «Ցանկ հրատարակուած ձեռագիրներու», էջ 1079-1112, «Համեմատական աղիւսակ ձեռագիրներու եւ Ցուցակ ձեռագրացի թիւերու (Ձեռագիրներու թիւերու կարգով)», էջ 1113-1127: Ը. հատորը խմբագրել և վերջին երկու ցանկը կազմել է Գ. Տեր-Վարդանյանը:

¹⁹ «Նիւթ» բաժինը միաժամանակ պատկերացում է տալիս, թե նյութի կարգով տվյալ բնագիրը՝ ասենք՝ Ներսէս Լամբրոնացունը, ցանկում որե-

Ուշադիր աչքը մեկ այլ թույլ տեղի է նկատում. միջնադարյան շատ հեղինակների գործեր ընդօրինակվել են ժողովածուներում, ուստի նյութի կարգով նկարագրողները կարիք են զգացել սրբագրել արդեն ընտրված պայմանական խորագիրը. այսպես՝ Ջ. հատորում 1029-1062 համարների տակ նկարագրված է «Գրիգոր Նարեկացի» պայմանական խորագիրը կրող բաժինը (ընդամենը՝ ԼԴ. (34) միավոր)²⁰, սակայն պարզ է, որ Գրիգոր Նարեկացու երկերը մեծի մասամբ ընդօրինակվել են այլ հեղինակների երկերի հետ կամ ժողովածուներում, ուստի նկարագրողը փոփոխել է պայմանական խորագիրը՝ «Գրիգոր Նարեկացի. ԺԸ., ԻԲ. եւ Ժողովածոյ» կամ «Գրիգոր Նարեկացի. ԻԴ. եւ Գիրք պիտոյից» ձևով²¹ այն դեպքում, երբ «Ժողովածու» անունով ձեռագրերն արդեն նկարագրված են այլ հատորում:

Ինչպես վերը նշվեց, նկարագրման այս եղանակը տպագիր ցուցակը ժառանգել է Մկ. Ավգերյանի ցուցակից, որի հետ զուգադրումը կբացահայտի տպագրի մի շարք կառուցվածքա-բովանդակային հատկանիշներ:

բորդն է՝ «Ն. Լամբրոնացի. ԽԴ.» ձևով, որ կնշանակի, թե Լամբրոնացու երկեր պարունակող՝ Վենետիկի մատենադարանի 44-րդ ձեռագիրն է:

²⁰ Ցուցակ Վենետիկի, Հատոր Զ., էջ 499-606:

²¹ Նույն տեղում, էջ 567-574, 582-590 և այլն:

Ավգերյանի ցուցակի խորագիրն է «Մատենական ցանկ ձեռագրաց Հայոց եղելոց ի գրատան վանից միանձանց հայոց Մխիթարեանց ի կարգէ սրբոյն Անտոնի Աբբայի, որ ի կղզուջ սրբոյն Ղազարու՝ որ ի Վենետիկ, յօրինեալ յամի Տեառն 1791 եւ ի թուին Հայոց ՌՄԽ. յառաջնորդութեան կրօնիս Գերյարգոյ րաբունապետին մերոյ Տեառն Տեառն Ստեփանոսի Աբբայի²², անմիջական յաջորդի ամենապատիւ Մխիթարայ մեծի Աբբայի՝ հիմնարկողի միաբանութեան»: Ստեփաննոս Աբբայի օրոք միաբանության կարգախոսն է դառնում «հաւաքել շատ թիւով Ձեռագիրներ», ընտիր՝ որակով²³: Մատենադարանում այն ժամանակ առկա (ըստ Ս. Ճեմճեմյանի) 650 ձեռագրի հաշվառում/նկարագրումը Մկ. Ավգերյանն արել է վեց արեղաների և տասնմեկ աշակերտնե-

²² Ստեփաննոս աբբայ Մելքոնյանի (1750-1799) օրոք Վենետիկի մատենադարանի հայերեն ձեռագրերի քանակն էապես աճել է, իսկ ձեռագրերը հավաքելու, ի մի բերելու աշխատանքները ծրագրային ուղղորդված բնույթ են ստացել. «Օրագրի իրագործումին համար կը որդեգրուին բացի Հիմնադրին դրած սկզբունքներէն, սահմանել որոշ միաբաններ, որպէսզի ուղղակի կերպով նուիրուին այս սրբազան առաքելութեան», Յուցակ Վենետիկի, հ. Դ., էջ Զ.: Նրա մի շարք կարևոր ձեռնարկներ՝ Աստվածաշնչի համեմատական բնագրի հրատարակում, հայկական ծեսի վերակազմում, Նոր Հայկազյան բառարանի պատրաստությունը, էապես խթանում են ձեռագրերի հավաքման աշխատանքները:

²³ Հակասություն չկա այն բանի մեջ, որ Ստեփաննոս Մելքոնյանի օրոք այդ աշխատանքները թափ ստացան: Բանն այն է, որ Մխիթար Մեքաստացին նախապես Ձեռագրեր հավաքելու առանձին նպատակ չի ունեցել. նրա խնդիրը աշակերտներին անհրաժեշտ դասագրքերով ապահովելն էր:

րի հետ և հիմնականում գիտական նկարագրությունների նպատակ չի հետապնդել, սակայն, ինչպես կտեսնենք, հենց նրան են պատկանում ցուցակին ներկայացվող սաղմնային, սակայն գիտական պահանջները:

Մա «խստիվ այբբենական-առարկայական կարգով կազմված, սովորական միջին չափի Յայսմաուրքի նման մի մեծադիր հատոր էր, որի մեջ ամեն նյութից հետո տեղ էր թողնված հետագա լրացումների համար»²⁴:

Ինչո՞ւ է Մկ. Ավգերյանի Ցուցակը հավակնում գիտական առաջինը լինել և ի՞նչ գուգահեռներ կան Ավգերյանի և Վենետիկի տպագիր ցուցակի միջև. այս հարցի կոնկրետ պատասխանները տալիս է հենց Ավգերյանն իր ցուցակի «Համառոտ տեղեկություն հանրական վասն նախկին յօրինուածոյ եւ գործածութեան առաջնոյ ցանկիս» խորագիրը կրող առաջաբանում²⁵:

Ավգերյանը քաջ գիտակցում է, որ անում է ուղենշային և իրենից հետո շարունակական ընթացք ստացող աշխատ

²⁴ Գ. Տեր-Վարդանյան, Գրախոսություն Վենետիկի ցուցակի Դ. և Ե. հատորների, էջ 250: Այս ցուցակը Վենետիկի Մխիթարյան միաբանությունում աշխատելու տարիներին տեսել է Գ. Տեր-Վարդանյանը, որից էլ մանրամասն տեղեկություններ ենք ստացել նաև մեր բանավոր գրույցի ընթացքում:

²⁵ Մ. Ճեմճեմյանն այս առաջաբանի գիտական արժեքը կարևորելով՝ զե-տեղել է առանձին՝ Բ. հատորի սկզբում, որը հեղինակի վաղաժամ մահ-վանից հետո նույն տեղում հրատարակեց Հ. Սերոբ Չամուրյանը:

տանք. «Ձի մերս սկիզբն էր աշխատութեան, եւ ոչ կատարած, որ զգործն պսակէ. եւ ահա այլոց մնայ զնոյն վճարել»²⁶:

Մարգարեական կանխագագում կա ասվածի մեջ. Ավգերյանի ցուցակը շարունակաբար լրացրեցին ոչ միայն միաբանության անդամները: Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրացուցակի կազմողներ՝ Բ. Սարգիսյանը, Գ. Սարգիսյանը և հատկապէս Ս. Ճեմճեմյանը նույնպէս Մկ. Ավգերյանի գործը կյանքի կոչողն ու շարունակողն էին: Ավգերյանի համեմատ, որ ուներ օգնական խումբ, այս մարդիկ գործը (հաճախ նաև տպագրության հոգսը) գլուխ են բերել միայնակ՝ խիզախումով և նվիրումով²⁷:

Ստեղծագործ գիտնականի լավատեսությամբ Բ. Սարգիսյանն այն կարծիքին էր, թե ինքը ավարտին կհասցնի Վենետիկի բոլոր ձեռագրերի նկարագրությունը, իսկ մի վերջին հատորում կամփոփի մատենադարանի պատմությունը: Սակայն նա կարողացավ իրականացնել ցուցակի առաջին երկու հատորների տպագրությունը միայն՝ այն էլ առանց ցանկերի:

Սահակ Ճեմճեմյանը գրեթե միայնակ նվիրվեց Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրերի մնացած մա-

²⁶ Ցուցակ Վենետիկի, Հատոր Է., էջ Ժ.:

²⁷ Ցուցակի կազմման ընթացքին առաջացած դժվարությունների մասին տե՛ս Ցուցակ Վենետիկի, Հատոր Ա., էջ ԺԴ.-ԺԶ.: Ցուցակ Վենետիկի, Հատոր Դ., էջ Ա. և այլուր:

սի նկարագրությանը և 3 տարում՝ 1993-1996թթ. տպագրեց ցուցակի կոթողային Դ.-Ձ. հատորները՝ 2054 մեծադիր էջ, շուրջ 750 ձեռագրի նկարագրություն, Է. հատորի համար նախատեսված 170 ձեռագրի նկարագրություն, Ը. հատորի կեսը²⁸: Սահակ Ճեմճեմյանը նպատակ ուներ «ամբողջ հավաքածուի (շուրջ 3500 ձեռագիր) պարունակությունը հայագիտության սեփականությունը դարձնելու՝ նկարագրությունը Թ. հատորով ավարտելով»²⁹, մի ձեռնարկ, որ նվիրյալ գիտնականն իսկապես կարող էր իրականացնել ամբարած հսկայական պաշարի և անմնացորդ նվիրումի միջոցով:

Ըստ էության հե՛նց Մկ. Ավգերյանի առաջաբանն է ուրվագծում ձեռագրացուցակ(ներ)ին ներկայացվող նվագագույն, սակայն կարևոր պահանջներն ու ուղիները, որոնք հետագայում ելակետային եղան թե՛ Հ. Տաշյանի համար

²⁸ Հերթական Է.-Ը. հատորները լույս տեսան հեղինակի պատրաստած սևագիր բնագրի հիման վրա և նրա անհրաժեշտ դիտողությունները հաշվի առնելով, սակայն, ցավոք, նրա վաղաժամ մահից հետո: Բավական է համեմատել Դ.-Ձ. հատորների առաջաբանները, Ճեմճեմյանի մահից հետո հրատարակված Է.-Ը. հատորների հետ, հասկանալու համար Սահակ Ճեմճեմյանի աշխատելու ինքնաբուխ նվիրումը:

²⁹ Սահակ Ճեմճեմյանին վերաբերող նյութը քաղել ենք Գ. Տեր Վարդանյանի «Վենետիկի Մխիթարյան միաբանության ընդհանուր արբահայր Հ. Սահակ Ճեմճեմյան՝ ճգնակյաց վանական-գիտնականը (1939-1996)» մահախոսականից. «Էջմիածին», հմր. Ժ-ԺԱ, 1996, էջ 150:

Վիեննայի³⁰ և թե՛ Բ. Սարգիսյանի և Ս. Ճեմճեմյանի համար՝ Վենետիկի ձեռագրացուցակները կազմելիս:

Որպես ձեռագրաց ցուցակի կարապետ՝ Մկ. Ավգերյանը մանրամասնորեն ներկայացնում է անելիքի նպատակը, խնդիրներն ու իրագործման եղանակները³¹: Իր մտքերն ու մտահոգությունները նա արտահայտում է՝ արդեն ուսումնասիրող բանասերին ներկայացվող պահանջները նկատի ունենալով: Մկ. Ավգերյանը երկակի վերաբերմունք ունի արած գործի նկատմամբ. ցանկի պահանջվածության և կարևորության գիտակցում, այն նախաբանով սկսելու անհրաժեշտության մանրամասն մեկնաբանում մի կողմից և մյուս կողմից՝ գրասերների աչքում «անյիշատակ» թվալու խնդիրը³²: Այս զգուշավորությունն այլևս չի դրսևորվում Բ.

³⁰ Տակավին պարզելիք է Հ. Տաշյանի և Մկ. Ավգերյանի ցուցակների կապը:

³¹ Համեմատության համար նշենք, որ այսօր ձեռագրացուցակներին կցված խնամքով հյուսված գիտական առաջաբանները ոչ միայն նպատակահարմար են, այլև կարևոր թե՛ իրենց ճանաչողական արժեքով, քանի որ քննում-ներկայացնում են ցուցակի կազմման պատմությունը, ձեռագրերի վերաբերյալ հարուստ նյութ են պարունակում, թե՛ պրակտիկ կողմով, քանզի անգնահատելի օգնություն են ուսումնասիրողին ձեռագրերի հարուստ աշխարհում արագ և ճիշտ կողմնորոշվելու համար: Այնինչ Մկ. Ավգերյանի ժամանակների համար դա, իսկապես, գիտական սխրանք պիտի համարել:

³² Նման «թեական» վերաբերմունքը պատասխանատվություն զգացող անհատի մոտ անսպասելի չէր, և հայ գրականության պատմության մեջ

Սարգիսյանի, առավել ևս Ս. Ճեմճեմյանի աշխատանքում երկուսն էլ ունեն իրենց աշխատանքը գիտական հասարակությանը ծառայեցնելու հստակ և կոնկրետ ինքնագնահատական: Հատկապես Ս. Ճեմճեմյանի՝ Դ. հատորից սկսյալ ցուցակի առաջաբանում զետեղած մատենադարանի պատմության քննության մեջ առանձնահատուկ ջերմությամբ են հիշատակված հայ ձեռագրական աշխարհին անվերապահորեն նվիրված անհատների անունները: Նրա գնահատականներն աչքի են ընկնում մի զուսպ և անմոռանալի շոայլությամբ՝ որպես ժամանակակից մարդու հիշատակարան. «Քաղցր է ինձի հոս հրապարակաւ դրոշմել անոնց անունները, որոնք գործած են լուռ եւ անաղմուկ»³³:

Որպես տեսակի մեջ առաջին նախաձեռնություն, ցանկին առաջաբան կցելու Ավգերյանի մտահոգությունը բխում է կատարելիք աշխատանքի կարևորության և պատասխանատվության գիտակցումից: Այս առաջաբանն այսօր արդեն ձեռագրագիտության պատմության, ինչպես նաև ձեռագրացուցակների կազմման պատմությունը լուսաբանող կարևոր և հիմնային կետերից է: Ըստ էության Մկ. Ավգերյանը կատա-

քիչ չեն նման օրինակները. հիշենք, օրինակ, Կորյունի «Վարք Մաշտոցի», Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն Երզոց երգոյն» երկերի, Գարեգին Սրվանձտյանցի «Մասունցի Դաւիթ կամ Միերի դուռ» պատումի առաջաբանները:

³³ Ցուցակ Վենետիկի, Հատոր Դ., էջ Բ.:

րել է թե բնագրագիտական, թե ձեռագրագիտական խիզախումներ, սրանք ոլորտներ էին, որոնցում մխիթարյանները տարիներ ի վեր գործում էին մի տեսակ ենթագիտակցական, ի վերուստ տրված տաղանդով:

Կատարված աշխատանքներն ըստ Ավգերյանի հետևյալն էին.

ա. Նույն մատյանի մեջ առկա նյութերի անվանական բաղդատում. «Եւ տեսաք զյոզնախիտ հոծութիւն բազմատեսակ նիւթոց ի մի եւ նոյն մատենի, տաժանական գործ համարեցաք նիւթապէս եւեթ նշանակել զայնս, ո՛չ վասն մեր ինչ ասեմ զտաժանումն... այլ վասն բանասիրաց, որ մատչին ի յոյզ խնդրելեաց»: Այսպես հնարավոր էր դառնում գտնել, թե փնտրվող ճառը որ մատյանում է, քանի օրինակ կա:

բ. Ցանկը դասավորել այնպես, որ փնտրողը կարողանա որպես հայելում տեսնել մատենադարանում առկա մեծ կամ փոքր, ծանոթ կամ անծանոթ մատենագրի կանկրետ գործը, նշել նրա սկզբնատողն ու վերջը, ըստ որի և կազմվեց առանձին, ըստ էության նյութերի մի ցանկ մատենադարանում առկա երկերի: Այս դրանք ցրվեցին նաև այբբենական կարգով՝ հեղինակների անուններին կից՝ որ չափով, որ ձեռագրում, քանի օրինակով, գրատան որ խորշում, որ

թղթահամարով են դրված, այս մանրամասները նյութերի ցանկը չէր տալիս³⁴:

Կատարված ծավալուն աշխատանքն Ավգերյանը ներկայացնում է մի քանի կետով.

ա. Ձեռագրերում առկա նյութերի առանձին-առանձին դիտարկում, «զի մի՛ ինչ նիւթ կարելոր արտաքոյ մնասցե ցանկիս»³⁵:

բ. Հին և վնասված ձեռագրերի նորոգում:

գ. Պահպանման խորշերի, հնատիպերի և ձեռագրերի կարգային համարների կարգավորում:

դ. Աշխատանքներ գրացուցակում:

Մկ. Ավգերյանը որոշ խորհուրդներ է տալիս, «սիրով յորդոր լինելով» պարտադրում գործողություններ, որոնք այսօր ձեռագրերի պահպանության և գործածության հստակ պահանջներ են դարձել.

ա. Գրատան ձեռագրերին պետք է խնամքով վերաբերվել. ոչ միայն նորոգել, այլև նրանց պահպանման կատարյալ պայմաններ ապահովել:

բ. Նոր ձեռագիր ստանալուց չհապաղել տեղեկություններն անմիջապես գրանցելու. «Ապա թէ ոչ՝ ի գուր լինի բովանդակ ճիգն ցանկիս, զի թէ ոչ յաւելցեն ի սա

³⁴ Ցուցակ Վենետիկի, Հատոր Է., էջ Ժ-Ը:

³⁵ Նույն տեղում:

յետագայ եկեալքն, անպէտ լինի այնուհետեւ գործածութիւն սորա»:

գ. Նախկին կարգային համարները ոչ մի դեպքում փոփոխության չենթարկել, հակառակ դեպքում փոփոխել համապատասխան համարն ամենուր:

Հաջորդ՝ «Ինչ ինչ գիտելիք ի մասնաւորի յընթացս մատենական ցանկիս» հատվածում, ներկայացնում է ձեռագրերի նկարագրության 10 կետից բաղկացած բացատրություններ, որոնք չեն կորցրել իրենց թարմությունը, հետաքրքիր են ձեռագրացուցակների պատմությունն ուսումնասիրելու առումով և զուգահեռելի տպագիր ցուցակի որոշ սկզբունքների հետ: Ավգերյանը կարևոր է համարել հետևյալ կետերը.

ա. Նշել ձեռագրի գրչության, հեղինակների ապրած ժամանակաշրջանները՝ տակավին անհայտ նույնանուն հեղինակների, «որք թերեւս ըստ ժամանակին ի յայտնութիւն եկեացեն», շփոթը կանխելու նպատակով:

Թե՛ Բ. Սարգիսյանը և թե՛ Ս. Ճեմճեմյանը նույն սկզբունքով են առաջնորդվում: Նյութի կարգով ցանկագրման դեպքում միշտ չէ, որ հնարավոր է եղել ժամանակագրական կարգ պահել, սակայն այդ մոտեցումը հնարավորինս պահպանված է:

բ. Հեղինակների անխորագիր կամ անանուն երկերը նախապէս ճշգրտվել են ըստ հնարավորության և

տեղադրվել համապատասխան հեղինակի անվան տակ, Ավգերյանը հստակ գիտակցում է՝ ուսումնասիրողը հաճախ ցանկություն ունի իմանալու, թե տվյալ ստեղծագործությունից քանի օրինակ կա մատենադարանում, որոնք են հնագույնները, որոնում է հեղինակի անվան հիշատակություն՝ հաշվի առնելով ձեռագրի տարաբնույթ մանրամասներ: Տողատակերից հաճախ խոսում է հմուտ ձեռագրագետը. «Եւ վերնագրաց զգուշութեամբ պարտ է հաւատս ընծայել, մանաւանդ երբ չեն գրեալ ի դիմաց հեղինակին խոնարհական եզերօք կամ անսեթեւեթ քանիւք, այլ՝ ըստ հաճոյս գրչաց ներբողական բարդաբանութեամբ կարգեալ»³⁶:

գ. Բնագրագետի համար հայտնի իրողություն է, որ բնագրի ինքուրույնությունն արտահայտվում է նախ խորագրի մեջ: Մակայն խորագրային միօրինակություն չունենք, քանի որ ընդօրինակությունները տարբեր են, խորագրերը՝ նույնպես, հաճախ նույն խորագրով երկը վերագրված տարբեր հեղինակների: Այդ է պատճառը, որ Ավգերյանը նույնպես կարևորում է խորագրային տարբերակները դրսևորել նկարագրության մեջ: Ավգերյանի այս պահանջն առավելապես դրսևորվում է Վենետիկի տպագիր ցուցակի առաջին իսկ ձեռագրերի նկարագրությունից:

³⁶ Նույն տեղում, էջ Թ:

Հայտնի է՝ ձեռագրերն իրենց բովանդակությամբ իրար չեն կրկնում (եթե պարզապես նույնությամբ ընդօրինակելու (բազմացնելու) նպատակ չեն հետապնդել), և, բնականաբար, ստացվել է, որ նույն հեղինակի երկն ընդօրինակված է այլ հեղինակների երկերի հետ. Ավգերյանի ցուցակը փորձում է դյուրացնել նաև այս հարցը՝ նյութի ընդհանուր խորագրի կողքը նշելով նաև այլ ձեռագրում առկա խորագրերը տարբեր դրսևորումներով:

Նյութի կարգը պահպանած տպագիր ցուցակն այս հարցը լուծում է ինքնին. եթե Ավգերյանի ժամանակ նկարագրությունը համառոտ էր (հետագա լրացնողները, ինչպես վկայում է Բ. Սարգիսյանը, հաճախ զլացել են ամբողջական խորագիրն անգամ նշելու), ապա տպագիրը խորագրերը նկարագրում է ամբողջական ձևով՝ հարկ եղած դեպքում լրացնելով բացթողումները³⁷:

³⁷ «Ավգերեանէն վերջ եկող ցուցակագրողներէն ոմանք նոյն ոճը չէին պահպանած, այսինքն՝ Ձեռագիրներու իսկական կամ մակաբերական տիտղոսները միայն երկտողով արտագրած են, յաճախ զանց ընելով նշանակել անոնց գրի եւ նիւթի տեսակը... աւելի բանաւոր եւ ըմբոն համարեցայ ընդհանուր Ձեռագրաց պատկանող պատմական այդ դերը վերապահել Մայր ցուցակիս վերջին հատորին, եթէ Տէրը կամենայ, խորհուլով մանաւանդ որ մինչեւ այն ժամանակ դեռ ուրիշ Ձեռագիրներ եւս հաւանական է որ մտնեն հաւաքմանս մէջ», Յուցակ Վենետիկի, Հատոր Ա., էջ ԺԲ.:

դ. Որպեսզի երկակի ընկալման շփոթ չլինի, ընդօրինակվել են նաև գրչության, ստացողի և այլ հիշատակարաններ՝ տառ-տառ՝ «անայլակ պահելով զվրիպանս գրչաց. մանաւանդ զի սովաւ ծանուցանի հմտութիւն կամ անհմտութիւն գրողին, եւ ըստ նմին կշռադատի հանգամանք մատենին. *յորս է զի առաւել հաւատալի է անհմուտ եւ պարզամիտ գրչի՝ քան զհտնաւորի*» (ընդգծումը մերն է – Լ.Հ.: Այսօր բնագրագիտության մեջ հաճախ մոռացության մատնված այս միտքը կարևորում ենք):

Հիշատակարանների ամբողջական ընդօրինակման սկզբունքը տպագիր ցուցակում պահպանված է մասամբ: Կարևորելով հիշատակարանների ճանաչողական դերը, Բ. Սարգիսյանը սակայն Փառքի հատվածները հանում է³⁸:

Հիշատակարանները Վենետիկի տպագիր ցուցակում արված են ավանդական եղանակով. նախ նշված են գրչության հիշատակարաններն՝ ըստ կարգի, համապատասխան նշում-բացատրություններով, ապա՝ հետագա հիշատակարանները: Հետագա անթվական հիշատակարանները շարադրանքում թվագրում չունեն, սակայն այդ բացը միանգամայն լուծված է անվանացանկերում³⁹:

³⁸ Ցուցակի կազմման սկզբունքների մասին տե՛ս նույն տեղում, էջ ԺԷ.:

³⁹ Այդ մասին տե՛ս Գ. Տեր-Վարդանյան, Գրախոսություն Վենետիկի ցուցակի Դ. և Ե. հատրնների, էջ 248:

ե. Մկ. Ավգերյանը կարևորում է հնագրությունը, քանի որ այն կարևոր միջոց է հատկապես անթվակիր ձեռագրերի գոնե մոտավոր ժամանակաշրջանը պարզելու. «Պարտ է քաջ դիտել զհնութիւն գրոյն եւ զձեւ ասացուածոյն»⁴⁰:

Եթե Ավգերյանի ժամանակ ձեռագրագիտությունը նոր քայլեր էր անում, ապա Ս. Ճեմճեմյանի նկարագրության ընթացքին այս ասպարեզն արդեն առաջացած էր. Մաշտոցի անվան Մատենադարանն ակտիվ որոնումների շրջան էր ապրում ձեռագրերի նկարագրության բազմաբնույթ բանավեճերի, քննարկումների արդյունքում: Դ. հաստրի առաջաբանում Ս. Ճեմճեմյանը ցավով նշում է, որ նյութը նախապես պատրաստ լինելու և ավելորդ ժամանակ չծախսելու նպատակով է, որ Մաշտոցի անվան Մատենադարանի նվաճումներն այս ասպարեզում ներդնել չի հաջողվում⁴¹: Մաշտոցյան

⁴⁰ Յուզակ Վենետիկի, Հատոր Ա., էջ ԺԳ.: Այստեղ ուշագրավ դիտողություններ է անում եղծված տեղանունների և գրչանունների, կտրած-հանած հիշատակարանների մասին:

⁴¹ «Մենք ալ ըրած ենք նոյնը, առանց որդեգրելու նորագոյն և կատարելագոյն կերպեր, որոնք վերջերս սկսան հրապարակի վրայ փայլիլ հետեւելով Մաշտոցեան Մատենադարանի թելադրած եւ որդեգրած կերպին: Արդարեւ քսանհինգ տարիներ առաջ, երբ ունեինք կեանքի աշխոյժը եւ ձեռնարկեցինք այս գործին, դեռ չէին յայտնուած Մաշտոցեան Մատենադարանի ցուցակները, որպէսզի ըլլար մեր ուղղիչը, իսկ ներկայիս, տպագրութիւնը սկսելէ առաջ, ուզել վերատեսնել արդէն իսկ պատրաստ

Մատենադարանի հետ կապը հետագա շրջանում էլ Սահակ Ճեմճեմյանը պահպանել է ջերմ և պատրաստակամ նամակագրությամբ⁴²:

գ. Հայտնի է, որ մեկ ձեռագիրը կարող էր ունենալ մի քանի ստացող, սակայն ձեռագրի պատմությունն ուսումնասիրելու համար հատկապես կարևոր է առաջին ստացողը՝ այսինքն՝ պատվիրատուն, որ հաճախ նաև գրիչը կարող էր լինել: Այդ շփոթը կանխելու նպատակով Ավգերյանը որոշ պարզաբանումներ է մտցնում «ստացող», «վերջին ստացող» եզրույթների վերաբերյալ. «Ո՛ր ուրեք արձակ գրի ի յիշատակարանս *ստացող գրոյս*, այն է առաջին ստացողն, այսինքն՝ նա, որ ծախուք իւրովք գրեալ տուեալ է զայն գիրք... իսկ այլք յետինք կոչեն զանձինս *վերջին ստացող* կամ այլով իւիք նշանաւ յայտ առնեն՝ թէ *ոչ են առաջին ստացող*: Չայս

գործ մը՝ կը նշանակէր աւելի եւս յետաձգել հատորիս հրատարակութիւնը»։ Յուցակ Վենետիկի, Հատոր Դ., էջ Ա.:

⁴² Հ. Անասյանի դիվանի մեջ կան «գիտական մեծ արժեք ունեցող նամակներ «Հ. Սահակ» ստորագրությամբ, կապը պահել է ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի, պատմական գիտ. դոկտոր Գեորգ Տեր-Վարդանյանի հետ. այդ մասին տե՛ս Գ. Տեր-Վարդանյան, «Վենետիկի Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Հ. Սահակ Ճեմճեմյան՝ ճգնակյաց վանական-գիտնականը» հոդվածը, էջ 148:

բարևոք պարտ է դիտել, զի երբեմն զայսպիսեաց կախի որոշումն հնութեան եւ ոչ հնութեան մատենին»⁴³:

է. Առ այսօր բարդ համարվող խնդիր՝ ձեռագրի հնությունը երբեմն սխալմամբ կապել արտաքին հանգամանքների հետ նկատվել է տակավին Ավգերյանի կողմից. եթե ձեռագիրը մաքուր և անխաթար պահպանված է, ուրեմն համարվում է համեմատաբար նոր⁴⁴ (հայտնի է՝ խոնավացած մագաղաթն ավելի հին է թվում առաջին հայացքից, քան իսկապես հին, սակայն լավ պահպանվածը): Ավգերյանը զգուշացնում է չշտապել, հին կամ նոր համարել ձեռագիրը այլ հնագույն և նորագույն օրինակների հետ համեմատելուց հետո միայն արձանագրել հնությունը:

ը. Ձեռագրերի պատմությունը ինչ-որ կերպ նաև այդ հարստությունը պահպանած կամ պահպանող մատենադարանի պատմությունն է. Մկրտիչ Ավգերյանը ժամանակին հեղինակել է նաև Մխիթարյան մատենադարանի 50-ամյա

⁴³ Յուզակ Վենետիկի, Հատոր Է., էջ ԺԴ.: Նկատենք, որ այս տարբերակումը չի դրսևորված Վենետիկի ցուցակում. հիշատակարանային ողջ նյութը մեկտեղված է «Յիշատակարանք» ընդհանուր խորագրի ներքո՝ հերոական թվահամարով, իսկ բուն տարբերությունները մասամբ դրսևորված են ցանկերում. տե՛ս Գ. Տեր-Վարդանյան, Գրախոսություն Վենետիկի ցուցակի Դ. և Ե. հատորների, էջ 247-248:

⁴⁴ Ձեռագրերի հետ աշխատելիս ինքներս առիթ ենք ունեցել նման «վրիպման» գայթակղության առաջ կանգնել, և հարցը պարզաբանում է ստացել Գ. Տեր-Վարդանյանի միջոցով:

պատմությանը մինչև 1800թ. (Ժամանակագրական պատմությունին 50 տարուան դիպուածոց մեր Միաբանութեանը)⁴⁵: Այդ նյութի սաղմնավորման մեջ, գուցե, էական էին նաև ամեն առանձին ձեռագրեր Մխիթարյան միաբանություն հասնելու պատմության պատառիկները, որոնք Ավգերյանի ցուցակում նույնպէս կարևորված էին: «Կային եւ ոչ սակաւ ձեռագիրք, որոց չգոյր յիշատակ. եւ յայցանէ գոմանս հարցուփորձի ստուգեալ նշանակեցաք եւ գայլսն անորոշ թողաք»⁴⁶:

Շուրջ 600 և ավելի (ըստ Ս. Ճեմճեմյանի՝ 650) մեծ ու փոքր, հին ու նոր ձեռագրերի նկարագրությամբ Մկ. Ավգերյանը ներկայացնում է մատենադարանում հանգրվանելու նրանց պատմության պատառիկները՝ «ի պայծառութիւն գրատանս, եւ յօգուտ ուսումնասիրաց՝ եւ ի դիւրութիւն գրագիտաց»՝ աշխատանքն ամփոփելով 1792թ. մարտի 1-ին:

Մատենադարանի պատմությունը հեղինակելու նպատակ ունեցել է նաև Բ. Սարգիսյանը, սակայն հսկայածավալ աշխատանքը գոնէ ի սկզբանէ անհնարին է թվացել նրան: Ա. հատորի առաջաբանում նա հույս է հայտնում, թէ վերջին հատորում հնար կլինի գետեղել նաև մատենադարանի պատմությունը, որը սակայն հեղինակի վաղաժամ մահվան պատճառով չի իրականանում: Շնորհակալ այդ աշխատանքն իրակա-

⁴⁵ «Բազմավէպ», 1854, հմր. 5, էջ 84:

⁴⁶ Ցուցակ Վենետիկի, հ. Է., էջ ԺԴ:

նացնում է Ս. Ճեմճեմյանը, նախ «բոլոր թերթիկները մեկիկ-մեկիկ կարդալով, խնամելով ու կարգավորելով, մշակեց ու քարտագրեց վանքի երեքդարյա՝ անխնամ մնացած դիվանը», ապա ցուցակի Դ-Ձ հատորների առաջաբաններում առկա դիվանային փաստաթղթերի հիման վրա տառացիորեն հյուսում է մատենադարանի հարյուրամյա պատմությունը՝ ընթերցողի աչքի առջև վերածնելով նախորդների պանծալի հիշատակը: Այս ուսումնասիրությունը կարևոր է նրանով, որ լրացնում է մեր գիտելիքները ոչ միայն Վենետիկի Մխիթարյան միաբանության, այլ նաև այս հաստատության հետ կապ ունեցած այլ օջախների հարաբերությունը, մասունք առ մասունք ներկայացնում և գնահատում մատենադարանի ամեն մի կարևոր ձեռագիր կամ հավաքածու, շրջանառության մեջ դնում դիվանական ուշագրավ նյութ, այլ մատենադարանների ուսումնասիրության համար կարևոր դիտարկումներ անում: Սահակ Ճեմճեմյանի անթաքույց ջերմությունն ու հպարտությունը երևում է մատենադարանի պատմության ամեն մի հատվածից. հիրավի՛, շնորհակալության արժանի աշխատանք:

Ինչպիսի փոխկապակցվածություն էլ ունենան այս երկու ցանկերը, այնուամենայնիվ տպագիրը նախատեսված էր այլ չափանիշներով աշխատելու համար: Ուստի սպասելի էր նաև այն, որ Վենետիկի ձեռագրացուցակի հիմնական կազ-

մող Ս. Ճեմճեմյանը մեծ նշանակություն պիտի տար ձեռագրացուցակին կցվող ցանկերին: Գ. հատորից սկսյալ, համեմատական տախտակները, տարաբնույթ ցանկերն աստիճանաբար ավանդույթ են դառնում Վենետիկի Մխիթարյան ցուցակի համար: Այս գործն իր անձնական պատասխանատվությամբ և ջանքերով իրականացնում է բազմազբաղ գիտնականը: Գիտական աշխարհում այդ ցանկերն արդեն արժևորված են իրենց ճշգրտությամբ և այլ ցուցակներում առկա ցանկերի համեմատությամբ⁴⁷: Հատորից հատոր Ս. Ճեմճեմյանն ինքը փորձել է կատարելագործել առանց այդ էլ արագ և բարդ իրագործվող աշխատանքը: Նորություն էին Ե., Զ. հատորների վերջում ըստ նյութի պահանջի զետեղված տաղերի և աղոթքների ցանկերը⁴⁸, որոնցով շրջանառության մեջ է դրվում միջնադարյան հայ քնարերգության մի շատ կարևոր և բովանդակալից մասը: Միայն ցանկերի ենթախորագրերը խոսում են կատարած աշխատանքի մասին. այսպես՝ Ե. հատորում առանձնացված են հե-

⁴⁷ Ցանկերին տրված գնահատականները տե՛ս Գ. Տեր-Վարդանյան, Գրախոսություն Վենետիկի ցուցակների Դ. և Ե. հատորների, էջ 248-250:

⁴⁸ Ցուցակ Վենետիկի, Հատոր Ե., Ե. Տաղերու եւ գանձերու այբբենական ցանկ, էջ 1105-1168: Հատոր Զ., Ա. Ցանկ աղօթքներու, Բ. Ցանկ տաղերու, էջ 1133-1142, 1143-1146:

տկյալները. «Տաղերու և գանձերու հեղինակներ»⁴⁹, «Տաղեր և գանձեր տերունական տօներու», «Տաղերի և գանձեր նուիրուած սուրբերու», «Տաղեր և գանձեր աշխարհիկ նիւթերու»⁵⁰, «Տաղերու և գանձերու այբբենական ցանկ»⁵¹:

Մկ. Ավգերյանը ուսուցիչ էր և չի մոռացել իր առաքելութիւնը նաև ցուցակի կազմման ժամանակ: Քաջ գիտակցելով, որ բանաստեղծութիւնն ավելի լավ է մտապահվում, նա ներկայացնում է համապատասխան հեղինակի գործը գտնելու կարևորագույն սկզբունքը, որը և նյութի կարգով կազմված ձեռագրացուցակի հիմնական սկզբունքն է:

ԿԱՆՈՆ ՀԱՅԵԼՈՅ ՅԱՅՍ ՄԱՏԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ ՁԵՌԱԳՐԱՅ.

ՈՒՐ ԽՆԴԻՆԵԼԻ Է ԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ, ՔԱՆ ԳՈՐԾՈՅՆ

Փոյթ գտանես՝ գոր աստ խնդրես,

թէ զհեղինակ՝ գրոյն զըննես,

⁴⁹ Ցանկում նույն անվանումները տարբերակված են մասնավոր տեղեկություններով և համապատասխան էջի նշումով. «Մահակ վրդ., էջ 923, - Մակուեցի եպս., էջ 759» և այլն. Յուզակ Վենետիկի, հատոր Ե., էջ 1087:

⁵⁰ Այս ցանկում առանձնացված են ազահության, ապաշխարության, դդումի, զանգակատան, վարդի և բլբուլի, խաղողի (արբեցության) և այլ տաղեր, քաղաքներին նվիրվածներն առանձնացված են. տե՛ս նույն տեղում, էջ 1101-1104:

⁵¹ Այս ցանկի առանձնահատկությունն այն է, որ խորագրի կողքը՝ փակագծերում, նշված է նաև հեղինակի անունը. «Ամէնօրինեալ տաճար փառաց» (Մինաս), էջ 858» ձևով. նույն տեղում, էջ 1107:

զի գործն երբէք՝ չերեւի քեզ,
թէ զհեղինակն՝ առնես անտես:
Ապա թէ նախ՝ ի գործ դիմես,
թերեսս դերես՝ ինչ ելանես.
Կամ թուղթ յուրվ՝ դարձուցանես,
զի տեսանես, թէ զանուն *Տէ՛ւր*:
Իսկ ուր գործն է՝ անհեղինակ,
կամ ծանուցեալ՝ այլօրինակ,
անուն նիւթոյ՝ որ հասարակ,
անդէն լիցի՝ քեզ օժանդակ:
Այլ թէ ի մէնջ՝ ինչ առան ցանք,
լէ՛ր կարեկից՝ որպէս զիտակ,
գոր ինչ էաք՝ արդամբք ցուցաք,
բազմավրէպ՝ մարդիկ տկարք:

Այս էր կարևորում Մկրտիչ Ավգերյանը՝ հայերեն ձեռագրերի ցուցակի մեր առաջին գիտական համակարգողն ու նորարարը:

Այլ կերպ է ամփոփում տարիների ի՛ր տքնանքի արդյունք՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեանց ի Վենետիկ» կոթողային աշխատությունը բազմավաստակ վանական-գիտնական Սահակ Ճեմճեմյանը. «Շնորհակալութեան զգացումներով կ'արձանագրենք այս ոսկեմատեանին մեջ՝

անունները մեր միաբաններուն եւ ազգայիններուն, որոնք աշխատած են հեռատես կերպով, զոհողութեան հոգիով եւ մանաւանդ՝ սրբազան առաքելութիւն մը ընելու գիտակցութեամբ՝ հանդէպ Հայ ազգին: Յարգանք իրենց սուրբ յիշատակին»⁵²:

Հիրավի, հե՛նց իրեն՝ Սահակ Ճեմճեմյանին տրված արժանի գնահատականը:

Այսպիսով՝

ա. Վենետիկի Միսիթարյան միաբանության ձեռագրերի ընտիր հավաքածուի նկարագրությունն ու հրատարակումը գիտական սխրանք էր՝ իրականացված ոչ մեկ կազմողի անհատական ջանքերով: Որքան էլ որ նկարագրողները ձգտել են միօրինակության, այնուամենայնիվ աշխատառճի յուրահատկություններն ու կենսափորձը դրսևորվում են, թվում է, այնքան էլ անհատականություն չպահանջող այս աշխատանքում: Եվ այս գործում անուրանալի է վաստակաշատ գիտնական, հոգևոր գործիչ Սահակ Ճեմճեմյանի դերը:

բ. Վենետիկի ձեռագրացուցակը ժառանգել է Մկ. Ավգերյանի կազմած ցուցակի լավագույն ավանդույթները և հրաշալիորեն զարգացրել դրանք:

գ. Ավգերյանի Ցուցակը հայերեն ձեռագրերի գիտական առաջին ցուցակն է, քանի որ առաջաբանում կազմողը

⁵² Ցուցակ Վենետիկի, Հատոր Զ., էջ 2Ա.:

հստակ ներկայացնում է ձեռագրագիտական, բնագրագիտական հարցերի ուրվագծված շրջանակ և առաջարկում լուծումներ՝ ի նպաստ նաև հետագա նկարագրողների:

դ. Նյութի կարգով հյուսված ձեռագրացուցակը հնարավորություն է տալիս ավելի պարզ տեսնել ձեռագրի պատմության որոշ դրվագներ և հարուստ նյութ է բովանդակում ձեռագրագիտական ամենատարբեր հարցերի լուծման համար:

ե. Վենետիկի Միխիթարյան միաբանության ձեռագրացուցակն առ այսօր միջնադարագետի սեղանի չհնացող գիրքն է. մնում է հուսալ, որ մոտ ապագայում հնարավոր կլինի տեսնել նաև մնացյալ ձեռագրերի հոգատար և խնամքով նկարագրությունները:



ՊԱՐՈՒՅՐ ՍԱՀԱԿՅԱՆ

*Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

Ղ. ԱԼԻՇԱՆԻ «ՄԻՍԱԿԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

*Հայաստանը ո՛չ ոք այնպես չգիտե
ինչպես նա, ո՛չ ոք այնքան չի սիրել,
որքան նա, այս մեծ հայրենասերը:*

Ավետիք Իսահակյան

Ղևոնդ Ալիշանը Վենետիկի Մխիթարյան Միաբանության փառքերից է և թողել է հսկայական գիտական, բանասիրական, գրական, պատմագրական ժառանգություն: Նրա բազմաքանակ աշխատությունների մեջ առանձնանում են չորս ստվար հատորները՝ նվիրված Հայաստանի 15 նահանգ-

ներից չորսին: Դրանք են՝ «Շիրակը» (1881), «Միսուանը» (1885), «Այրարատը» (1890), «Միսականը» (1893):

Միսականը կամ Սյունաց աշխարհը Մեծ Հայքի մեծ տարածք ունեցող նահանգներից է, որի մի մասն է միայն Հայաստանի Հանրապետությունում, իսկ մյուս մասերը՝ Նախիջևանը և Արցախի հարակից տարածքները, Խորհրդային իշխանությունները հանձնել են Ադրբեջանին: Ղևոնդ Ալիշանի գրքում Միսական աշխարհն իր ամբողջության մեջ է ըստ հայ պատմիչների Մովսես Խորենացու և Ստեփանոս Օրբելյանի:

«Միսական» հատորն ունի պատմագրական ու աշխարհագրական եզակի արժեք: Նրանում փաստական կողմը չափազանց հարուստ է մեծաքանակ վիմագիր արձանագրությունների վերձանված բնագրերով ու եզակի հիշատակարաններով:

Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատությունից պարզ է դառնում, որ XIII դարում Սյունիքն ունեցել է ընդարձակ տարածքներ: Իր պատմության վերջում Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Մերվել եմ Միսական մորից և Օրբելյան հորից, վերջինս, որ Տարասայիճ էր կոչվում և տի-

րում էր Բաղքից մինչև Այրարատ»:¹ Նույն պատմության մեջ նա մոնղոլական Հուլաղու խանին բնութագրում էր հետևյալ ձևով. «Եվ այսպես անչափ ու անսահման քաջություններ ցույց տվեց: Իսկ քանի որ շատ սիրում էր քրիստոնյաներին, ուստի և քրիստոնյա բոլոր ժողովուրդները ինքնական ենթարկվում և օգնում ու աջակցում էին նրան»:²

Թե Ղևոնդ Ալիշանի «Միսական» երկից և թե XIII դարի ուրիշ գրչագիր աղբյուրներից պարզ է դառնում, որ այդ ժամանակահատվածի Սյունիքը եղել է հարուստ ու զարգացած նահանգ, և նրա տանուտերերի հետ հաշվի են նստել հզոր նվաճողները:

Լոնդոնի Բրիտանական թանգարանի հայկական թիվ 118 ձեռագիրը բացառիկ տեղեկություններ է հաղորդում XIII դարի Սյունիքի Օրբելյան իշխանների մասին: Սյունիքի տեր Տարասայիճ իշխանի գերեզմանի վրա փորագրված է եղել նույնիսկ իշխանաց իշխան տիտղոսը:³ Նույն ձեռագրում առկա է Աստվածատուր գրչի հիշատակարանը, որը վկայում է, թե Սյունիքի տեր Տարասայիճ իշխանը իր պաշտելի

¹ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 379:

² Նույն տեղում, էջ 323:

³ St' u F. Conybeare, A catalogue of the Armenian manuscripts in the British museum, London, 1913, p. 294:

Տաթևի վանքին է նվիրել չորս գյուղեր՝ իրենց դաշտերով ու այգիներով: Այդ գյուղերն էին՝ Ծնհեր, Խոտագետ, Յուր և Հաժիս: Եվ եթե որևէ մեկը հանդգնի այդ գյուղերը վերցնել Տաթևի վանքից, ապա թող Հուդայի ճակատագրին արժանանա և խաչ բարձրացվի, իսկ եթե թուրքերը աչք տնկեն, ապա թող իրենց փեղամբարի (մարգարեի) հետ դժոխքի բաժին դառնան: Նույն հիշատակարանում նշվում է, թե Սյունիքը ենթարկվում էր Հուլաղու խանին, «և ինքն իշխեր ամենայն իշխանութեանց աւագին»:⁴

Հենվելով հայ պատմիչների հաղորդումների վրա՝ Ալիշանը ներկայացնում է Սյունիքի նշանավոր իշխաններին իրենց փառապանծ և խոտելի գործերով: Օրինակ, նա փառաբանում է V դարի Հայաստանի մարզպան Վասակ Սյունեցուն ըստ Կորյուն վարդապետի՝ «այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստծոյ»:⁵ Կորյունի վկայությամբ Վասակ Սյունեցին մեծապես օգնել է Մեսրոպ Մաշտոցին Սյունյաց աշխարհի վանքերում դպրոցներ բացելու ազգափրկիչ գործում: Սակայն Ալիշանը չի մոռանում ավելացնել, թե Եղիշեն ու Ղազար Փարպեցին խիստ քննադատում են Վասակի հետագայի գործունեությունը՝ կապված Ավարայրի

⁴ Նույն տեղում, էջ 295:

⁵ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 2005, էջ 64:

ապստամբության հետ:⁶ Այսօր գիտնականների համար շատ հետաքրքիր է, որ Միսական աշխարհի մեջ մտել են ներկայիս Գեղարքունիքի մարզը և հռչակավոր Սողբը: Իսկ Սևանա լիճը եղել է այդ երկրամասի զարդերից. հատկապես հռչակավոր են եղել լճի կղզու վրա գտնվող վանքերը: «Միսական» հատորը նկարագարո՞ւ է. այդ նկարները, որոնք գծանկարներ են, զարմանալի ճշգրտությամբ ներկայացնում են Սյունյաց աշխարհի վանքերն ու եկեղեցիները, որոնք շատ նման են այսօրվա նրանց լուսանկարներին: Բավական է համեմատել Հայաստանի ներկայիս տարածքում գտնվող երկու հռչակավոր վանքեր՝ Տաթևը և Նորավանքը, համոզվելու մեր ասածի ճշմարտության մեջ:

«Միսական» հատորում տեսնում ենք հայ միջնադարյան որոշ բնագրերի առաջին տպագրությունները՝ յուրօրինակ մի հուշում հետագա շրջանի հայ միջնադարյան գրականության հետազոտողների համար, որպեսզի այդ հետքերով ձեռագրական գանձերի մեջ որոնումներ կատարեն ու ամբողջացնեն որևէ հեղինակի գրական ժառանգությունը: Դրանից մեկը Տիրատուր վարդապետի գրած հանելուկներն են, որոնցից երեքը Ալիշանը զետեղել է «Միսական» աշխատության մեջ: Դրանք են՝

⁶ Ղ.Ալիշան, Միսական, Երևան, 2009, էջ 11:

- 1) «Ուն էր յազգէ Արշակունի,
Մայրըն վավաշ եւ խիստ մոլի,
Տեսումն աչացն էր անբարի,
Հանց որ յաղթեր որձաքարի: (Երուանդ)
2) Է զգալի եւ չերեւի,
Չէ կենդանի ու կու խոսի,
Թէ որք ընդդէմ նմա խօսի՝
Զնոյնն առնէ պատասխանի: (Արձագանք)
- 3) Բանս ի զարմացք ի մեզ լինի,
Բայց անվարժիցն անգիտելի,
Զի ճոխութեամբբն նըւազի
Եւ նուագութեամբբն ճոխ լինի:

Երրորդ հանելուկի լուծումը Ալիշանը թողել է ընթերցողին. «Ընթերցողին թողցի լուծանել և զայս»: Այս հանելուկի պատասխանն է՝ **Մահման**. այն գտնում ենք Ասատուր Մնացականյանի կազմած «Հայ միջնադարյան հանելուկներ» աշխատության մեջ:⁷ Արդեն Ղ. Ալիշանը «Միսական» աշխատության մեջ նկատում է, որ Տիրատուր վարդապետի հանելուկները, որոնք թվով «առաւել քան 420, ոճով Շնորհալոյ», իրենց հիմքում ունեն ազգային պատմագիրներին և Սուրբ

⁷ Ա.Շ.Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ, (V – XVIII դդ.), Երևան, 1980, էջ 372:

գիրքը:⁸ Այդ առիթով Աս. Մնացականյանն էլ ավելացնում է. «Հետագայում՝ XIII-XV դարերում, ուրիշ հեղինակների (Հովհաննես Ծործորեցու, Տիրատուր Վարդապետի, Գրիգոր Խլաթեցու) գրավոր հանելուկները տիրապետող ուժ են ստանում Ներսես Շնորհալու հանելուկների, ինչպես նաև Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակների համախումբ ներգործությամբ»:⁹

«Միսական» աշխատությունը բացառիկ է Սյունիքի կրթական կարևոր կենտրոնները ներկայացնելու հարցում: Նրանում մանրամասներ ենք տեսնում Գլաձորի, Տաթևի համալսարանների հիմնադիրների, գիտական դեմքերի, դասավանդվող առարկաների վերաբերյալ: Սրանք այնպիսի փաստեր են, որոնք անպայմանորեն էլակետային են դարձել այդ խնդիրներին անդրադարձած պատմաբանների, գրականագետների, բանասերների և մանկավարժների համար: Այս հատորում կարևոր փաստեր կան Գլաձորի համալսարանի հիմնադիր և ռեկտոր Եսայի Նչեցու մասին, որին Ալիշանը կոչում է վարդապետ. երեք հարյուր վաթսուն հոգևորականներ նրա ռեկտորության տարիներին, որը տևել է հիսունհինգ տարի, ստացել են վարդապետական աստիճան: Նրա նշանավոր աշակերտներից են եղել հայ փիլիսոփայական մտքի

⁸ Ղ. Ալիշան, Միսական, էջ 126:

⁹ Ա.Շ.Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ, էջ 160:

երկու անվանի դեմքեր՝ Հովհան Որոտնեցին և Հովհաննես Երզնկացին: Գլաձորի համալսարանի հիմնադրման կարևոր իրադարձության մեջ իր անուրանալի դերն է ունեցել Եսայի Նչեցու ուսուցիչը՝ Ներսես Մշեցին, որի մանկավարժական բեղուն և արդյունավետ գործունեության մասին, ինչպես նշում է Ղ. Ալիշանը, վկայում են հետևյալ չափաբան տողերը.

Յերկրորդ յԱթենըս պանծալի,
Առ ոտըս հօր մեր Ներսեսի
Եւ բաբունեաց վարժապետի
Հասեալ ի ծայր իմաստ բանի...
Ի գիշերի և տուրնջենի
Աստուածային բանիւ բերկրի...¹⁰

Եսայի Նչեցին, ըստ ժամանակակիցների վկայության, ստեղծել է հայ ոգու դաստիարակության դպրոց: Նրա աշակերտներից էր նաև XIV դարի նշանավոր գործիչ, տաղասաց ու մանկավարժ Խաչատուր Կեչառեցին, որի կարևորագույն գործերից են «Պատմութիւն Աղեքսանդրի» երկի համար գրված չափածո բարաոնություններ: Ի դեպ, Ֆրանսիացի նշանավոր հայագետ ֆրեդերիկ Մակլերի կարծիքով Ալեքսանդր Մակեդոնացու վարքին կցված մանրանկարները հայ

¹⁰ Ղ. Ալիշան, Միսական, էջ 131:

միջնադարում ազդարարեցին աշխարհիկ թեմաների մուտքը հայ մանրանկարչություն:¹¹

Ղևոնդ Ալիշանը մեջբերում է 1341 թվականին պարզ, ռամկական լեզվով գրված Մխիթար Եզնկայեցու հիշատակարանը, որում հստակ երևում է, թե Գլաձորի միաբանները հաճախ աշխատել ու արտագրել են ձեռագրեր ամենաձանր պայմաններում.

Ով ընթերցամաբ հայիք ի սա,
Եւ հանդիպիք գանձու սորա,
Տե՛ս թէ քանի աշխատեցայ
Ես Մխիթար գրիչ սորա:
Թուղթս անկոկ ու գրիչ չկայ,
Աւուրքս ցուրտ ու պարզկայ.
Չարտախս բարձր ու կրակ չկայ,
Դոներս¹² չոր ու սպաս չկայ:
Եւ այս Գլաձորն ո՞վ գիտենայ,
Ես յոյժ նեղած ու ճար չկայ,
Գիրքս յերկար ու եզր չկայ,
Եւ ես պանդուխտ, ու վեղար չկայ,

¹¹ Տե՛ս Ա. Դոլուխանյան, Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երևան, 2011, էջ 165:

¹² Ղ.Ալիշանը տողատակում բացատրում է. «Դոն նշանակ է գփխրուն չոր հաց» (տե՛ս Մխսական, էջ 135):

Ինձ հատուցումն յիշման արա:

Վասըն փցուն գրի սորա:¹³

Ավետիք Իսահակյանը Ղևոնդ Ալիշանի անձով հիացած էր և հիանալի գիտեր հայ միջնադարը: Այս վերջին իրողությունը ևս մի անգամ ի հայտ է գալիս «Մասունցի Դավիթ» էպոսի հազարամյակին նվիրված «Մեր պատմիչները և գուսանները» հրաշալի քերթվածում.

Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերում, մենության մեջ
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ,
Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրրա դժգույն:¹⁴

Վարպետի բանաստեղծական այս հատվածը խոսուն ձևով ձայնակցում է Մխիթար գրչի պարզ տողերի հետ:

Գլաձորի կրթական կենտրոնից հետո «Միսական» գրքում մեծ քանակով էջեր նվիրված են Տաթևի վանքին, այնտեղ գործող համալսարանին ու Գրիգոր Տաթևացուն:

Տաթևի վանքի՝ հայ ժողովրդի հոգևոր կյանքում կատարած դերի մասին գրելիս Ալիշանը մեծապես օգտագործել

¹³ Նույն տեղում:

¹⁴ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. I, Երևան, 1973, էջ 348:

է Ստ. Օրբեյանի պատմությունը, որը հենց գրվել է Տաթևի վանքում: Սյունիքի ծեր եպիսկոպոս Տեր-Հայրապետն այցելում է Երուսաղեմ և վերադարձին հանդիպում է Կիլիկիայի թագավոր Լևոն Երրորդին,¹⁵ որը փափագում էր դառնալ Տաթևի միաբան: Հանդիպումից խանդավառված՝ թագավորը եպիսկոպոսի միջոցով վանքին է ուղարկում թանկարժեք նվերներ՝ վարագույր եկեղեցու բեմի համար՝ հյուսված բյուզանդական ընտիր մետաքսներից, ոսկե խաչ՝ պատված թանկարժեք քարերով, արծաթե թանկագին սկիհներ և իր ձեռքով գրում է չափածո հիշատակագիր.¹⁶

Մարդիկ, որ հոգու աչքով անվախճան կյանքի նայեցին,
Քանի դեռ մարմնով էին, հոգու փրկության ձգտեցին:
Ուստի և ես՝ Լևոնս, թագավորս ազգի հայության,
Հետևողս ուղիղ հավատքին սուրբ երրորդության,
Ուզեցի այս աստվածընկալ ուխտին լինել միաբան,
Ահա և աղերսում եմ ձեզ, այս վանքի անձիք սրբազան,
Որ ես ու նախնիներս, որոնք անցան հույսով հարության,
Ձեր աղոթքով հասնենք մեղած թողության,
Լինենք արժանի հանգստյան երկնի արքայության,

¹⁵ Ղ.Ալիշանի մոտ Լևոն Բ (տե՛ս Միսական, էջ 233) – Պ.Ս.:

¹⁶ Մեջբերում ենք պատմության թարգմանչի՝ Աշոտ Աբրահամյանի թարգմանությունը (տե՛ս Ստեփանոս Օրբեյան, Սյունիքի պատմություն, էջ 345, տե՛ս նաև Միսական, էջ 233):

Մեր որդիներն ու զարմիկներն էլ, որ մեր տեղը պիտի գան, Երկար կյանքով, բարի օրոք այս աշխարհում թող մնան:

Այս իմաստալից արքայական հիշատակի գիրը ներկայացնում է, թե որքան էր Լևոն Երրորդը հոգով կապված մայր հայրենիքի՝ Մեծ Հայքի հետ: Ալիշանը ներբերում է մեկ ուրիշ հիշատակարան, որից իմանում ենք, թե Լևոն Երրորդի մահից հետո նրա պատարագը կատարել են Սյունիքի բոլոր եկեղեցիները:¹⁷

Տաթևի վանքի և նրա համալսարանի փառքը Գրիգոր Տաթևացին էր՝ (1346-1409) իր ժամանակի հայ իրականության մեծ հանրագիտակը, որը փիլիսոփա աստվածաբան էր, մանկավարժ, երաժիշտ, մանրանկարիչ: Նա նշանավոր Հովհան Որոտնեցու աշակերտն էր և դարձավ Տաթևի համալսարանի ընթացակետը: Գրիգոր Տաթևացու նշանավոր աշակերտներից էին Թովմա Մեծոփեցին, Մատթեոս Ջուղայեցին, Առաքել Սյունեցին և ուրիշներ: Առաքել Սյունեցու «Յաղագս քերականութեան. Համառոտ լուծմունք» համալսարանական դասագրքի սկզբում Գրիգոր Տաթևացին հիշվում է Եռամեծ պատվանունով. «Արարեալ ի տէր Առաքելոյ Սիւնեաց եպիս-

¹⁷ Ղ.Ալիշան, Միսական, էջ 233:

կոպուտ, աշակերտի եռամեծի Գրիգորի քաջ հոռետորի»¹⁸. այդպես կոչում էին համաքրիստոնեական եկեղեցու համար բացառիկ դեմք Հերմես Եռամեծին:

Ալիշանը ներկայացնում է Գրիգոր Տաթևացու կենսագրությունը և «Սիսական» հատորում տեղադրում է Գրիգոր Տաթևացու ինքնագիր ձեռագրի մի փոքր հատվածի պատճենը: Նա նաև հիշեցնում է, թե մեծ փիլիսոփայի կյանքի վերջին տարիները համընկել են Լենկթեմուրի արշավանքներին, և Տաթևացին ու նրա աշակերտները թողել են Տաթևը և փախել Վասպուրական: «Սիսական» հատորում տեղադրված է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» աշխատությունը արտագրող գրչի հիշատակարանը, որում Գրիգոր Տաթևացին կոչվում է հանձարեղ մտածող.

Գիրքս գրեցաւ այս հրաշագան
Հարցումն և պատասխան,
Ի մեծ հոռետոր վարդապետէ
Գրիգոր անուն և հսկողէ,
Այն որ զանճառս խորոց յայտնէ,
Ճաշակ մըտաց մատուցանէ:
Շինեաց ըզգիրքս զայս պիտանի,

¹⁸ Առաքել Սյունեցի, Յաղագս քերականութեան համառատ լուծմունք, աշխատասիրությամբ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Գ. Խաչերյանի, Լոս Անջելոս, 1982, էջ 67:

Որ զամենայն իմաստս ունի,
Թե՛ ոք ի բան ինչ ծարաւի
Աստի ըմպէ որչափ կամի,
Ձի այս հանճար է նորագոյն,
Ձոր չէր յայտնեալ մինչեւ ի սոյն,
Սայ նոր ճաշակ է քաղցրագոյն,
Ախորժ կամաց ամենեցուն...¹⁹

Երբորդ մեծ կրթօջախը, որի մասին կարևոր փաստեր է հաղորդում Ղ. Ալիշանը, Սյունյաց Մեծ անապատն է, որը 1610 թվականին հիմնադրվեց Տաթևի մոտ գտնվող հին Հարանց անապատի տեղում: Ալիշանը խոսում է Ներսես Մոկացի (Բեխլու) քերթողի մասին, որը ներբողյան ունի նվիրված Սյունյաց Մեծ անապատին ու նրա հիմնադիրներին՝ Սարգիս Ամբերդցուն, Կիրակոս Տրապիզոնցուն, Մովսես Սյունեցուն և Մելիք Հայկազնին: Սյունյաց Մեծ անապատի նշանավոր դեմքերը ցրվեցին ողջ Հայաստանով մեկ և ստեղծեցին նոր կրթական կենտրոններ. «Մեծ անապատն ուներ համահայկական նշանակություն. այն իր բարերար օգնությունն էր ցուցաբերում երկրի կրթական մյուս օջախներին: Անապատի սկսած գործը շարունակվեց նրա աշակերտների ջանքերով հիմնված նոր միաբանությունների մեջ: Այսպես,

¹⁹ Ղ.Ալիշան, Սիսական, էջ 239:

օրինակ, Ներսես վարդապետ Մոկացին անապատ է հիմնում Վանա ծովակի Լիմ կղզում, Կարապետ Եպիսկոպոս Էջմիածնեցին գնում է Սևանա կղզի և հաստատում անապատ, Արիստակես վարդապետ Շամբեցին շինում է Տանձափարախի անապատը, Դավիթ Եպիսկոպոսը, որը Շամբորի ձորից էր և իշխանական ցեղից, հիմնում է Չարեքազետի անապատը»:²⁰

ԺԱ գլխում, որը կոչվում է «Գողթն», Ալիշանը մանրամասնորեն խոսում է հայ սրբախոսական գրականության հետաքրքիր դեմքերից մեկի՝ Վահան Գողթնացու մասին: Վահան Գողթնացու մասին հայ մատենագրության մեջ կան մի շարք տեղեկություններ: Դրանցից մեկը Թովմա Արծրունու «Պատմություն Արծրունյաց տան» երկրի մեջ է. «Իսկ Գողթն գավառը՝ սուրբ Վահանի նահատակման ժամանակ 186 [737] թվականին: Այդ տարում հոգին ավանդեց սուրբ Վահանը, որը Խոսրովի՝ Գողթնի տիրոջ որդին էր»:²¹

Վահան Գողթնացին հենց VIII դարում դառնում է հայ գրականության կարևոր կերպարներից: Հավանաբար նրա անձին առաջինն անդրադառնում է հարազատ քույրը VIII

²⁰ Ա.Դոլուխանյան, Ներսես Մոկացի (Կյանքը, գործունեությունը), Ս.Էջմիածին, 2009, էջ 45:

²¹ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 257:

դարի հայ բանաստեղծուհի Խոսրովիդուխտ Գողթնացին «Զարմանալի է ինձ» քերթվածում: Չափածո քերթվածում Վահան Գողթնացին պատկերված է որպես իսկական վկայաբանական հերոս: Նա հաղթել է մարմնի պահանջը և հանուն հավատի կամովին ընտրել նահատակությունը.

Որպես քաջ նահատակ,
Պատրաստեալ ի պատերազմ,
Կատարեցեր զընթացքս քոյ
Արիաբար յազգացն հարաւայնոյ,
Դասաւորեալ ընդ անմարմնականսն.
Ո՛վ երանելի տէր Վահան,
Գողթնացն իշխեցող:²²

Երկրորդ հեղինակը, որը հատուկ «Ողբ» է նվիրել Վահան Գողթնացուն, VIII դարի գրող Արտավազդն է: Վերջինս նշում է 703 թվականը, որպես արաբների կողմից հայերին հասցված մեծ չարիքի տարի, երբ հայ նախարարներին կանչեցին և, երկու խմբի բաժանելով, մի մասին փակեցին Նախճավանի, իսկ մյուսին՝ Խրամ ավանի եկեղեցիներում, կենդա-

²² Տե՛ս Հայ քնարերգություն: Անտիկ շրջանից մինչև Ը դար, Երևան, 1981, էջ 186:

նի-կենդանի այրեցին:²³ Ղևոնդի երկի թարգմանիչ արաբագետ Արամ Տեր-Ղևոնդյանը թարգմանության իր ծանոթագրություններում նշում է, թե Նախճավանի և Խրամի բարբարոսական գործողությունների նկարագրությունը տալիս են ոչ միայն հայ, այլև բյուզանդացի, ասորի և արաբ պատմիչները. «Արաբ պատմիչ Յակուբին (Թ դար) այսպես է նկարագրում Մուհամադ իբն Մրուանի գործունեությունը. «Նա արշավեց Հայաստան, որի ժողովուրդը ապստամբել էր, կոտորեց և գերեվարեց: Ապա նամակ գրեց երկրի ազնվականներին, որոնց ազատներ (ահրար) են կոչում, երաշխավորագիր (աման) տվեց և պատիվներ խոստացավ: Նրանք հավաքվեցին Խլաթ գավառի եկեղեցիներում: Նա հրամայեց եկեղեցիների շուրջը վառելափայտ հավաքել, նրանց վրա դռները փակել տվեց, ապա եկեղեցիներին կրակ տվեց և բոլորին վառեց»:²⁴

Արտավազը վկայում է, թե ռիսակալ այլազգիները ցրվեցին Հայոց աշխարհում՝ խուզարկեցին նրանց տները, կողոպտեցին երկրի գանձերը, տիրեցին ընտանիքներին, տարան անթիվ գերիներ, սրածեցին հայերին: Գերիների մեջ էր Գողթնի տեր Խոսրովի չորսամյա որդին՝ Վահանը՝ շնորհալի ու աչքի ընկնող: Նրան տարան արքունիք և անվանե-

²³ Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 38-39:

²⁴ Նույն տեղում, էջ 147:

ցին՝ Վահապ: Երբ արաբների գլխավոր է դառնում Ումառը, հրամայում է հավաքել բոլոր հայ գերիներին և ազատ արձակել: Եկավ և Վահան-Վահապը, որը հասել էր բարձր դիրքի և դարձել էր արքունի դիվանադպիր: Նա ևս ցանկանում է վերադառնալ հայրենիք, սակայն նրան դժվարությամբ են ազատ արձակում: Վահան Գողթնացու հարազատները ցնծում են նրա վերադարձի համար, ամուսնացնում են Սյունյաց տիրոջ դստեր հետ: Սակայն Վահանը հեռանում է աշխարհիկ կյանքից և ծառայում հոգևորին ու վկայաբանության վերջում նահատակվում:²⁵

Ղ. Ալիշանը «Սիսական» հատորում բերում է Վահան Գողթնացու կենսագրությունը ներկայացնող մի հատված, որը վերագրում է Խաչատուր Կեչառեցուն: Գանձի այդ հատվածը ներկայացնում է Վահան Գողթնացու վերադարձը հայրենիք և նրան ցուցաբերած ջերմ ընդունելությունը.

Յիշեաց զաւարդ ուխտին ազգայնոյ,
Կարօտացաւ երկրին հայրենոյ,
Խնդրեաց հրաման վասըն իւր գնալոյ
Ի բնիկ գաւառ Գողթըն կոչելոյ:
Համբաւ հասաւ իւր ազգակայնոյ,

²⁵ Տե՛ս Ռսկեփորիկ, Նմուշներ հին և միջնադարյան արձակից, Երևան, 1977, էջ 254-268:

Ելին ընդ առաջ ... ողջունոյ,
Առին զընշան խաչին Քրիստոսի,
Ելին ընդդէմ գալոյ Վահանին:
Տեսեալ զնըշան մեր Մարդասիրին,
Դարձուցանէր զերեսն յերկիւղին,
Զարհուրանօք լինէր ընդ գործին,
Եւ արտասուէր յորդ ի հանդիսին,
Յիշէր զպատգամս աւետարանին,
Հեղձամաղձուկ լինէր ի սրտին:
Ահագնախոց առնէր ըզհոգին
Ի սպառնալեաց մեծի ատենին,
Լըւեալ բնակիչքն իւրոյ գաւառին
Եւ արտասուս յորդոր հոսէին,
Մի՛ երկնչիր, որդի Խոսրովին,
Մէք պաղատիմք մերոյ արարչին,
Միջնորդութեամբ սուրբ Աստուածածնին,
Որ քեզ թողու զմանուկ հասակին
Ըզթողութիւն պարտուցն առաջին:²⁶

«Միսական» հատորում հիշատակվում է նաև Սյունյաց աշխարհի մեծագույն մտածողներից մեկը՝ Պետրոս Քերթողը կամ Սյունեցին, որը գրել է մեկնություններ, ճառեր, ներբող-

²⁶ Ղ. Ալիշան, Միսական, էջ 311:

ներ, եղել է թարգմանիչ: Նա գրել է նաև պատմություն, որը ժամանակի ընթացքում կորել է, սակայն դրանից մի գրական արժեք ունեցող հատված օգտագործել են Մովսես Կաղանկատվացին և հատկապես Ստեփանոս Օրբելյանը, որը հիացական խոսքեր է թողել այդ մատենագրի մասին: Նա պատմում է Հոնագուր հոնի և Սյունյաց իշխանորդի Բաբիկի մենամարտը, որը կայանում է պարսից Շապուհ արքայի պատվերով և ավարտվում Բաբիկի փայլուն հաղթանակով. «Եվ պարտվում է Հոնագուր ահռելի հսկան, հաղթում է քաջ Բաբիկը, որը շտապով դիմում է միասայրի սրին ու նրանով տեղնուտեղը սպանում արյունարբու, վիշապի ուժ ունեցող այդ գազանին»:²⁷ Հավանաբար նույն պատմությունից օգտվելով՝ Ղ. Ալիշանը նշում է, թե Պետրոս Սյունեցին եղել է Քերթողահայր Մովսես Խորենացու աշակերտը. «Յետ հարիւր ամաց քաջանշան հանդիսացաւ գրչութեամբ Պետրոս եպիսկոպոս Քերդող մականուանեալ, զոր և մեծի Քերդողահօրն Մովսիսի ասեն աշակերտեալ, թերևս ի յոյժ ծերութեան միոյն և ի տղայութեան միւսոյն»:²⁸

Բաբիկի և Հոնագուրի մենամարտը որպես ներբողան՝ չափածոյի վերածած է ներկայացնում Ասատուր Մնացա-

²⁷ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 88:

²⁸ Ղ.Ալիշան, Միսական, էջ 23:

կանն իր «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ» աշխատության մեջ:²⁹

«Միսական» գրքում հիացական էջեր կան Դավիթ Բեկի ապստամբության մասին: Որպես մեծ հայրենասեր Ալիշանը հիացած է Դավիթ Բեկի և նրա զինակիցների խիզախությամբ. «Սակայն մեծացաւ համբաւն և բնակութիւնն յառաջին քառորդի ԺԸ դարու ի յարուցման Միւնեաց Դափանեցոց ընդդէմ այլազգեացն հարստահարողաց և յընտրել առաջնորդի նոցա քաջին Դաւթի՝ զայս տեղի յիր ոստան, թերեւս ոչ այնքան վասն ամրութեան տեղոյն, որքան վասն ամրասիրտ բնակչացն, յորոց անմոռաց անուն եթող ընդ նմին Տէր Աւետիս երեց աշխարհիկ և աներ նորա Փարսադան մէլիք գեղջն և սորա որդին և յաջորդ Պալի գորավար»:³⁰ Դավիթ Բեկի ժամանակներում Մխիթար սպարապետի, Տէր-Ավետիսի օրինակով հայերն ընդամենը 350 հոգուց բաղկացած զորքով տանում են փայլուն հաղթանակ: Օսմանցիների բազմաքանակ բանակը խուճապահար փախչում է. «Եւ առին ի նոցանէ յաւուր յայնմիկ հարիւր և քառասուն դրօշակս և զայլ ամենայն

²⁹ Տե՛ս Ա.Յ. Мнацаканян, О литературе кавказской Албании, Ереван, 1969, с. 96.

³⁰ Դ.Ալիշան, Միսական, էջ 256:

կապուտ կողոպուտ բանակի նոցա»:³¹ Դավիթ Բեկի, Մխիթարի, Տեր-Ավետիսի գլխավորած ճակատամարտի ողջ նկարագիրը գրաբարյան բնագրով Ալիշանը զետեղում է «Միսական» հատորում: Ղուկաս Սեբաստացին, որը Դավիթ Բեկի զինակից Ստեփանոս Շահումյանից վերցրել է Դավիթ Բեկի պատմությունը, վերոհիշյալ հատվածը շարադրելիս հետևել է Եղիշեի պատմության այն հատվածին, որում Վարդան Մամիկոնյանը ճառով դիմում է զորքին ու զինակիցներին. «Սկսեցին խոսել Մխիթարն ու Տեր-Ավետիսը և ասացին. «Արիացեք, չերկնչեք, հետևեցեք մեզ, եթե հասել է մեր վախճանը՝ քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առաջ տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը և այլ դժնդակություններ»: Այս խոսքերն ասացին, և իրենք ամենից առաջ շտապ դուրս եկան պարսպի գաղտնի դռնով և երեք հարյուր զինվածներ հետևեցին նրանց:

«Ո՛վ սքանչելիք. Երեք հարյուր զինյալներ օրվա ութերորդ ժամին ձայնեցին, հորդոր կարդացին, հարձակվեցին յոթանասուն հազարի վրա: Նախ գրոհեցին աջակողմյան

³¹ Նույն տեղում, էջ 257:

գնդին՝ աջ ու ձախ կոտորելով»:³² Ալիշանի կարծիքով ճակատամարտի այս նկարագիրը ազգային պատմության հաղթական էջերից է. դրա համար էլ մեջբերում է ամբողջությամբ:³³ Նա նաև իր գրքում հիշատակում է Րաֆֆու «Դավիթ Բեկ» վեպը, որին ծանոթ է բնագրով:³⁴

Սյունիքի հոգևոր պատմության փայլուն դեմքերից է VIII դարի նշանավոր գործիչ՝ Ստեփանոս Սյունեցին: Ըստ Ստեփանոս Օրբելյանի հաղորդածի՝ Ստեփանոս Սյունեցին իր ապրած ժամանակի համար ստացել է փայլուն կրթություն. Կոստանդնուպոլսում սովորել է հունարեն ու լատիներեն, եղել է նաև Աթենքում: 735-ին կարգվել է Սյունյաց եպիսկոպոս: Թողել է հարուստ մատենագրական ժառանգություն: Շատ դավանաբանական գործեր այսօր հայ գրականությանը հայտնի են հենց Ստեփանոս Սյունեցու թարգմանություններով: Ստեփանոս Օրբելյանի կարծիքով VIII դարի Հայաստանում Սյունիքը եղել է գիտության առաջատարը. «Դրա համար դուրս գալով այն մենաստանից շտապով դիմում է դեպի գիտությունների աղբյուրը Սյունյաց վարդապետարանը, որը Հայաստանի բոլոր գիտությունների գլխավոր տեղն

³² Ղուկաս Մեքաստացի, Դավիթ Բեկի պատմությունը, աշխարհաբար վերապատմեց Արշակ Մաղոյանը, Երևան, 1988, էջ 36:

³³ Ղ. Ալիշան, Սիսական էջ 256-257:

³⁴ Նույն տեղում, էջ 300:

էր, որտեղ գտնվող դպրոցները ծաղկած էին: Չէ՞ որ ինչպես աթենական դպրոցներն էին հռոմեականների ու հունականների մեջ փարթամացած և գիտությունների մայր հռչակված իսպանացիների աշխարհում՝ լատինական ու հունական դպրոթյամբ, այսպես էլ սրանք՝ Թորգոմյան տանը՝ մեր Հայոց աշխարհում»:³⁵

Պատմիչի կարծիքով Ստեփան Սյունեցին իր հարուստ գիտելիքներով հասել էր «անհամեմատելի հանճարի»:³⁶ Հայտնի է, որ Ստեփանոս Սյունեցին քնած ժամանակ սպանվել է մի անառակ կնոջ ձեռքով: Օրբեյանի երկում կան հայ միջնադարյան գրականության մեջ տարածված գրական ժանրերի տարբեր դրսևորումներ: Ալիշանը պատմիչի երկից մեջբերում է այն հատվածը, որը ներկայացնում է Ստեփանոս Սյունեցու սպանության տեսարանը: Այս հատվածը սրբախոսական գրականության կանոններով է ստեղծված: Քանի որ Ստեփանոս Սյունեցին խիստ սաստել էր անառակ կնոջը նրա վարքի համար, ապա վերջինս, ռխով լցված, որոշում է սպանել սուրբ մարդուն: Սաստիկ շոգի պատճառով եպիսկոպոսը որոշում է գնալ քաղցրահամ աղբյուրի մոտ զովանալու, իր ձեռքով մահիճը դնում է մի ուռենու վրա, երկար աղոթում է ու ննջում: Անպատկառ կինը սուրը դնում

³⁵ Ստեփանոս Օրբեյան, Սյունիքի պատմություն, էջ 148-149:

³⁶ Նույն տեղում, էջ 149:

Է սիրեկանի ձեռքը և հրահանգում սպանել եպիսկոպոսին: Սիրեկանը բարձրանում է ծառը ու տեսնում, որ Աստծու հրեշտակը պահպանում է հոգևոր հորը: Նա սարսափած իջնում է և պատմում տեսածը: Կինը ստիպում է երկրորդ անգամ բարձրանալ, սակայն տեսիլը կրկնվում է, և մարդը սոսկումով սկսում է դողալ ու մեռելի նման ընկնում է ծառից: Այնժամ չարացած կինը, սրված սատանայից, «վերցնում է մերկացած սուրը ու բարձրանում ծառը, սուրը խփելով սրբի փորին՝ անբիժ արյունը թափում է փայտե մահճի վրա»:³⁷

«Միսական» հատորում մի շարք էջեր նվիրված են Ջուղա վաճառաշահ քաղաքին, որի բնակիչներին Շահ Աբասը 1604 թվականին Պարսկաստան տեղափոխեց հատուկ հոգաձուլությամբ: Գրքի տարբեր էջերում կան Ջուղայի գերեզմանատան բարձրարվեստ խաչքարերի նկարները: Պատկերված է մինչև բռնի տեղահանության ժամանակահատվածի երջանիկ ու բարեկեցիկ կյանքը, երբ Ջուղայում հնչում էին տոնական փողերն ու տավիղները, ու ի հաստատումն ասվածի մեջբերվում է Դավիթ Գեղամեցու Ջուղային նվիրված չափածո քերթվածը.

Ջուղա քաղաք ազնիւ շինած,
Քօշք և սերայք բարձրացուցած

³⁷ Նույն տեղում, էջ 153:

Եւ գունըզգուն ծաղկեցուցած,
Նա հիացումն էր տեսողաց:
Եօթն ժամատեղ էր հաստատած,
Եկեղեցիքըն զարդարած,
Բուրվառանին ոսկեջրրած,
Ծածկոցըներն ոսկեթելած,
Աւետարանքն եւ սուրբ խաչեր՝
Անգին ակամֆք էր զարդարած,
Սեղանըներն եւ սրբութիւնն
Ուրախութիւն էր նայողաց...³⁸

Հետաքրքիր է, որ ի հաստատումն Աստվածաշնչի Հին կտակարանի Ծննդոց գրքի, Ալիշանը Նոյի և նրա որդիների գերեզմանը տեղադրում է Նախճավանում՝ գրքում զետեղելով նրանց գերեզմանների նկարները:³⁹

Ղևոնդ Ալիշանի «Միսական» աշխատությունը պատմական, աշխարհագրական, գրական և մշակութային իսկական գանձարան է: Հեղինակը նրանում խոսում է վաղ միջնադարի երկու հայ բանաստեղծուհիների՝ Խոսրովիդուխտ Գողթնացու և Սահակադուխտ Սյունեցու մասին: Նրանցից առաջինը հայոց եկեղեցու նահատակ սուրբ Վահան Գողթ-

³⁸ Ղ. Ալիշան, Միսական, էջ 413:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 499, 500:

նացու քույրն է, իսկ երկրորդը՝ VIII դարի նշանավորագույն մտածող Ստեփանոս Սյունեցու: Սահակադուխտը գրել է հրաշալի հոգևոր երգեր, ունեցել է դպրոց, ուսուցանել է աշակերտների՝ վարագույրի տակ նստած, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը. «Մա մի քույր ուներ, որը մանկությունից ընդունել էր կույսի վարքը, առանձնացել էր Գառնու ձորի մի քարայրում և կյանքն անցկացնում էր անտանելի ճգնակեցությամբ. նրա անունը Սահակդուխտ էր: Նա շատ հմուտ էր երաժշտության արվեստին, որը և սովորեցնում էր շատերին՝ վարագույրի տակ նստած, նաև ստեղծեց բազմաթիվ քաղցրեղանակ կցուրդներ ու մեղեդիներ, որոնցից մեկը նվիրված Մարիամին, որն իր անունով հորինեց»:⁴⁰ Այս բանաստեղծությունն ունի գլխակապ՝ Սահակդուխտ: Ահա այդ գեղեցիկ քերթվածի առաջին երկու տները.

Սրբուհի Մարիամ, անապական տաճար

Եւ կենարար բանին ծնող և մայր.

Օրհնեալ ես դու ի կանայս,

Բերկրեալ տիրամայր և կոյս:

Անդաստան հոգևոր և համապայծառ ծաղիկ,

Որ ի հոգեհոս անձրևէն՝ հովանաւորեալ ի քեզ՝

Պտղաբերեցեր ի Հօրէ՝ յայտնեալ մարդկան.

⁴⁰ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 152-153:

Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս:⁴¹

Նկատենք, որ երկու բանաստեղծուհիներն էլ Սյունիքից էին, ու լիովին իրավացի է Ստեփանոս Օրբելյանը, երբ VIII դարը Սյունիքի համար կոչում է հոգևոր վերելքի ժամանակահատված:

Ալիշանը «Միսական» հատորի առաջաբանում նշում է, թե մեր օրերը հասել են անցյալի դպրության սակավ էջերը, սակայն ինչ պահպանվել է, պետք է անմոռաց պահել մեր գրականության պատմության համար:⁴² Այդ սուրբ գործին է ծառայում հենց «Միսական» կոթողային երկը:

⁴¹ Հայ քնարերգություն: Անտիկ շրջանից մինչև Ը դար, էջ 178:

⁴² Ղ. Ալիշան, Միսական, էջ Ը:



ՌՈՒԶԱՆ ԴՈՒՈՒԽԱՆՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

ՀՈՈՄԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԱՅՍՐ ՄԱՐԿՈՍ ԱՎՐԵԼԻՈՍԸ ԱՂԶԻԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վենետիկյան Մխիթարյան միաբանության երկարա-
կյաց «Բազմավեպ» հանդեսը, որը 1843 թվականից մինչև մեր
օրերը հրատարակվում է, հենց առաջին համարներից հա-
տուկ ուշադրություն է դարձրել մանկավարժական ու բարո-
յախոսական նյութերի վրա: Ուշագրավ է, որ «Բազմավեպը»
հայերեն թարգմանել է հունահռոմեական մատենագրության
ամենատարբեր դրսևորումներ՝ փիլիսոփայական երկեր,
պատմական գործեր, առակագրություն, մանկավարժական
գործեր և այլն: «Բազմավեպի» տարբեր համարներում նյու-
թեր ենք գտնում Հռոմի նշանավոր կայսր Մարկոս Ավրե-

լիոսի (121-180) մանկավարժական ու բարոյախոսական հայացքների վերաբերյալ:

Մարկոս Ավրելիոսը ստոիկյան ուսմունքի հետևորդ էր և աչքի էր ընկնում մարդասիրությամբ: Նա վարում էր համեստ ու խստակրոն կյանք. հոգուտ քրոջ հրաժարվել էր հայրական ժառանգությունից: Նա հաղթական պատերազմներ է վարել պարթևների և գերմանական ցեղերի դեմ: Երբ տարած պատերազմների համար նրա գորքը պահանջում էր լրացուցիչ պարզև, նա համարձակ պատասխանում է, թե չի կարող լրացուցիչ պարզև տալ, որպեսզի չբարձրացնի ժողովրդի հարկերը: Դա երևում է ծերակույտին ուղղված մի թղթից: Մի անգամ Ավրելիոսի գորքը հոգնած էր ու ծարավ: Թշնամին սպառնում էր հաղթել գորքին: Կայսրը իր մոտ է կանչում քրիստոնյաների գնդի առաջնորդին և պատվիրում, որ նա իր Աստուծոց օգնություն խնդրի: Քրիստոնյաների աղոթքով Աստված առատ անձրև է պարզևում, և զինվորները սաղավարտներով խմում են անձրևաջուրը, իսկ դրանից հետո թշնամու բանակի գլխին կայծակներ են թափվում և մեծ վնասներ հասցնում [6-է]:

Հետաքրքիր է, որ Մարկոս Ավրելիոսն իր գահակալության ժամանակ ցուցաբերել է քրիստոնեական ներողամտության մի շարք դրսևորումներ: Նա ջանում էր, որ բոլորն իրենից գոհ լինեն. որպես բարբարոսություն վերացրեց սուսերա-

մարտերը և փոխարենը մտցրեց իմաստասիրական վիճաբանությունները: Ավրելիոսը խստագույնս պատժում էր այն զինվորներին, որոնք խաղաղ բնակիչներից մի հավ անգամ կարող էին վերցնել: Հավանաբար պատմահայր Մովսես Խորենացին, որը մեծ էրուդիցիայի տեր էր և գիտեր հունահռոմեական մտքի նվաճումները, V դարում ծանոթ էր նաև Մարկոս Ավրելիոսի գրվածքներին, որովհետև վերջինիս թղթերում և հայ պատմահոր մտքերում տեսնում ենք մի շարք ընդհանրություններ: Մարկոս Ավրելիոսի զինվորներին ուղղված պահանջներից լիովին հասկանալի է դառնում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» եզրափակող Ողբի հետևյալ հատվածը. «Զինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ասող, ծուլ, ցանկասեր, թուլամորթ, **կողոպտիչ**, գինեմոլ, հելուզակ, ավազակների բնութենակից» [7-453]:

Հայ մատենագրության պատմահոր և Հռոմի կայսեր Մարկոս Ավրելիոսի զինվորներին ուղղված այս պարտադիր պահանջները այսօր էլ կարևոր են ու արդիական:

Մարկոս Ավրելիոսից հասել են բազմաթիվ թղթեր: Էպիստոլյար գրականության այդ տեսակը, որը լայնորեն տարածված էր հունահռոմեական գրականության մեջ, իր դրսևորումներն ունի եվրոպական ու ռուսական գրականություններում. Հռոմի կայսեր իր աղջկա դաստիարակությանը

վերաբերող թուղթը կոչվում է՝ «Մարկոս Ավրելիոս կայսեր հանդիմանությունն, որ իր Փոստինա կնոջն ու Լուկիլլա աղջկանը տվեց» [6-57-59]:

Ամեն մի դարաշրջան ունի դաստիարակության իր ձևերն ու պահանջները: Դրանք կապված են տարբեր ազգերի կրոնական, բարոյախոսական, հոգեբանական պատկերացումների, ազգի քաղաքակրթված լինելու աստիճանի հետ: Մի բան, սակայն, ընդհանուր է. ծնողն իր պատկերացումների սահմաններում ցանկանում է իր որդուն և դստերը տեսնել կատարյալ՝ դրանով պայմանավորելով նրա կյանքի ողջ հետագա ընթացքը:

Երբ ուշադիր կարդում ենք Մարկոս Ավրելիոսի վերոհիշյալ թուղթը, ապա տեսնում ենք նրա որոշ պահանջների մշտական լինելը բոլոր ժամանակների համար, միաժամանակ հասկանում ենք, թե որքան փոխվել է կնոջ վիճակը XX և XXI դարերում, երբ որոշ զարգացած երկրներում կանայք հավասար իրավունքներ ունեն տղամարդկանց հետ:

Հռոմեկան կայսեր թղթերից իմանում ենք նաև նրա կնոջ՝ (վերջինս Հռոմի Անտոնիոս միապետի դուստրն էր) Փոստինայի և նրանց դստեր՝ Լուկիլլայի անունները:

Առաջին հերթին կայսրը չի հավանում ոչ իր կնոջ և ոչ էլ իր դստեր վարքագիծը, որն իր պատկերացումներից ու պահանջներից շատ հեռու էր: Նրա կարծիքով աղջիկը հնա-

զանդ չէ իր մորը, որովհետև մայրը ճիշտ չի կրթել նրան: Ըստ Ավրելիոսի՝ աղջկա կրթությամբ պետք է զբաղվի բացառապես մայրը, իսկ տղայի կրթությամբ՝ հայրը: Իհարկե, նա չի մոռանում, որ կարևոր է նաև տղայի ուսուցիչների դերը: Մեկ այլ թղթում, որը կոչվում է «Մարկոս Ավրելիոս կայսեր խոսակցությունը, որը վարեց իր Կոմոդոս զավակի ուսուցիչների հետ» տեսնում ենք, թե ինչպես հայրը շտապում է իր որդուն կտրել Փոստինաս մոր դաստիարակությունից ու այդ գործը հանձնել տղամարդ ուսուցիչներին [1-119]: Հետաքրքիր է, որ հայրը երագում է, որ որդին այնպիսի դաստիարակություն ստանա, որ նմանվի աստվածներին [1-119]: Այս պահանջը կա նաև V-VI դարի հայ նշանավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթի «Փիլիսոփայության սահմանումները» երկում. «Որովհետև էլ ի՞նչ կարող է լինել ավելի երանելի և վայելուչ նպատակ, քան ըստ մարդկային կարողության Աստծուն նմանվելը» [2-80]: Ավրելիոսի կարծիքով մարդն ամբողջ կյանքում պետք է սովորի, որ իր գիտելիքներով ու բանականությամբ տարբերվի անասուններից: Երբ նա Հունաստանում էր, այնտեղից Հռոմ էր բերել Պյութագորասի ճեմարանի դռանը դրված վերջինիս արձանը, որի վրա փիլիսոփայի ձեռքով փորագրված են եղել հետևյալ խոսքերը. «Ով որ իմանալու բաները չգիտի, մարդկանց մեջ անասուն է, ով որ պետք եղածից ավելին

չգիտի, անասունների մեջ մարդ է, իսկ ով որ գիտի այնքան, որքան հնարավոր է իմանալ, մարդկանց մեջ Աստված է» [1-121]: Ահա որոնք էին Ավրելիոսի պահանջներն իր որդուց՝ ապագա Հռոմի կայսրից: Նրա կարծիքով մեծագույն պատիժ է մոր համար, երբ տեսնի, թե ինչպես է հայրը պատժում աղջկան, նույն կերպ մեծագույն ամոթ է հոր համար, եթե տեսնի, թե ինչպես է մայրը պատժում իր որդուն: Թղթի հենց սկզբում կայսրը զետեղում է իր ողբի մի հատվածը՝ ուղղված Հռոմին, ոչ թե նրա համար, որ այն ավերվել է, այլ նրա համար, որ Հռոմի որդիներն ու դուստրերը կրթված ու առաքինի չեն. «Ո՛վ Հռոմ, չեմ ողբա վրադ, որ պալատներդ ավերել են, պարիսպդ քանդել, անտառներդ այրել, բնակիչներդ պակասել, դրանց վրա չեմ լալիս: ...Այլ ողբում եմ ու վրադ կրկին ողբում՝ տեսնելով քեզ ու հայրերին առաքինությունից ու դրա կրթությունից զուրկ: Իսպառ կորավ մեր հայրենիքը, երբ պակասեց տղաների ու աղջիկների կրթությունը, տղաները լրբացան, աղջիկներն ամոթխածությունը մի կողմ դրեցին, ու մայրերը անպարկեշտ դարձան» [1-57]:

Այս ողբը կայսրը գրում է իր կնոջ՝ Փոստինայի վրա ներգործելու համար, քանզի վերջինս այնքան է անտեսել իրենց դստեր դաստիարակության խնդիրները, որ նա աղջկան ոչ պատշաճող վարքագիծ է դրսևորում: Նախկինում

Հռոմի ազնվական դասի կանայք ամոթխած էին, չէին սիրում
սոնից դուրս գալ և զբաղվում էին միայն տան հոգսերով:

Կայսրը կատարում է հետաքրքիր համեմատություն.
«Էտնա հրաբխային լեռը այնչափ չի վնասում սիցիլիացիներին,
որքան մի անհամեստ կինը՝ հռովմեացիներին. որքան
թագավորություններ կործանվեցին, որքան թագավորներ կոր-
րան կնոջ պատճառով, այս երևույթին վերջ տալու համար,
որքան վտանգավոր ջանքեր ու զոհեր են եղել» [1-57]: Ակա-
մայից հիշում ես ֆրանսիական այն հայտնի ասացվածքը,
որը հենց ֆրանսերենով էլ կա բոլոր քաղաքակիրթ ազգերի
մոտ. «Cherchez la femme» («Փնտրեցե՛ք կնոջը»): Այս թևավոր
խոսքը վերագրվում է Շառլ Մորիս Թալեյրանին (1757-1838),
որ XIX դարասկզբին ֆրանսիացի նշանավոր քաղաքական
գործիչ էր և Նապոլեոն Առաջինի ժամանակ արտաքին գոր-
ծերի նախարարը [9-466]: Ի դեպ, նույն միտքը կա հայ ժո-
ղովրդական առած-ասացվածքներում՝ «Կնոջ մատն է խառը»,
ինչպես նաև XV դարի հայ նշանավոր տաղասաց Հովհան-
նես Թլկուրանցու մի տաղում, որում կարդում ենք.

Կինն ըզԴաւիթ արքայն պղծէ,

Ու Սողոմոնն ապականէ,

Զսուրբ Յովհաննէս գլխատէ,

Աստուած փրկէ կնկան շառէ [5-188]:

Կայսեր կարծիքով կանանց որոշ թերություններ նման են դալար, կանաչ ճկուն ճյուղին, և դրանք հեշտ ուղղելի են, իսկ անհամեստությունն ամենավտանգավորն է՝ այն նման է չոր փայտի, որն ուղղել անհնար է. այն պարզապես կկոտրվի: Նա պահանջում է, որ կինը մտածի միայն տան մասին, սրբորեն կատարի իր պարտականությունները, քիչ խոսի, հավատարիմ լինի իր ամուսնուն, լինի համեստ ու ամոթխած:

Փաստորեն կնոջ նկատմամբ ներկայացվող այս պահանջները գրեթե նույնությամբ առկա են XII դարի հայ նշանավոր կաթողիկոս ու մատենագիր Ներսես Շնորհալու (1101-1173) «Թուղթ ընդհանրական» գործում. «Պատվիրում եմ նաև ձեզ՝ կանանց, որ պարկեշտ և բարեձև լինեք ամեն ինչում, ինչպես վայել է քրիստոնյաներին: Ոսկուց ու արծաթից ավելի ձեր անձերը զարդարեք ամոթխածությամբ և պատկառանքով» [8 -122]:

Այնքան առաջադեմ է հռոմեական այս կայսրը, որ չի ընդունում այն սովորությունը, երբ աղջկա ամուսնության մեջ բախտորոշ դեր է կատարում աղջկա ունեցած օժիտը: Այս հարցի շուրջ համաշխարհային գրականության մեջ ստեղծվել են բազմաթիվ գործեր: Բավական է հիշել ռուս հանրահայտ դրամատուրգ Ալեքսանդր Օստրովսկու «Անօժիտը» և հայ դասական գրող Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսները, որոնք վերաբերում են աղջիկների

ամուսնության մեջ օժիտի կատարած բախտորոշ դերին: Ականավոր ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերը 1909 թվականին Թիֆլիսում հանդիպել է հայ նշանավոր դրամատուրգ Գաբրիել Մունդուկյանին, որը փայլուն գիտեր ֆրանսերեն, եղել էր Փարիզում ու հիացած էր ֆրանսիական դասականներով: Արդեն ծերունագարդ գրողը խոստովանում է, որ իր ողջ ստեղծագործությունը նվիրված է կնոջ իրավունքները հասարակության մեջ պաշտպանելու խնդիրներին [3-153]: Դրանցից մեկը օժիտի խնդիրն էր, որը ներկայացված է նրա գլուխգործոցում՝ «Պեպո» պիեսում: Ազնիվ ձկնորս Պեպոն մուրհակը կորցնելու պատճառով չի կարողանում մեծահարուստ Զիմզիմովից ստանալ վերջինիս մոտ պահվող քրոջ օժիտի գումարը, և քրոջ փեսացուն այդ պատճառով չեղյալ է համարում սպասվող ամուսնությունը: Քրոջն անսահման նվիրված Պեպոն տագնապում է քրոջ ճակատագրի համար, սակայն չի կարողանում որևէ կերպ գտնել քրոջ օժիտի գումարը: Նա ինքն իրեն հարց է տալիս. «Ամա վո՞ւրդի ճարիմ էն գահրումար փուղը...» [4-31]:

Մարկոս Ավրելիոսը դեռ շատ դարեր առաջ դեմ էր օժիտի բախտորոշ դերին: Նա հիշեցնում է, թե Լիկուրգոսը օրենք է հաստատել, որ հայրերն իրենց աղջիկներին օժիտ չտան, որպեսզի նրանց հետ ամուսնացողը հաշվի առնի միայն նրանց առաքինությունը, և աղջիկներն էլ ջանան

առաքինությունը որպես օժիտ պատրաստել [1-58]: Կայսրը սրտանց անիծում է նրան, ով օժիտի սովորույթը մտցրեց Հռոմի մեջ, որովհետև դրանով Հռոմը հարստացավ գանձով, բայց աղքատացավ առաքինությունից: Ավրելիոսը պատմում է մի հետաքրքիր իրական դեպք՝ կապված հարստության և ամուսնության հետ: Հռոմեացի Կամիլլոսը գալերին հաղթելուց հետո վերադարձավ հայրենի տուն: Նա ուներ մի զավակ և այնքան հարուստ էր, որ տարբեր թագավորներ նրա զավակին որդեգիր էին ուզում դարձնել, իսկ ծերակույտի խորհրդի անդամներն երազում էին այդ հարուստ որդուն փեսայացնել իրենց: Կամիլլոսի կինը վախճանվել էր. նա վաթսուն տարեկան էր, իսկ որդին՝ երեսուն, սակայն երկուսն էլ չամուսնացան: Կամիլլոսը հետևյալ ձևով է ներկայացնում իր և իր որդու կին չունենալը. «Իմ չամուսնանալու ու որդու չամուսնանալու պատճառն այն է, որ ոմանք իրենց աղջիկը հարուստ օժիտ ունենալու համար առաջարկեցին, ոմանք ազնվական լինելու համար, ոմանք էլ նորահասակ ու գեղեցիկ լինելու համար. մեկը չեղավ, որ իր աղջիկը առաքինի լինելու համար առաջարկեր»: Այս խոսքերը Ավրելիոսն ուղղում է իր կնոջը՝ Փոստինային, որը խիստ թերանում էր աղջկա դաստիարակության խնդիրներում: Փոստինան աղջկան իր հետ տանում էր Կապիտոլի, ուր կային զինվորականներ, նրա հետ գնում էր թատրոն, ուր նրան տեսնում էին

կատակերգու դերասանները: Կայսրն այդ վայրերը համարում է կասկածելի և կնոջ համար ոչ պատշաճ: Ավրելիոսի թղթի այս հատվածում որոշակի ակնարկ կա հանդերձյալ հավերժական կյանքի մասին: Նրա մտքերն այնքան համահունչ են քրիստոնեական վարդապետությանը և հատկապես Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» հանճարեղ երկի որոշ հատվածներին: Ավրելիոսը գրում է. «Մարմնից ենք ծնվել, մարմնի մեջ ենք ապրում, մարմնով ենք մեռնում, բայց դեռ մարմիններս չմեռած՝ բարի կյանքը կորցնում ենք» [1-59]:

Նա դնում է շատ կոպիտ պահանջ և ամեն մի հռոմեացի կնոջ համար պարտադիր. «Եթե աղջիկը անվայել տեղ ուզի գնալ, պետք է նրա ոտքը կոտրել, եթե անվայել բանի նայի, պետք է աչքը հանել, եթե լսելիքի համար անպատշաճ բաներ լսի, պետք է ականջին հարվածել, եթե անօրինություն ուզի անել, պետք է նրան ողջ-ողջ թաղել» [1-59]: Փոստինային նրա կայսր ամուսինը հիշեցնում է. տունը հաստատուն է իր սյուներով, նրանցից մեկի վերանալու դեպքում, տունը փլվում է: Կինն էլ նույնն է, եթե նրան առաքինի պահող մի հատկանիշն անտեսվի, ապա կինը կղժրախտանա:

Որպես կյանքի էությունը խորապես ըմբռնած փիլիսոփա-մանկավարժ Ավրելիոսը Փոստինային մատնացույց է

անում այն ուղին, որով աղջիկը կդառնա ցանկալի առաքինին: Նա իրավացիորեն ամեն մարդու դժբախտության պատճառը համարում է դատարկակեցությունը: Որպեսզի ոչ մի բանական արարած չշեղվի մարդուն վայելող կյանքի ընթացքից, ապա նա պետք է զբաղվի օգտակար գործով: Ուրեմն Փոստինան էլ իրենց աղջկան պետք է զբաղեցնի օգտակար գործերով:

Սա կայսրի վերջին խրատն էր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Բազմավէպ», Վենետիկ, 1866
2. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980
3. Դոլուխանյան Ա., Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երևան, 2011
4. Հայ դրամատուրգիա, Երևան, 1985
5. Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, Աշխատասիրությամբ՝ Էմ.Պիվազյանի, Երևան, 1960
6. Մարկոս Ավրելիոս, Իմաստասիրական և խրատական թղթերը, Վենետիկ, 1868

7. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ.Մալխասյանի, Երևան, 1981
8. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991
9. Французско-русский фразеологический словарь, Москва, 1963



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ*

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Վենետիկի Մխիթարյան միաբանության փայլուն դեմքերից է Ղևոնդ Ալիշանը (1820-1901)՝ հանրագիտակ մտածող, որի գիտական, պատմական, գրական, թարգմանական ժառանգությունն ապշեցնում է իր հսկայական ծավալներով: Նա եղել է նաև հմուտ մանկավարժ: Ինչպես Խաչատուր Աբովյանը, այնպես էլ Ալիշանը երազում էր նոր բարձրացող հայ սերնդին տեսնել կրթված ու լի հայրենիքի հանդեպ տածած հաստատուն սիրով: Հենց այդ նպատակին էլ ծառայում էին նրա միտքն ու գրիչը: Ինչպես նշված է «Հանդես ամսօրեայի» մահախոսականում. «Ալիշանը շատ սիրված դեմքերից էր՝

«Նահապետ» անունով ծանոթ բոլորին»:¹ Հիրավի, Ալիշանի ժողովրդայնության հիմքը նրա անսահման սերն էր հայրենիքի ու մարդու նկատմամբ: Նա իր բոլոր գործերում շարունակ հաստատում է աստվածային պավիթրանների թե՛ գրչով, թե՛ գործով հավատարիմ լինելու գաղափարը:²

Ղևոնդ Ալիշանի բանաստեղծություններին անդրադարձ է կատարել նաև Վալերի Բրյուսովը իր «Поэзия Армении» նշանավոր ժողովածուում: Նրա կարծիքով բանաստեղծական տաղաչափության առումով Ալիշանը հասել է կատարելության:³

¹ «Հանդէս ամսօրեայ», 1902, էջ 93:

² Ղ.Ալիշանի պոեզիայի ռոմանտիկ բնույթի մասին տե՛ս Ս.Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966:

³ «Гевонд Алишан оставил много ценных научных работ по истории, археологии, географии и т. под. Но он был и выдающимся поэтом, стихи которого составили в общем 5 томов. В технике стиха Алишан достигал большого совершенства, и его произведения до сих пор сохраняют любовь значительного числа читателей, как искренние и красивые вдохновения. Алишаном написано не мало религиозных стихотворений, молитв и гимнов, есть поэмы, посвящённые историческому прошлому Армении, есть живые описания природы, особую глубину стихам Алишана придаёт его трогательная любовь к родине, воспламенявшаяся судьбой поэта, жившего на чужбине. В нашем сборнике Алишан представлен стихотворением «Раздан», в котором «вечная» тема поэзии-возвращение изгнанника в родной край оживлена и согрета сильным чувством армянина-патриота» (В.Брюсов, Поэзия Армении с древнейших времен до наших дней, Ереван, 1987, с. 66).

Ճանաչողական և մանկավարժական առումով հատկապես ուշադրության արժանի են Ղ.Ալիշանի «Երգ Նահապետի» ժողովածուն և 1881 թվականին Սուրբ Ղազար կղզում լույս տեսած «Նուագք» գիրքը: Առաջինը բանաստեղծը գրել է աշխարհաբարով, իսկ երկրորդը՝ ոչ բարդ գրաբարով:

Շատ հետաքրքիր է, թե ինչու երիտասարդ Ալիշանը իր գրական անունը կնքեց Նահապետ բառով: Բացենք Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» երրորդ հատորը և կարդանք նահապետ բառի բացատրությունը. «Նահապետ-1) Մի տոհմի՝ ցեղի նախահայրը, ցեղապետ, տոհմապետ: Աբրահամ, Իսահակ, Հակոբ՝ Իսրայելացոց նահապետներն են: 2) Տոհմի՝ ցեղի պետ, առաջնորդ, իշխան: Թագավորներից առաջ նահապետներն էին կառավարում իրենց ենթակա երկիրն ու ժողովուրդը: Նահապետների դարը: 3) Տանուտեր, նախարար: Սյունյաց նահապետը: 4) Խիստ ձեռացած, ձերունագարդ մարդ»:⁴

Հիանալի իմանալով նահապետ բառի իմաստները՝ Ղևոնդ Ալիշանը «Հայոց աշխարհիկ» քերթվածում շեշտում է բառի վերջին՝ ձերունագարդ մարդ արտահայտությունը: Բանաստեղծությունն ավարտվում է հետևյալ տողերով.

⁴ Մտ.Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ.III, Հ-Ո, Երևան, 2010, էջ 439:

Ծեր Նահապետիդ՝ տու՛ր կակուղ հողիկ,
Որ գբեզ պինդ սիրեց, Հայո՛ց աշխարհիկ:⁵

Այս տողերը Ալիշանը գրել է, երբ ընդամենը քսանյոթ տարեկան էր ու երիտասարդության ծաղկուն հասակում իրեն կոչում էր ծեր: Ալիշանը գիտեր, որ անտիկ աշխարհում և հայ ավանդական սովորությամբ ծերերը խրատում էին մանուկներին՝ կյանքի ուղին ճիշտ ընտրելու համար: Ահա իմաստուն մտքերը, որոնց մի մասը նա քաղել է հայ հին գրականությունից ու ժողովրդական բանահյուսությունից, նրան իրավունք են տվել ընտրելու նման գրական անուն: Նրա՝ աշխարհաբարով «Նվագները» սկզբից մինչև վերջ շնչում են հայրենասիրությամբ: Տովսես Խորենացին, որն իր «Հայոց պատմությամբ» հայ ժողովրդին ավանդեց առաջին ու հիմնավոր ազգային ծրագիրը, Հայկ Նահապետի անունից հետագա սերունդներին դիմում է հետևյալ կոչով. «Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խուռն բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք, և մեր աղիւը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների

⁵ Ղ.Ալիշան, Նվագներ, Երևան, 1957, էջ 23: Այսուհետև այս գրքից բերվող հատվածների էջերը կնշվեն վերևում - Գ.Մ.:

հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի, և մենք հաղթություն տանենք»:⁶

Այս պատգամը տարբեր ձևերով Ղ.Ալիշանը հղում է հայ երիտասարդներին: Հենց ապագա սերունդներին ճիշտ դաստիարակելու ջանքերը դարձել են նրա ժողովածուի ներշնչանքը: Իրողություն, որ հատուկ գնահատանքով նշում է մեր ազգի ապագային ողջ կյանքով նվիրված մեկ այլ խիզախ գրող՝ Միքայել Նալբանյանը: Հայ գրականության քննադատական մտքի նախասկիզբ դարձած «Կրիտիկա Մոս և Վարդիթերի» աշխատության մեջ Մ.Նալբանյանը Ալիշանի մասին նկատում է. «Չենք մոռացած Նահապետ ստորագրությամբ Հ.Ղևոնդ Ալիշանյանց արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթվածքը՝ «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» և մյուս բոլոր աշխարհաբար ոտանավորքը, բայց այստեղ չհիշեցինք, որովհետև արձակ բանաստեղծության վրա էր մեր խոսքը, ապա թե ոչ, չափաբերական քերթվածոց մեջ, արժանավոր վարդապետը ախոյան չունի, եթե մենք լռենք, Ավարայրի բլբուլը կխոսի»:

...«Կանչե՛ պլպուլիկ, կանչե՛ հոգեձայն. արդյոք զուխտ մահուն սուրբ հիշե՛ Վարդան»...⁷

⁶ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 43:

«Երգք Նահապետին» ժողովածուն բացվում է «Հայոց աշխարհիկ» քերթվածով, որն, անշուշտ, ունի և՛ ճանաչողական, և՛ դաստիարակչական արժեք: Թեպետ Նահապետը չի եղել պատմական Հայաստանում, սակայն նա Հայոց աշխարհը ներկայացնում է իբրև ականատես: Եվ որպես հեքիաթասաց մի ծերունի, որը պատմում է երազային աշխարհների մասին, նա խնդրում է հայ մանուկներին շրջապատել իրեն ու լսել, թե ինչ պետք է նրանք իմանան Հայոց աշխարհի մասին: Մրատես արծվի նման Ավագ Մայաց կատարից նա դիտարկում է ողջ Հայաստանը, տեսնում նրա լեռներն ու բլուրները, բյուր-բյուր վտակները, հազարավոր ձորերն ու դաշտերը, ծաղիկներն ու թռչուններին: Հայրենիքն ամենակարևորն է մարդու կյանքում.

Հայրենյաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ՝ քաղցր է հայրենյաց փուշ: (Էջ 19)

Բանաստեղծը կրկնում է այն ժողովրդական
իմաստությունը, ըստ որի՝

Ծառն արմատով ծառ, տունն հիմամբն է տուն: (Էջ 19)

⁷ Մ.Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.4, Երևան, 1983, էջ 170:

Նահապետը համոզված է, որ Հայոց հողից են արարվել առաջին մարդիկ՝ Ադամն ու Եվան, և հենց իր հայրենիքում է եղել աստվածային դրախտը, ու հայերը ծեր Նոյի հարազատ զավակներն են: Հենվելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վրա՝ Նահապետը հիշատակում է Հայկի ու Բելի կոնիվը, թվարկում հայոց հզոր գահակալներին ու զորապետերին՝ Տիգրանին, Տրդատին, Վարդան ու Վահան Մամիկոնյաններին, Աշոտ ու Սմբատ Բագրատունիներին: Նա նշում է, որ հայոց Աբգար թագավորը նամակագրության մեջ է եղել Հիսուս Քրիստոսի հետ, որ Հայաստանում են գտնվում Հիսուսի կողաբաց գեղարդը և քրիստոնեական եկեղեցու հետ կապված այլ նշխարներ ու մասունքներ:⁸ Հայաստանում կառուցվել են բազում տաճարներ ու եկեղեցիներ, մեր երկրի երիտասարդները կրթվել են հին աշխարհի նշանավոր կրթարաններում, թարգմանել այլ լեզուներից բազում գրքեր, շարադրել են նաև մեծաքանակ մատյաններ.

⁸ Աբգարը Հիսուսին գրում է. «Լսել եմ քո մասին և այն բժշկությունների մասին, որ կատարվում են քո ձեռքով առանց դեղերի և արմատների, որովհետև, ինչպես ասում են, դու կույրերին տեսնել ես տալիս, կաղերին քայլեցնում ես, բորոտներին մաքրում ես, չար ոգիները և դևերը հանում ես և առհասարակ երկարատև հիվանդություններով չարչարվողներին բժշկում ես, նաև մեռածներին կենդանացնում ես» (Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 175):

Շատ գրքերումք գրքեր մեր հարքն ու մագղաթ
Զեռտ ցորեն դիզել, քանց բարձր Արարատ: (Էջ 22)

Հայաստանի պատմական ընթացքը խաթարել են չար թշնամիները, որոնք քանդել են մեր եկեղեցիները, վանքերը, գրատները, պալատները, սրածել ու գերել հայերին: Այս արհավիրքները, ըստ Նահապետի, չեն կրկնվի, եթե հայերն ամուր կապվեն իրենց հայրենիքին, հիշեն Արարատ լեռան անասանությունը, միասնական լինեն ու թեև ուշացած՝ Հայոց աշխարհիկը վերստին կտեսնի իր ազատ հայրենիքը: Սա, անշուշտ, տպավորիչ հայրենասիրական դաս է, որ հայ ժողովրդի նոր սերնդին ուսուցանում է մանկավարժ Ղևոնդ Ալիշանը:

Նահապետի «Պլպուլն Ավարայրի» ծավալուն քերթվածի նյութը քաղված է Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» դյուցազնական երկից: Ավարայրի սոխակը Եղիշե պատմիչն է, որն ականատեսն ու մասնակիցն է Ավարայրի հերոսամարտի.

Պլպուլ՝ և քեզ համար մեր հարքն ասացին,
Թե՛ չէ հավ՝ պլպուլ մեր Ավարայրին,
Եղիշյա հոգյակն է քաղցրագրուցիկ: (Էջ 25)

Ավարայրի ճակատամարտի նկարագիրը Եղիշեի պատմության գեղարվեստական ընտիր հատվածներից է և պատահական չէ, որ այն ներշնչել է և՛ Ալիշանին, և՛ հետագայի գրողներին ու արվեստագետներին: «Պլպուլն Ավարայրի» քերթվածը թե՛ ավագ դպրոցի ուսուցչի և թե՛ հատկապես բանասիրական ու հումանիտար բաժինների հայ գրականության դասախոսներին լայն հնավորություն է ընձեռում ապահովելու միջառարկայական և ներառարկայական կապերը: Նրա ուսուցման միջոցով հնարավոր է ամրապնդել աշակերտի և ուսանողի գիտելիքները հայ ժողովրդի պատմությունից, հայոց լեզվից, ինչպես նաև հիշեցնել, թե ինչ ազդեցություն է ունեցել հայ դասական գրողներ Ռաֆայել Պատկանյանի, Միքայել Նալբանդյանի ու Դերենիկ Դեմիրճյանի վրա: Եղիշեն այսպես է ներկայացնում Ավարայրի ճակատամարտի թոհ ու բոհը. «Նրա բազմաթիվ սուսերների շողալուց և բազմախտոն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից: Որովհետև ո՞վ կարող է պատմել ահավոր ձայների մեծ իրարանցումը, թե ինչպես վահանավորների թնդյունն ու աղեղների լարերի ձայթունը առհասարակ խլացնում էին բոլորի ականջները»:⁹ Նույն ճակատամարտն ըստ Նահապետի.

⁹ Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե.Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 237:

Մեկ շարժումն ահեղ, մեկ ահեղ հոսան,
ԶԱրտազն է բըռներ թնդմամբ կայծական.
Ոչ ի պատերազմըն թըշնամության,
Այլ գտարերքն ամեն կարծես ավրել գան.
Տրոփե ոտընվորն ու դաշտըն թընդա,
Հեծելըն գետին մոռցել՝ յօդ գընա.
Օդն առանց հովու զենքերով ծըփա: (էջ 29)

Նահապետը, նկարագրելով Ավարայրի դաշտում Վարդանանց սխրանքը, հիշեցնում է, որ Եղիշեն Ավարայրի հերոսամարտը նկարագրել է, որպեսզի դարերի մեջ հավերժանա Վարդանի անունը.

Կանչե՛, պըլպուլիկ, կանչե՛ հոգեձայն,
Որ յերկնուց ի վայր, հայի և Վարդան,
Հիշե՛ զՀայաստան՝ տուն յուր սիրական,
Հայաստան հիշե՛ գյուր Կարմիր Վարդան: (էջ 43)

Նահապետի այս քերթվածը վերլուծելիս էլեկտրոնային գրատախտակի վրա անհրաժեշտ է ցուցադրել Գրիգոր Խանջյանի «Վարդանանք» նկարը և բացահայտել դրա սերտ կապը Եղիշեի պատմության հետ: Նկարի վերևի մասում նկարիչը գրել է Եղիշեի հետևյալ թևավոր խոսքը. «Մահ ոչ

իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»։ Նկարում Աստծու հրեշտակը լուսապսակ է դնում ձիու վրա նստած Վարդան Մամիկոնյանի գլխին։ Վարդանին զինակից և Ավարայրում նահատակված հայ նախարարների դեմքերը մեր ժողովրդին նվիրված մեծ հայրենասերների իրական դեմքերն են՝ Եղիշե, Չարենց, Պարոյր Սևակ, 1915-ի ցեղասպանության զոհ գնացած հայ մտավորականներ, հայ գեղջկուհին իր սպանված որդուն գրկած, հայ կանայք՝ վահանով ու սրով։ Քանի որ Եղիշեն գրել է, որ ծաղկալից դաշտը ողողվեց ընկած մարտիկների արյունով, ապա նկարի ներքևում տեսնում ենք մանուշակներ։ Ուսանողներին և աշակերտներին անհրաժեշտ է տանել արվեստի Գաֆեսյան կենտրոն, որտեղ առանձին սրահում ցուցադրվում է Գրիգոր Խանջյանի գլուխգործոցը։ «Վարդանանք» կոթողային նկարի բնութագիրն ամենից դիպուկ ձևակերպել է նշանավոր միջնադարագետ Ասատուր Մնացականյանը «Վարդանանք» նկարին իր առանձին դրվագներով պատկերող ալբոմի առաջաբանում. «Գրիգոր Խանջյանն ամբողջ խորք ու լայնքով է ընկալել ու արտահայտել Վարդանանց գոյամարտի կենսափիլիսոփայությունը. այն իր զուտ ազգային կերտվածքով հնչում է իբրև համամարդկային ազատասիրության համանվագ ու հիմն, ասք ու առասպել»։¹⁰

¹⁰ Տե՛ս Գ.Խանջյան, Վարդանանք, Երևան, 1982, առաջաբան։

Գրիգոր Խանջյանի նկարը իսկական հզոր ու հերոսական սիմֆոնիա է, որի ձայնը լսվելու է դարերում: Դ.Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպն էլ ընթերցողին հաղորդ է դարձնում այդ դյուցազնական հերոսացման հզոր ձայնին: Դ.Դեմիրճյանի «Վարդանանքը» ավարտվում է հետևյալ եզրափակիչ խոսքով. «Բաց դաշտավայրի վճիտ լռության մեջ երբեմն կլսես մի կոկորդային մեղեդիի մեղմաձայն գեղգեղանք: Դա մի վանական է թերևս, կամ այլ անցորդ, կամ մի խումբ մարդիկ: Այս մեղեդին երգվում է այն պահին, երբ ոտը դնում են Ավարայրի դաշտավայրը: Դարերի հին երգն է դա Վարդանանց նվիրված: Ահա այդ հավերժական երգի մեջ են արդեն ճշմարտորեն ամփոփված Վարդանը և Վարդանանք»:¹¹

Չպետք է մոռանալ, որ Նահապետի «Պլպուլն Ավարայրի» քերթվածին հետևեցին այլ գրողների նոր գործեր, որոնք առավել հրապարակախոսական բնույթի էին: Դրանցից առաջինը «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» վիպասանությունն է՝ տպագրված 1861-ին.

Հիմի է՞լ լըռենք եղբայրք, հիմի է՛լ,
Երբ մեր թըշնամին իր սուրն է դըրել,
Իր օրհասական սուրը մեր կըրծքին,

¹¹ Դ.Դեմիրճյան, Վարդանանք, հ.II, Երևան, 2012, էջ 509:

Ականջ չի դրնում մեր լաց ու կոծին.
Ասացե՛ք, եղբարք հայեր, ի՞նչ անենք,-
Հիմի է՛լ լըռենք:¹²

Ի պատասխան Ռ.Պատկանյանի այս հարցման՝ 1862-ին Միքայել Նալբանդյանը որպես պարոդիա պատասխանում է.

Հիմի է՛լ խոսենք, երբ քաջն Վարդան,
Վաթսուն հազարից հազարով մնաց,
Մինչ մնացել էր պարսից լոկ մատյան
Գունդը մեր վաթսուն հազարի դիմաց,
Երբ մեր վատությամբ ողջ կորուսել ենք.
Հիմի է՛լ խոսենք:¹³

1848 թվականին է գրել Ալիշանը «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» պատմական բանաստեղծությունը, որի խորագիրը վերցրել է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերջաբանից. «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանայդ, խորհրդականդ և ուսուցանողդ,

¹² Ռ.Պատկանյան, Երկեր, Երևան, 1980, էջ 70:

¹³ Մ.Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ.1, Երևան, 1979, էջ 126:

վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»:¹⁴

Ալիշանի այս քերթվածը, իրավամբ, Խորենացու Ողբի շարունակությունն է: Նահապետի ապրած օրերին էլ Հայաստանը չունեք պետականություն. հայ ժողովուրդն այլևս առաջնորդ չունեք, ու ձեր Նահապետի երազանքն է տեսնել վերածնված Հայաստանը: Ալիշանի այս բանաստեղծությունը լիովին պահպանել է միջնադարյան տաղերգուների պատկերներն ու լեզվական ձևակերպումները:

Հուզիչ է նաև Ալիշանի «Հրազդան» քերթվածը, որ հեղինակը իր տխուր խոհերի խորհրդածությունների մասին պատմում է Հրազդան գետին: Գուցե այս բանաստեղծության ազդեցությամբ Ռափայել Պատկանյանը գրեց «Արաքսի արտասուքը». երկու բանաստեղծություններում էլ հայրենիքը մարմնավորվում է գետի մեջ: Մի դեպքում մայր Արաքսն է, մյուսում՝ Սևանա լճից սկիզբ առնող Հրազդանը: Սա նաև պանդխտության երգ է: Օտարության մեջ մարդը կարոտում է ոչ միայն իր հարազատներին, այլև հայրենի բնությանը.

Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՛ն, ջրիկդ իմ անուշիկ,

¹⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 447:

Ահա թողել զհողն օտարի,
Բաբկենս հասել եմ պանդըխտիկ.
Ա՛յ Հրագդան, ա՛յ ջուրք հայրենիք,
Ա՛յ ավունք, է՞ր կու լայք լըռիկ: (էջ 50)

Մասիսը հատուկ տեղ է զբաղեցնում Ղևոնդ Ալիշանի քնարերգության մեջ: Դա երևում է «Մասիսու սարերն» չափածո քերթվածում: Երկու Մասիսներն այս գրական ստեղծագործության մեջ անձնավորված են: Նրանք խոսում են բարձրաձայն և մտքեր փոխանակում: Ավագ Մասիսը իրեն համարում է աշխարհի ամենաազնիվ լեռը ու բացատրում իրեն այդպես կոչելու հիմնավորվածությունը: Առաջինը իրեն տեսել է մարդկության նախահայրը՝ Ադամը, հետո այդ լեռան վրա է հանգրվանել Նոյի տապանը: Հայկը հաղթանակով վերադարձել է Մասիս, իսկ Տիգրանը գերել է Աժդահակին Մասիսի հայացքի ներքո: Արտավազը նրա անդնդախոր քարայրից սպառնում է ավերել աշխարհը: Տրդատ Մեծը Էջմիածնի հիմքերը գցեց Մասիսի ստորոտում: Ավագ Մասիսը փաստում է, որ ինքը հայ ժողովրդի խորհրդանիշն է.

Ես միշտ եմ պարծանք Հայոցըս մեծաց,
Նոքա այլ պարծանք են ինձ անմոռաց... (էջ 52)

Փոքր Մասիսը հիշեցնում է Ավագ Մասիսին, թե ինչ դժբախտություններ են եկել նրա սիրելի Հայոց աշխարհի գլխին, և ինքը երազանքով սպասում է, թե երբ են հայերի համար գալու երջանիկ օրեր:

Մեծ Մասիսը համոզված է, որ իր գոյությամբ ներշնչելու է հայոց քաջերին վերականգնելու Հայոց փառքը, միայն թե նրանք միմյանց նկատմամբ բարությանբ պիտի լցվեն և անհոգ չլինեն:

Բայց միայն սիրով, հանդարտ ու խելոք
Զանի դրնեն բարվույն ու չըլնին անհոգ: (Էջ 57)

Երկու Մասիսների երկխոսության եզրահանգումը պատկանում է Նահապետին, որը թվում է, թե ներշնչված գողթան երգերով՝ զծուխ ծխանին¹⁵ փոխել է ծրխիկ ծիրանի արտահայտությամբ.

Շարժի՛ր, հա շարժի՛ր, Ավագըդ Մասիս,
Արձան պարձանաց Հայոց աշխարհիս.
Շընչե՛, հա՛ շընչե ծրխիկ ծիրանի,
Որ քո մանկըտյացըդ նըշան ըլնի... (Էջ 57)

¹⁵ Ո՛տայր ինձ զծուխ ծխանի

Եւ գառաւօտն Նաւասարդի... (տե՛ս Գրիգոր Մագիստրոս, Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 87):

Ղևոնդ Ալիշանի «Աշոտ Երկաթ ի ծովուն Սևանա»¹⁶ քերթվածը հրաշալի միջոց է Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» պատմավեպի նյութն առավել տպավորիչ դարձնելու համար: Հայոց պատմությունից հայտնի է, որ Աշոտ Երկաթը, վերականգնելով հոր գահը, արաբներից ու բյուզանդացիներից ճանաչվեց շահնշահ՝ արքայից արքա: Աշոտը կարողանում է ընդդիմանալ արաբական հարձակումներին և պահպանել Բագրատունիների անկախ պետականությունը: Ալիշանը նրան փառաբանում է որպես ազգային հերոսի և ոգևորությամբ գրում է.

¹⁶ Աշոտ Երկաթը Հայոց Բագրատունիների գահը գլխավորել է 914-928թթ.: Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» ծանոթագրություններում Գ.Թոսունյանը Աշոտ Երկաթի մասին գրում է. «Հոր նահատակվելուց հետո Աշոտ Երկաթը վրիժառությանբ լցված իր եղբայր Աբասի հետ միասին անընդհատ հարձակումներ է գործում արաբների վրա և մեծ հաջողությունների հասնում: Նա ազատագրում է Բագրևանդի, Շիրակի, Գուգարքի, Տաշիրի գավառները, Վրաստանի մայրաքաղաք Տփլիսը... Այնուհետև Աշոտ Երկաթը տեղափոխվում է Սևանա կղզի և այնտեղից շարունակում է պայքարը Յուսուֆ ոստիկանի Բշըր զորապետի դեմ և Սևանի ճակատամարտում նրան պարտության է մատնում: Հաղթանակ տանելով ներքին ու արտաքին թշնամիների դեմ՝ Աշոտ Երկաթը կարողանում է վերականգնել Բագրատունյաց թագավորության սահմանները»: (Տե՛ս Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները, Գ.Բ.Թոսունյանի, Երևան, 1996, էջ 370):

Հրամե՛, թագվոր, նետերդ բացին քեզ ճամբահ,
Ուր որ դիմես՝ դու ես Հայոց Շահընշահ.
Խաղա՛, վազե՛ ի դաշտ ու ի ձոր համարձակ,
Բըշըրըն փշրած կորավ, գընաց անդարձակ:
Երբ որ մըտար ի ծովս աստ՝
Էիբ Աշոտ լուկ երկաթ,
Հիմ՛ որ ելնես՝ կուռ պողվատ: (էջ 72-73)

Ինչպես երևում է Ալիշանը միշտ երագում էր տեսնել Հայաստանը և այն վերականգնում էր իր երևակայության մեջ՝ անցյալով ու ներկայով: Բանաստեղծն այդ խոհերն արտահայտել է «Հայ հայրենիք» քերթվածում.

Առավոտուն դրոճակն է բաց.
Ե՛լ, ե՛լ, արևդ Հայաստանյայց:
Ահա ելնեն, որք ՚ին ի քուն,
Ու Նահապետն այլ որ անքուն՝
Յաստուածագարդն ելնե հանդես: (էջ 81)

Քերթվածի մեջ Նահապետը Աստվածաշնչի Ծննդոց գրքի դեմքերին ու նրանց հետ կապված դրվագները տեղադրում է Հայաստանում և քերթվածի վերջում իր երևակայական այցելությունը Հայոց աշխարհ եզրափակում է հետևյալ ձևով.

Ահա տեսանք գերկինք պայծառ.
Շըրթներն՝ երկրիս Հայոց հավսար.
Հավերն ի հունչ, հովերն ի շունչ
Օդըն վառվառ, ջուրն ի մըրմունջ.
Լուսիկս է ճոխ, արևս անուշ,
Սարերն ի վար իջնումք մեք ուշ:
Ահա ի գունտն երթայր արև,
Նահապետին մենք տանք բարև: (էջ 83)

Որպես մեծ հայրենասեր՝ Ալիշանը շարունակ մտածում էր իր գիտական գործունեությամբ ու գրական երկերով հայ ժողովրդի բնատուր ու վաղնջական հանճարին նոր թռիչք տալ: Հենց այդ նպատակին է նվիրված «Հայ հանճար» բանաստեղծությունը:

Հետաքրքիր է, որ Ալիշանը համոզված է՝ հայերը ուրիշ ազգերին փոխանցել են իրենց հանճարը և հելլենական փիլիսոփայության մեջ ունեցել են Դավիթ Անհաղթին: Մակայն սև դարեր են անցել հայերի վրայով և փորձել մեռցնել նրա հանճարը: Հայ հանճարը, սակայն, չի մեռել, այլ ընդամենը քուն է մտել, և այն անպայման նորից արթնանալու է և փայլելու.

Կերդնու Նահապետ, կանչե ձեզ, Հայե՛ր,
Հանճարն է մեզ կյանք, ըզնա վառեցեք,

Մեծ, պըզտիկ՝ այտոր սիրով վառվեցեք...
Ծագե՛, հայ հանճար, փայլե՛ բյուր բոցեր,
Իմանան ազգեր՝
Թե Հայք չեն անցեր: (էջ 86)

Հայրենասիրական պոեզիայի ուշագրավ նմուշ է «Վեր-
ջին երգ վիրավոր բամբռահարին»¹⁷ բանաստեղծությունը:
Հանուն հայրենիքի բամբռահարն իր երաժշտական գործիքը
փոխարինում է նիզակով և հերոսաբար զոհվում կռվում.

Ձենե՛. «Փառեն բամբռահար՝
Հայոց քաջաց հավասար
Ընկավ ծաղիկ հողմավար»: (էջ 88)

Փառեն բամբռահարը մեռնում է, սակայն հայրենի
բամբռոյի երգը մնում է, որովհետև հայրենիքն ազատ է. սա է
բանաստեղծության հիմնական գաղափարը:

Մեր հողվածում նախքան Ղ. Ալիշանի «Մանկունք»
շարքի մանկավարժական պատգամներին անդրադառնալը,

¹⁷ Բամբռո կամ փանդիոն – Լարային նվագարան երեք լարով: Չանա-
զան ազգերի մեջ կրել է զանազան փոփոխություններ: Ոմանք նույնաց-
նում են բամբռոյի հետ, ոմանք զանազանում: (տե՛ս Ստ.Մալխասյանց,
Հայերեն բացատրական բառարան, հ.4, Զ-Ֆ, Երևան, 2010, էջ 486):

ավագ դպրոցի հայ գրականության ուսուցիչների համար ներկայացնենք ինովացիոն երկու դասատեսակ:

Ինովացիոն դասի համար օգտագործենք երկու մեթոդ՝ ա) քառաբաժանում, բ) կմախք (դասի ամփոփման համար):

ՔԱՌԱԲԱԺԱՆՈՒՄ

Այս մեթոդի կիրառման համար ընտրում ենք ՔԱՌԱԲԱԺԱՆՈՒՄ ձևը, որը կիրառում ենք «Հրագրան» բանաստեղծության համար:

<p>Տեսողական պատկերներ</p> <p>Տեսնում ենք Հրագրան գետի ձորը Երևանում: Չորս բոլորը այգիներ են: Բնության կանաչը և մաքուր օդը, գետի խշշոցը ավելի ցանկալի են դարձնում բնության տեսարանը:</p>	<p>Զգացում</p> <p>Մրտի թրթիռ, թռչունների դայլալ, մայրական ջերմ համբույր և մոր կանչող ձայն:</p>
<p>Զուգորդում</p> <p>(համեմատում այլ ստեղծագործության հետ) Կարելի է համեմատել Ռափայել Պատկանյանի «Արաքսի արտասուքը» բանաստեղծության հետ: Երկու դեպքում էլ հայրենիքի խորհրդանիշը գետերն են:</p>	<p>Նոր վերնագիր</p> <p>«Վերադարձ հայրենիք»</p>

Մի դեպքում Արաքսը, մյուսում՝ Հրազդանը:	
---	--

Երկրորդ մեթոդը անցած դասի ամփոփումն է ԿՄԱԽՔ հարցաշարով:

ԿՄԱԽՔ

Այս մեթոդի համար ընտրում ենք Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» հիանալի քերթվածը:

1. Մեկ բառ, որն արտահայտում է բնագրի իմաստը:

Այդ մեկ բառը կարելի է փոխել մեկ բառակապակցությամբ՝ Ավարայրի ճակատամարտ:

2. Մեկ արտահայտություն, որ կարևոր է բնագրի համար:

Հիշե զՀայաստան՝ տուն յուր սիրական,

Հայաստան հիշե գյուր Կարմիր Վարդան:

3. Մեկ նախադասություն, որը գլխավոր է բնագրի համար:

«Ո՛հ, ես ի ճակտիդ վրա երդնում, Վարդա՛ն,

Կանչեց Եղիշե...

Թե բյուր դարք անցնին՝ դու մընաս Վարդա՛ն»:

4. Լոգո, էական մի բան, սիմվոլ, խորհրդանիշ:

Միաբան ընկերք ի հայրենի տան:

5. Ի՞նչ գույն ունի բնագիրը:

Բոտոր կարմիր:

6. Ի՞նչ մեղեդի էս լսում բնագիրը կարդալիս:

Լսում եմ Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետի հերոսական ռիթմերը:

7. Ավարտի՛ր միտքը.

Ամենալավն այս դասի մեջ այն էր, որ ես լիովին հասկացա Ավարայրի հերոսամարտի ազգապահպան իմաստը:

Ղևոնդ Ալիշանը բանաստեղծություններ է գրել հատուկ մանուկների համար: Դրանք լույս են տեսել 1881-ին Վենետիկում «Նուագք» վերնագրով: Գիրքն ունի նաև «Յորդորակք» հատվածը՝ «Առ մանկունս նորամուտս յաշխարհ» վերնագրով:

Գրքի բնաբանն է. «Որդեակ, ի մանկութենէ քումմէ խնդրեա զխրատ եւ մինչեւ ցծերութիւն գտցես զիմաստութիւն»:

Միրաք, Զ, ԺԸ

*

* * *

Ղ. Ալիշանի մանուկներին ուղղված բանաստեղծություններն ունեն ճանաչողական արժեք: Դրանց նպատակն է մանկանը ծանոթացնել տարվա ամիսներին ու եղանակներին:

րին: Բանաստեղծություններում առկա է Գրիգորիկ մանկան կերպարը, որին խանդաղատանքով դիմում է բանաստեղծը: Գեղեցիկ քերթվածներ են սրանք, որոնցում ամեն ամիս բնութագրվում է իր հատկանիշներով, նաև մարդու վրա ներգործելու ուժով ու նրա մեջ առաջացնող տրամադրություններով: Հունվար ամիսը տարվա սկիզբն է, և Գրիգորիկ պիտի տեսի, որ չկան ոչ ծիծառները և ոչ էլ ծաղիկները. ամեն ինչ ցուրտ պատանքի մեջ է: Հետաքրքիր է, որ միջնադարի տաղասացների նման բանաստեղծը բնության ընթացքի փոփոխությունների մեջ տեսնում է կարևոր մի սփոփանք՝ մարդու վերջին հավերժական կյանքի կայանում գտնվելու երազանքը.

Ի յաւիտեանսն հանէ տարի.

Զամէն զգացուած եւ կիրք բարի.

Եւ ես երթամ ի վայրն անանց

Ուր կառուցաւ տունն յաւիտեանց:¹⁸

Փետրվարը տարվա երկրորդ ամիսն է: Ամեն ինչ ցուրտ սավանի տակ է, և բնությունը քուն է մտել վերստին արթնանալու համար.

¹⁸ Ղ. Ալիշան, Նուագք, Վենետիկ, 1881, էջ 128: Այսուհետ այս գրքից մեջբերումների էջերը կնշվեն վերևում- Գ.Մ.:

Մի այդպես, ո՛վ Գրիգորիկ,
Բնութիւն յանդորր արդ նընջէ,
Ակն արարչին հաշտ քաղցրիկ
Եւ յայդ դիմաց հեռու չէ: (Էջ 129)

Մարտ ամիսը գարնան առաջին ամիսն է: Մարդկանց սրտերը խայտում են ուրախ, որովհետև բնության ու կյանքի վերածնունդն է: Գարունն արթնացնում է բնությունը, որը կանաչ պատմուճան է հագնում և ամենակարևորը՝

Եւ տունկք կապեն ծաղկանց թագ: (Էջ 130)

Ապրիլ ամիսը շատ գունագեղ է, բնության իսկական տոնահանդես.

Բովանդակ բընութեան
Արկանեմ ես բեհեզ
Հրճուանաց պատմուճան: (Էջ 131)

Բացառիկ բնաստեղծական գյուտ պատկերներով Ալիշանը մանուկ Գրիգորին ներկայացնում է ապրիլ ամսվա պերճաշուք տեսքը:

Մայիսը՝ գարնան վերջին ամիսը, լի է ճնճդուկների, սարյակի ու սոխակի դայլայլով, ինչպես նաև այդ ամսին բացվող ծաղիկների բույրով.

Վարդ և յասմիկ, մանիշակ
Ծավալեցան բոյր ի բոյր: (Էջ 133)

Մայիսին նվիրված քերթվածի վերջում հոգևոր հայրը զգացնել է տալիս քրիստոնեական կրոնին նվիրված լինելը և պատրաստ է մայիս ամսվա շքեղ ու բուրավետ ծաղիկներն ընծայաբերել Աստվածամորը.

Ապա գիտեմ, գիտեմ ում
Չօնել զծաղկունս ցողալի,
Ի տաճարի անդ սըրբում.
Կայ ինձ երկնից տիրուհի...
Քեզ աւասիկ Մարիամ
Սըփռեմ զծաղկունս ընդ ոտիք.
Եւ ընդ նոսին զանթառամ
Հեղում ըզսիրտ ջերմն ուխտիք: (Էջ 134)

Հունիս ամիսն արդեն առաջին հունձքի և բերքահավաքի ամիսն է: Գեղեցիկ է կեռասի ծառի նկարագիրը, որը ծանրաբեռ է բրգաձև կեռասի փնջերով: Կեռասից բացի ծանրագլուխ ծիրաններն են փայլում ճյուղերին: Անուշ բուրմունքով դեպի իրեն է կանչում թփերի մեջ թաքնված ելակը, որին պետք է քաղել հատուկ զգուշությամբ:

Հուլիս ամիսը մարդկանց հանկարծակի է բերում իր հողմերով ու անսպասելի կայծակներով: Օգոստոսը ամռան վերջին ամիսն է, և այն արդեն նախապատրաստում է աշնան գալը: Սեպտեմբերը խաղողաքաղի ժամանակն է, և այգեգործը խորին զգվանքով քաղում է ծանր ողկույզները:

Այգեգործի գրգուելով գորթըն պարարտ: (Էջ 140)

Հոկտեմբեր ամիսը նախապատրաստում է աշնան վերջին ամսվա գալուստը: Նոյեմբերին բնությունն անշքանում է, սկսում տերևաթափը, ու թվում է, թե ծառերը նմանվում են անմայր մանուկներին, որոնք լալիս են: Խստաշունչ նոյեմբերի նկատմամբ անփույթ է միայն մշակը, որն իր լույս հատիկն արդեն պահ է տվել սուրբ հողին:

Դեկտեմբեր ամիսն ամփոփում է այն ամենը, ինչ որ իր գործով կատարել է մարդը ողջ տարվա ընթացքում, նաև մարդուն խորհել է տալիս իր կատարած գործերի արդյունքի մասին:

Ո՛հ, յո՛րն արդեօք, Գրիգորի՛կ
Զայս ամ յըղեաց քո սրտիկ: (Էջ 143)

Ալիշանն առանձին քերթվածներ է նվիրել նաև տարվա չորս եղանակներին: Գարունը, ամառը, աշունը և

ձմեռը ներկայանում են իրենց յուրահատուկ բնութագրերով: Հետաքրքիր է, որ բանաստեղծը չի մոռանում մանուկներին հիշեցնել, թե նրանք շարունակ Աստծուն ունեն իրենց սրտերում, որպեսզի վայելեն գարնան ողջ հմայքը.

Այլ քեզ առաջնորդ
Թե ունիս զԱստուած,
Լիջիր անկասկած
Գարնան ժառանգորդ: (էջ 145)

Շատ գեղեցիկ է մրգառատ աշնան պատկերը.

Զամառն եւ զգարուն
Արկեալ զառաջեալ՝
Աշուն ճոխ մրգաւ
Գայ բիրաբեղուն: (էջ 149)

Ուսուցիչներն ու դասախոսները սովորողների համար կատարում են զուգադրումներ: Համեմատվում են, օրինակ, Ղ. Ալիշանի «Աշուն» և Հովհ. Թումանյանի, Տերյանի նույնանուն ոտանավորները: Ալիշանի աշնան տխուր պատկերները հիշեցնում են կյանքի անցողիկությունը.

Ահա՛ նդ հողմավար
Տըմոյն տերեւոց

Եւ վարսիցըն քոց
Կապտի գեղ դալար: (Էջ 149)

Հովհ. Թումանյանի «Աշուն» ոտանավորը միայն բնանկարի ու աշնան իրական զգացման տպավորիչ պատկեր է: Այն իսկական բնապատկեր է, որը միանգամից տպվում է հիշողության մեջ.

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեզի հետ
Փըչում է քամին,
Քշում է տանում
Տերևը դեղին:
Տըխուր հանդերից
Մարդ ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տուն ու բուն:¹⁹

Ղ.Ալիշանի «Առ մանկունս» շարքը՝ ուղղված երեխաներին, կարելի է օգտագործել ավագ դպրոցի կրոնի դասերին:

¹⁹ Հովհ. Թումանյան, Երկեր, Հ.II, Երևան, 1958, էջ 221:

Այն ինչ-որ առումով աստվածաբանական ուղղվածություն ունի: Թվում է, թե այն գրված է կրոնական թեքում ունեցող դպրոցի սաների համար և նպատակ ունի մանկավարժական հատուկ ձևերով բարձրացող սերնդի մեջ պատվաստել քրիստոնեական բարեպաշտությունը: Պատահական չէ, որ քերթվածներից մեկը Ալիշանը խորագրել է «Օրհնեցէք մանկունք զՏէր ի հովիտս գարնայնի»: Քերթվածում կյանքի գեղագիտական ընկալումը միաձուլվում է Աստծու նկատմամբ ունեցած անանց սիրո հետ: Բանաստեղծությունը շնչում է կենսասիրությամբ և իրական կյանքի գեղեցկությունն զգալու պահանջով.

Հայեցարուք ի թիթեռնիկ
Թեթեւաթռիչ ծաղկէ ծաղիկ,
Որոց նըման և ինքըն պերճ
Ծաղկաթեւէ յայերաց մէջ
Եւ օրհնեցէք մանկունք ըզՏեր: (Էջ 114)

Մանուկներին նվիրված այս շարքը հայ միջնադարյան պաշտոնական գրականության ավանդույթով մանուկների մեջ իրական կյանքի պատկերներով աստվածային սեր է առաջացնում Հիսուս Քրիստոսի ու նրա մոր՝ Մարիամ Աստվածածնի հանդեպ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան -----	3
2. Предисловие -----	5
3. Foreword -----	7
4. Ա.Դոլուխանյան ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳԼՈՒԱՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ -----	9
5. Լ.Հովսեփյան ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԱՅՈՒՑԱԿԸ -----	40
6. Պ.Սահակյան Ղ. ԱԼԻՇԱՆԻ «ՄԻՍԱԿԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ -----	68
7. Ռ.Դոլուխանյան ՀՌՈՍԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԱՅՍՐ ՄԱՐԿՈՍ ԱՎՐԵԼԻՈՍԸ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ -----	92
8. Գ.Մարդյան ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ -----	103